

Հորիզոն

Ապրիլ 2025 / APRIL 2025 / AVRIL 2025

horiZon



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ
110th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
110ème ANNIVERSAIRE DU GÉNOCIDE ARMÉNIEN

Grocery Store | Bakery | Butchery | Café | Catering



NOW OPEN

Mississauga
720 Bristol Road West,
ON, L5R 4A5
(905) 502 9292



← Scan Here To Check Out
Our Weekly Flyer At
www.arzfinefoods.com



Scarborough
1909 Lawrence Ave East
ON, M1R 2Y6
(416) 755-5084



← Scan Here for Our
Catering Book At
www.arzfinefoods.com

For The Latest News And Deals Follow Us At:

www.arzfinefoods.com

@arzfinefoods



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ ժողովուրդի պահանջատիրութեան երթը պէտք է անվկանդ շարունակուի

«Մեր փրկութեան միակ բանալին, բոլորանուէր մեր մասնակցութիւնն է ազգային-ֆաղափական մեր կեանքին, եւ Հայ Դատի հետապնդման գծով, ազգային-ազատագրական մեր անհաւասար պայքարին, անհատական եւ հաւաքական մեր բոլոր միջոցներով»։ Սարգիս Զէյթեան

Հայոց Մեծ Եղեռնին նախորդող ամիսներուն ընթացքին կայացած երիտթուրքերու կառավարութեան նիստերէն մէկուն ընթացքին, Իթիֆհատի Կեդրոնական կոմիտէի անդամ եւ Հայ ժողովուրդը զանգուածային ջարդի ենթարկելու գլխաւոր գաղափարախօսներէն Նազըմ Պէյը կը յայտարարէր. «Անհրաժեշտ է ամբողջութեամբ կոտորել Հայ ազգը, մեր հողին վրայ ոչ մէկ ողջ մնացած հայու հետք ձգելով: Նոյնիսկ «Հայ» բառը պէտք է ջնջուի մեր յիշողութենէն: Պատերազմը լաւագոյն առիթն է իրագործելու այս ծրագիրը»...

Հայոց Յեղասպանութեան անմիջական հետեւանքը հանդիսացաւ Հայ ժողովուրդի ֆիզիքական բնաջնջումը, Արեւմտեան Հայաստանի հայաթափումը եւ պատմական իր բնօրրանի կորուստն ու բռնագրաւումը: Յաջորդող տասնամեակներուն, թրքական պետութեան իրերայաջորդ կառավարութիւնները շարունակած են ցեղասպանութեան յանցագործութեան յաջորդող հանգրուանը՝ պատմութեան նենգափոխումով, ցեղասպանութեան արարքը ուրանալով եւ Արեւմտահայաստանի մշակութային ժառանգութիւնը քանդելով ու հողին հաւասարեցնելով: Հայութեան համար պատմական անկիւնադարձային արար էր 2015 թուականին հրապարակուած «Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», որ Հայ անկախ պետականութեան եւ ցեղասպանութեան հետեւանք Սիւրբիւրի հայութեան պաշտօնական դիրքորոշումը ներկայացնող համահայկական հռչակագիր է:

Հռչակագրի 6-րդ յօդուածին մէջ յստակօրէն բնութագրուած են Հայոց պահանջատիրութեան հիմքերը, ուր յստակօրէն կը շեշտուի. «Հռչակագիրը արտայայտում է Հայաստանի եւ Հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց Յեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրաւական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային եւ համագլխային իրաւունքների եւ օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ»:

Հռչակագրի հրապարակման նախօրեակին, Հայոց Յեղասպանութեան հատուցումներու ուսումնասիրման խումբը, 2014 թուականի Սեպտեմբերին՝ «1915-1923 Հայոց Յեղասպանութեան հատուցման հարցի իրաւական, պատմական, քաղաքական եւ բարոյական կողմերուն առնչուող գիտական բարձր մակարդակով ու խորքային վերլուծութեամբ հատուցման թղթածրար մը պատրաստեց, որուն հիմնական բաղադրիչներն էին Հայոց Յեղասպանութեան պատճառած նիւթական կորուստներու համար հատուցումներու պահանջները եւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի իրաւայաջորդը հանգիստացող պետական միաւորման համար հողային հատուցումները:

Այստեղ ուշագրաւ է, որ Մեծ Եղեռնէն երկու տարի ետք, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմի կողմէ Սթոքհոլմի Ընկերվար Միջազգայնականի Համա-

գումարին (1917) կը ներկայացուէր յուշագիր մը, որուն բովանդակութեան մէջ առաջին անգամ ըլլալով կ'ուրուագծուէին յանցագործութեան հատուցման առնչուող պահանջները («Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար - ԺԲ. հատոր», էջ 272): Այսպէս, յուշագրին մէջ Ռոստոմի կողմէ արձանագրուած է. «Կը պահանջենք նաեւ որ՝ հատուցում պահանջուի թրքական կառավարութենէն՝ պատերազմի ընթացքին բնաջնջուած Հայ ընտանիքներուն՝ այն բոլոր նիւթական վնասներուն համար, զորս կարելի է արդարացնել մինչեւ իսկ ռազմավարական նկատումներով. հատուցում՝ այն բոլոր հարստութեանց՝ դրամ, անասուն, ապրանք, կարասի, որ խլուած են հայերէն պատերազմի եւ տարագրութեանց ընթացքին՝ պետական գանձին, քաղաքային եւ գինուորական պաշտօնեաներուն, Իթիֆհատ կոմիտէի անդամներուն, չեթապական վոհմակներուն, գինուորականներուն եւ մահմետական ամբոխին կողմէ»: Յեղաջնջման, ազգասպանութեան, տեղահանութեան եւ բռնազաղթի յանցագործութեանց ի դիմաց հատուցումը կ'ենթադրէ ֆիզիքական եւ նիւթական կորուստներու հատուցում: Իսկ հատուցման հարցի հիմնախարխիւր կը հանդիսանայ հայութենէն բռնագրաւուած հողերու եւ տարածքներու հատուցումը, որովհետեւ, ի վերջոյ, հայութիւնը ո'չ միայն ցեղասպանութեան ենթարկուած է, այլեւ բռնօրէն հայրենագրուած է:

Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ հատուցման հարցը այսօր շարունակուող գործընթաց է, որովհետեւ Հայ ժողովուրդին հանդէպ իրագործուած ցեղասպանական քաղաքականութիւնը այսօր կը շարունակուի Թուրքիոյ ուրացման քաղաքականութեամբ եւ Ատրպէյ՝ ճանի կողմէ արցախահայութեան բռնազաղթով ու Արցախի մշակութային ժառանգութեան ոչնչացումով: Միւս կողմէ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ դատապարտումը կը շարունակէ մնալ Հայաստանի պետութեան անվտանգութեան եւ հայութեան ազգային ռազմավարութեան կարեւորագոյն բաղադրիչներէն մէկը:

Մինչ հայ ազգի պահանջատիրական երթը թեւակոխած է նոր հանգրուան, եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացը վերածուած է աշխարհաքաղաքական գործօնի, Հայոց Յեղասպանութեան պատմական իրողութիւնը քննարկման օրակարգի եւ բանավէճի վերածելու ու այդ մասին «խորհրդածելու» միտքը յառաջ մղող Հայաստանի վարչախումբին եւ ղեկավարին վտանգաւոր մտադրութիւնները, Հայոց Յեղասպանութեան «առաջնահերթութիւն»ը սակարկութեան սակարանին վրայ գետնելու փորձութիւնները, «Պատմական» Հայաստանը «իրական»ին հակադրելու փորձաքննութիւնները՝ իրողապէս կը հարուածեն մեր պահանջատիրութեան եւ պատմական իրաւունքներու ու արդարութեան վերականգնման աշխատանքներուն: Երկարժամկէտ հեռանկարով, գործող վարչախումբի այս ընթացքը կրնայ յանգիլ միայն մէկ թշուառ վախճանի՝ «իրական» Հայաստանի կորուստին:

Բովանդակութիւն – Contents – Sommaire

Ցեղասպանութեան միջազգային նանաչումը
ծուռ հայելիի մէջ
Խ. Տէր Ղուկասեան, էջ 3

Ատրպէյնանի հետ կնքելիք «խաղաղութեան
համաձայնագիրը» խաղաղութեան
երաշխիքներ չի տալիս. պատմաբան
Յասմիկ Պալեան, էջ 6

Հայոց Ցեղասպանութենէն վերապրող
Նորայր Պէնօհանեան՝ Ադեֆսանդրիոյ
հայութեան «Հայրիկ»ը
Բժիշկ Կարպիս Հարպոյեան, էջ 9

Արինաթաթաւ լինը, էջ 13

Երգնկայի կոտորածները եւ երեսփոխան
Խալէտի արարքները, էջ 15

Բաբերդցի աղջկայ մը սրտանմիկ
պատմութիւնը, էջ 16

Կիրասունի հայերուն բնաջնջումը, էջ 17

ԱՅԼԻՐԱԻ Է, Մեր գերդաստանի գաղտնի
պատմութիւնը
Վրէժ-Արմէն, էջ 18

Տէր Զօրի կոտորածներէն փրկուած
ականատեսի մը վկայութիւնը, էջ 19

Տէր Զօրի սարսափազդու ջարդէն
վերապրողի մը պատմութիւնը, էջ 21

Տէր Զօրի տաս հազարներով նահատակնե-
րէն ողջ մնացողի մը վկայութիւնը, էջ 22

Հայերը Ալաուիթ պետութեան մէջ, էջ 24

Յակոբ եւ Ահարոն Սաչազլեան եղբայրները՝
մեր խոնարհ եւ անյայտ հերոսները
Սոնա Թիթիգեան Կէտիկեան, էջ 26

Կոդֆի նկարը՝ PHOTOLUR-ի

Ողջակիզում մը

Խարբերդի գերմանական որբանոցի տնօրէնուհին Օրի-
որդ շնամի Նանսոն, դանիացի, կը պատմէ հետեւեալը։-

Հայոց տարագրութեան ժամանակ, շնորհիւ շարունա-
կական փնտռութիւններու, ես եւ գերմանացի (կրօնաւոր) ըն-
կերուհիներս յաջողեցանք հաւաքել եւ մեր որբանոցներուն
մէջ ապաստան տալ շուրջ 300 հայ որբերու։

Վեց ամիս ետք, Խարբերդի իշխանութիւնները պաշտօ-
նապէս դիմեցին մեր տնօրէնութեան եւ պահանջեցին որբե-
րը իրենց յանձնել։ Որբանոցի տեսչութիւնը եւ մեր քաղաքի
գերման գիւնտերական իշխանութիւնները միջամտեցին Խար-
բերդի կառավարութեան մօտ ուժգին ընդդիմանալու համար
թրքական իշխանութեանց պահանջին։ Եւ սակայն ի գուր էր։
Կառավարութիւնը կը պնդէր յայտնելով որ Կոստանդնու-
պոլսէն խիստ հրահանգ կայ որբերը առնելու եւ դրկելու հոն
ուր կը գտնուէին իրենց ծնողները։ Ստիպուեցանք տեղի տալ,
իշխանութիւններէն հանդիսաւոր երաշխիք ստանալէ ետք,
որ այս փոքրիկները ողջ ու առողջ պիտի հասնին իրենց հա-
մար սահմանուած վայրը։ Իշխանութեանց կողմէ առաքուած
մասնաւոր գործակալներ տարին 300 որբերը։

Երկու օր ետք, երեկոյեան կողմ, երկու որբեր եկան մեզ մօտ։ Արագ վազքով եկած էին ու քրտինքներու մէջ կը լու-
զային։ Պատմեցին որ քաղաքէն երկու ժամ դուրս, ողջ-ողջ կ'այրեն իրենց ընկերները. իրենք կրցած էին փախուստ տալ...

Մենք հաւատք չընծայեցինք այդպիսի անհաւատալի պատմութեան մը։ Այսուհանդերձ, յաջորդ առաւօտ, մեր խղճի
հանգստութեան համար, ես եւ գերմանացի քոյրերը երկու որբերուն առաջնորդութեամբ ուղղուեցանք ցոյց տրուած տեղը։
Անապատային վայր մըն էր, քաղաքէն երկու ժամ դուրս։ Հեռուէն նշմարեցինք դեռ ծխացող սեւ զանգուած մը։ ...Կախառն
այդ մոխրակոյտը քրքրելով տեսանք մեր խեղճուկ փոքրիկներուն ածխացած ոսկորները...

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-29բ



Յեղասպանութեան միջազգային ճանաչումը ծուռ հայելիի մէջ

Համահայկական Հոշակագրի տասնամեակին

Խ. Տէր Ղուկասեան

Ուրացման «Փափուկ» Տարբերակը Ներքին Քաղաքականութեան Օրակարգին

«Մեր պաշտօնական դիրքորոշումը այն է, որ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը այսօր չի գտնուիր մեր արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու շարքին», ըսաւ Վարչապետ Նիկոլ Փաշինեան պաշտօնական հրաւերով Հայաստան այցելած խումբ մը թուրք լրագրողներու: Այնպէս ինչպէս ոչ շատ հեռու անցեալին, իր Արտաքին Գործոց Նախարարը ըսած էր ընդդիմադիր պատգամաւորի մը Ազգային ժողովի հարցուպատասխանի նիստի մը ընթացքին:

Մէկ կողմ դնենք Վարչապետին «Պատմութիւնը ներկայէն տարբերելու» սոփիստութիւնը որպէս թէ գործնապաշտ, թէ «իրաւկան» ապաշտ... Հիմնաւորում Յեղասպանութեան միջազգային ճանաչումը արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւն չնկատող յայտարարութեան: Իրողութիւնն այն է, որ անկախութենէն ի վեր, Յեղասպանութեան միջազգային ճանաչումը որեւէ իշխանութեան արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու շարքին եղած է: Անկախ թէ այդ հարցը ինչպէ՞ս սահմանուած է պետական օրակարգին վրայ, համաձայն առաջին, երկրորդ եւ երրորդ նախագահներու ընկալման եւ զայն գործադրելու կոչուած միջոցառումներուն:

Այսպէս, Լեւոն Տէր Պետրոսեանի օրով հարցը ոչ միայն արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւն է եղած, այլ օրակարգի իսկ է գրուած: Առաջին նախագահը իրարու հակադրեց «պետական մտածողութիւնը» եւ Հայ Դատը, եւ այս վերջինը ընկալեց որպէս խոչընդոտ արտաքին քաղաքականութեան: Յեղասպանութեան ժխտում կամ ուրացում չկար Տէր Պետրոսեանի մօտ, բայց ան ալ, իր ձեռով, կարծես ներկան ու պատմութիւնը փորձած էր իրարմէ տարբերել... Անկախութեան առաջին տարիներուն, արտաքին քաղաքականութեան եւ Հայ Դատի փոխ-լրացման տարբերակի մասին գոնէ խորհրդածելու այլընտրանքն իսկ բացառուեցաւ, գծախտաբար: Եթէ Սփիւռքի մէջ Հայ Դատի աշխատանքները ի սկզբանէ ունէին այն համոզումը, որ անկախ պետականութիւնը պիտի վերածուէր առաջնակարգ գործօնի՝ 1965-1985/87 թուականներուն ոչ-պետական ջանքերով միջազգային օրակարգ բերուած «Մոռցուած» Յեղասպանութեան հարցի շարունակականութեան որակական լիցքաւորում եւ ռազմավարական խորութիւն տալու համար, ապա եւ Տէր Պետրոսեանի մերժումը պէտք էր, որ պաղ ջուր թափած ըլլար այդ սպասումը ունեցողներու երեսին: Նաեւ՝ ցրած ըլլար Սփիւռքի հաւաքական երեւակայութեան մէջ անկախ պետականութեան ամենակարողականութեան անուրջը - անկախութենէն այլ անիրական սպասումներու եւ համոզումներու կողքին: Եւ ըլլար հրաւեր անդրադառնալու, որ Սփիւռքի մէջ անկախութեան նախորդած գրեթէ քառորդ դարու ճակատագրական ժամանակաշրջանին կազմաւորուած եւ բանաձեւուած քաղաքական մտածողութիւնը վերանայելու անհրաժեշտութիւնը կը դրուէր:

Բոպերթ Քոչարեանի նախագահութեան տասնամեակին, Յեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը պաշտօնապէս ընդունուեցաւ արտաքին քաղաքականութեան օրակարգին, բայց ունեցաւ հիմնականօրէն յայտարարողական գործնականացում: Քիչ բան էր, քանի որ Յեղասպանութեան ճանաչման պահանջը սկսաւ հնչել Հայաստանի պետական

համակարգի գերագոյն մակարդակէն եւ միջազգային ատենաներուն մէջ, ներառեալ թրքական կողմի հետ պաշտօնական թէ անուղղակի հանդիպումներու առիթով: Պատահական ալ է, որ Սփիւռքի մէջ, Յեղասպանութեան միջազգային ճանաչման գծով Հայ Դատի աշխատանքներու յաջողութիւնները նոր թափով իրարու յաջորդեցին երկրորդ Նախագահի տարիներուն - 21-րդ դարու առաջին տասնամեակին: Թէ անոնց մէջ ի՞նչ դեր ունեցած է հայկական դիւանագիտութիւնը՝ առանձին քննարկելի հարց է փաստական տուեալներու հիմնաւորումներով եւ ոչ թէ քաղաքական հաշուարկներով: Այսինքն՝ եթէ եղած է համագործակցութիւն եւ թերեւս դիւանագիտական ինչ որ նախաձեռնութիւն, ապա եւ այդ մէկը շատ աւելի ճիշդ է պատահական, ad-hoc, ընտրութեան քան հայեցակարգային, որ այնպէս ալ պաշտօնապէս երբեք օրակարգի է գրուած թէկուզ եւ «կոմպլեմենտար» տրամաբանութեամբ: Ընդհակառակը, եթէ մէկ կողմէ այդ ժամանակահատուածին հայկական դիւանագիտութիւնը գերծ էր Հայ Դատի պահանջատիրութեան ուղղութեամբ ոչինչ ընելու եւ մինչեւ իսկ գործընթացը չբաշխելու Տէր Պետրոսեանական արգելքէն, միւս կողմէ սակայն կը համենար առաջին նախագահի բանաձեւած Թուրքիոյ հետ «առանց նախապայմանի յարաբերութիւններու» ուղղորդական սկզբունքը, որ մնաց հաստատ: Ատոր մասին կը վկայէ Հայ Թրքական Հաշտութեան Յանձնախումբի (TARC) փորձութիւնը: Դժուար է համոզուիլ, որ Հայ Դատի պահանջատիրութիւնը երկրորդ նախագահի օրով ի դէմս հայկական դիւանագիտութեան գտաւ ամբողջական գործընկեր մը, որուն հետ աշխատանքային բաժանուակ կարգով փոխ-լրացուցիչ հայեցակարգ մը առաջացած էր: Եւ թերեւս այդ կը բացատրէ Սփիւռքի մէջ Հայ Դատի շրջանակներու զգաստութիւնն ու արագ հակազդեցութիւնը երբ TARC-ի լուրը հրապարակային եղաւ:

Երրորդ նախագահի պարագային, ծանօթ է, ամէն ինչ սկսաւ «Ֆուլթալային դիւանագիտութեան» եւ անոր ծնունդ տուած Սերժ Սարգսեանի Մոսկուայի մէջ Յունիս 2008-ի հրապարակային յայտարարութեամբ, ըստ որուն Հայաստանը պատրաստ է Թուրքիոյ հետ պատմական կնճռոտ խնդիրներն իսկ քննարկել ի խնդիր յարաբերութիւններու բնականանոնացման: Առանց մտնելու Սարգսեանի նման քայլի մը դիմելու դրդապատճառներուն մասին բանավէճին մէջ, որոնց մասին Հայաստանի մէջ արդէն կան աշխատասիրութիւններ եւ այս վերջիններուն համապատասխան քննարկումը դեռեւս կը բացակայի Սփիւռքի մէջ, պարզ է, որ Յունիս 2008-էն մինչեւ յաջորդ տարուան ընթացքին հայ-թրքական Փորթոքոյններու ստորագրումը, Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին Յեղասպանութեան հարցը մեղմ ըսուած՝ «սառեցուցեցաւ»: Եւ թերեւս աւելին՝ Փորթոքոյններու տանող բանակցային գործընթացին մէջ Սարգսեանի իշխանութիւնը Յեղասպանութեան հարցի գոնէ ժամանակաւոր «մարում»ի հանրային ժեստերէն գերծ չմնաց: Հայաստանի ֆուլթալային հաւաքականի շապիկներուն վրայէն Արարատի նկարի վերացումէն մինչեւ Ապրիլ 2009-ին, օրին ԱՄՆ-ի թերեւս մինչ այդ ամէնէն աւելի Յեղասպանութեան ճանաչման քայլը տալու պատրաստ Պարաք Օպամայի վարչակարգին անուղղակի պատգամներ՝ Ապրիլ 24-ին Սպիտակ Տան պաշտօնական յայ-

տարարութեան մէջ «ցեղասպանութիւն» քաղաքաիրաւական յղացքի նշումի անպատեհութեան մասին: Փրոթոքոլներուն դէմ ծառայաւ Սփիւռքի արմատական «Ոչ» մերժելով Հայաստանի օրուայ իշխանութիւններուն նախաձեռնութեան բացատրութեան ամէն փորձերը, որոնց անձնապէս նախանձախնդիր եղաւ ինք՝ Սերժ Սարգսեան, որ սփիւռքեան տարբեր համայնքներ իր շրջապատյոյ ժամանակ՝ դիմաւորուեցաւ բողոքի բուռն ցոյցերով – առանց որ, անշուշտ, պակսին Հայաստանի մէջ պետական քաղաքականութեան հետ սկզբունքով թէ պատեհապաշտաբար յարմարութեամբ (քոմֆորմիսթ) կազմակերպական ղեկավարներ թէ անձնաւորութիւններ, որոնք ընդունեցին իր բացատրութիւնները: Յետադարձ վարկածի կարգով եւ անցեալէն դասեր քաղելու նպատակով (կամ ինքնախաբէութեամբ...), կարելի է հարց տալ, թէ արդեօ՞ք Փրոթոքոլներու այդ ամբողջ հանգրուանը կրնար նուազ բախումնային ըլլալ Յեղասպանութեան հարցով հայեցակարգային միջոցի մը առկայութեան պարագային, որ Սարգսեանի իշխանութեան եւ Սփիւռքի մէջ Հայ Դատի հետապնդումի յանձնառու ջրջաններու միջեւ նախապէս երկխօսութեան առիթ ստեղծէր, թէկուզ եւ անհամաձայնութիւններու աշխատանքային բաժանման համաձայնութեան մը հասնելու համար: Նման հայեցակարգի բացակայութեան, ամէն ինչ ենթադրել կու տայ, որ Սարգսեանի համար Հայաստանի ներքաղաքական ոլորտի մէջ «կոալիցիոն» ժողովրդավարութեան ձեւաչափը թոյլ կու տար իրեն մնալ այն համոզումին վրայ, որ Թուրքիոյ հետ մերձեցման իր նախաձեռնութեան դժգոհութիւնները պիտի յաջողէր փարատել եւ դժուարութիւնները յաղթահարել կամ «կոալիցիոն» գործընկերներու ճամբով կամ ալ անձնապէս: Ինչ որ, փաստօրէն, տեղի չունեցաւ, եւ Փրոթոքոլներու գործընթացը եղաւ միակողմանիօրէն պետական, այսինքն՝ օրուայ իշխանութիւններու, նախաձեռնութիւն: Փրոթոքոլներու դէմ Սփիւռքի ծառայումը անկախութենէն ի վեր Հայաստանի իշխանութիւններու արտաքին քաղաքականութեան ամենաբացայայտ ու զանգուածային մերժման արտայայտութիւնն եղաւ: Անշուշտ, Սփիւռքի համար ինքնագոյութիւնն պիտի ըլլայ ենթադրել, որ իր զանգուածային բողոքը եղաւ ինքնուրոյ՝ Փրոթոքոլներու ձախողութեան, կամ՝ «սառնեցման» ինչպէս եղաւ նախագահի վերջին որոշումը: Գիտենք, որ այդ մէկը կը պարտինք ոչ աւելի եւ ոչ պակաս՝ էրտոգանի մերժումին նոյն այդ Փրոթոքոլներուն, այն համոզումով որ Թուրքիոյ համար շահաւէտ այդ փաստաթուղթն իսկ անընդունելի է իրեն համար: Բայց Սփիւռքի զանգուածային ցատումը թերեւս իր անընդարձ ունեցաւ հայրենիքի մէջ, ուր թէեւ ուշացումով բայց ի վերջոյ Փրոթոքոլներու մերժումի ալիք մը առաջացաւ:

Ամէն պարագայի, ի պատիւ նախագահ Սարգսեանի պիտի ըսել որ Փրոթոքոլներու սառնեցումը բերաւ Յեղասպանութեան հարցով Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ ամենասերտ համագործակցութեան հնգամեայ ժամանակաշրջան մը: Յեղասպանութեան Հարիւրերորդ Տարեկիցի պատրաստութիւնը հարցին տուաւ քաղաքական նոր լիցքաւորում, որուն արդիւնքն ալ եղաւ հայ ժողովուրդի պատմութեան մէջ բառին ամբողջական իմաստով համահայկական փաստաթուղթի հրապարակման ի դէմս Համահայկական Հռչակագրին: Այդ փաստաթուղթն էր, ահաւասիկ, որ ի լուր աշխարհի կը յայտարարէր, որ Յեղասպանութեան միջազգային ճանաչումը որպէս պահանջատիրական առաջնահերթութիւն իր լրումին հասած հանգրուան էր, եւ սկիզբ կը դրուէր հատուցման գործընթացին: Այսինքն, եթէ նոյնիսկ Յեղասպանութեան միջազգային ճանաչումը ինչ որ իմաստով, թէկուզ եւ խորհրդանշական, որեւէ պահուն եղած էր Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգի վրայ առաջնահերթութիւններու շարքին, 2015-ին արդէն, Հռչակագրի մէջ տեղ գտած բանաձեւումով, դադարած էր օրակարգային հարցերու կարգին առաջնահերթային ըլլալէ, որովհետեւ այդ կարիքը չէր զգացուեր այլեւս այնպէս, ինչպէս զգացուած էր Սփիւռքի մէջ 1965–1985/87

տարիներուն, երբ ճանաչումը եղած էր Հայ Դատի պահանջատիրութեան անմիջական նպատակ:

Հոս, սակայն, անհրաժեշտ է յստակացնել քանի մը կէտ: Առաջին, հակասութիւն չկայ այս յօդուածի սկզբնաւորութեան եղած հաստատումին միջեւ, թէ Յեղասպանութիւնը չէ եղած անկախ Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւն, եւ վերի պարբերութեան մէջ տեղ գտած մտքին, Յեղասպանութեան միջազգային ճանաչումը գոնէ խորհրդանշական իմաստով արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու շարքին եղած է 1998-էն սկսեալ: Արդարեւ, եթէ մինչեւ այդ թուական, այսինքն՝ Լեւոն Տէր Պետրոսեանի հրաժարական եւ Բոպրէթ Քոչարեանի իշխանութեան ստանձնում, Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը գերծ մնացած է այդ թեմայի որեւէ ձեւի արծարծումէ, եւ 1998-էն յետոյ յայտարարական կարգով մաս կազմած է դիւանագիտական գործունէութեան, ապա եւ այս փոփոխութիւնը ինքնին սահմանափակ ու խորհրդանշական «առաջնահերթութիւն» մը կրնայ յուշել: Այս իմաստով, եւ օրինակի կարգով, կարելի է նշել ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի Նախագահի ելոյթներու պատրաստութեան մէջ Յեղասպանութեան միջազգային ճանաչման բանաձեւումը: Երկրորդ, երբ կ'ըսուի, թէ Յեղասպանութեան միջազգային ճանաչման հանգրուանը հասած է իր լրումին, չի՞ նշանակեր, որ միջազգային ճանաչումը բացարձակ եւ ամբողջական է, եւ ուրեմն կը դադարին այդ ուղղութեամբ աշխատանքները: Փաստօրէն, միջազգային ճանաչումը չի կրնար երբեք ամբողջական ըլլալ, եթէ Յեղասպան պետութեան ժառանգորդ Թուրքիան չընդունի ոճիրին պատմական փաստը: Աւելի՛ն, հատուցման հանգրուանի մեկնարկին յայտարարութիւնը կ'ենթադրէր Յեղասպանութեան միջազգային ճանաչման ճիշդ աւելի եւս ամրապնդել մէկ քայլ անդին մտածելով, վերաբանաձեւելով պահանջատիրութեան ամբողջ խօսքը թէ՛ հիմնաւորման եւ թէ՛ նպատակներու ճշգրտման իմաստով:

Յեղասպանութեան հարցի միջազգային արծարծումը հայկական դիւանագիտութեան օրակարգին տարբեր եղաւ Հարիւրերորդ Տարեկիցին յաջորդած տարիներուն, ի մասնաւորի միջազգային կազմակերպութիւններու ոլորտին մէջ, ուր նախաձեռնութիւնները եղան շատ աւելի հետեւողական եւ արտաքին քաղաքականութեան սկսան տալ ցեղասպանութիւններու կանխարգելման յանձնառութիւն վերցուցած երկրի յստակ դիմագիծ: Հատուցման հանգրուանի մեկնարկի նախապատրաստութիւնը շատ աւելի ամբողջական էր Սփիւռքի մէջ, ուր առաջին անգամ ըլլալով պատրաստուեցաւ յղացքի տեսական եւ գործնական ընկալման համապարփակ ուսումնասիրութիւն մը որպէս ճանապարհային քարտէս գործընթացին սկիզբ տալու: Խօսքը կը վերաբերի Հենրի Թօնքոյի գլխաւորած Հայոց Յեղասպանութեան Հատուցումներու Ուսումնասիրման Խումբի պատրաստած Արդարացի Լուծում աշխատասիրութեան, որ բազմաթիւ լեզուներու թարգմանուեցաւ, եւ ձգեց այն տպաւորութիւնը, որ Հայ Դատի պահանջատիրութիւնը նոր եւ նորարարական աշխուժացումով մը համասփիւրքեան գորաշարժի ժամանակաշրջան մը պիտի թեւակոխէր:

Համահայկական Հռչակագրէն տասնամեակ մը անց, սակայն, հատուցման հանգրուանի մեկնարկը կը մնայ շատ աւելի յայտարարական քան իրական: Եւ եթէ Յեղասպանութեան միջազգային ճանաչման խօսքը տակաւին կը յամենայ այսօր եւ կը վերածուի Փաշինեանի իշխանութեան կողմէ հարցը արտաքին քաղաքականութենէն դուրս ձգելու նպատակով «առաջնահերթութիւն չէ» սովորաբարութեան, ապա եւ պատճառն այն է, որ Հռչակագիրը այնպէս ալ մնաց փաստաթուղթ, չեղաւ պետական թէ ոչ–պետական մակարդակներով քաղաքական նախաձեռնութեան յանձնառութիւն ստեղծող իրադարձութիւն, առնուած քայլերը եղան սահմանափակ, եւ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ հատուցման հանգրուանի գործնականացման համակարգումի հայեցակարգ չառաջա-

ցաւ: Այս վերջինին նախանշանը, ի դէպ, տրուեցաւ Հարիւրերորդ Տարեկիցի միջոցառումներու ընթացքին իսկ, երբ այնքան սպասուած Համահայկական Խորհուրդը, որ պիտի կազմուէր Հարիւրերորդ Տարեկիցի Յանձնաժողովի նախընթացին հետեւումով, ծնունդ չառաւ: Ինչ որ բարացուցական էր եւ հայրենի քաղաքական հատուածներու մօտ պետութեան հետ բայց ոչ անոր ոլորտին մէջ համահայկական միջոցի մը ստեղծման դժկամութեան առկայութեան, եւ Սփիւռքեան ղեկավարութեան անկարողութեան՝ հեռաւորութիւն պահելու, մինչեւ իսկ չվարանելու ի հարկին քննադատական կեցուածք ցուցաբերելու պետական քաղաքականութեան հանդէպ, եւ իր ձայնը լսելի դարձնելու ինքնուրոյն միջոցի ստեղծման: Այլ խօսքով, Յեղասպանութեան Հարիւրերորդ Տարեկիցի պատրաստութեան հնգամեակի ամբողջ խանդավառութիւնը Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը իրականացնելու համոզումով չյանգեցաւ այդ համագործակցութեան մնայուն բնոյթ տալու եւ ոչ մէկ հայեցակարգի: Եւ մինչ պետական քաղաքականութիւնը ներհայաստանեան թէ միջազգային ոլորտներուն մէջ ընթացաւ իր ուղիով ինչպէս սովորաբար կ'ըլլար, այսինքն՝ առանց համահայկական թեմաներու համար սփիւռքեան ձայնով եւ քուէով մասնակցութեան մեքանիզմի, Սփիւռքեան կազմակերպութիւններն ու իրենց ղեկավարութիւնները, կարծես տակաւին թմրած այդ հնգամեակի համագործակցութեան խանդավառութենէն, ոչ մէկ քայլ առին թէկուզ եւ համասփիւռքեան մասշտապով հատուցման ժամանակաշրջանին սկիզբ տալու եւ պահանջատիրական այդ հանգրուանը ամրագրելու ոչ-պետական քաղաքական գորաշարժի մը ընդմէջէն:

Հատուցման օրակարգի չմեկնարկումի պայմաններուն մէջ «Յեղասպանութեան միջազգային ճանաչում»ը մնաց Հայ Դատի պահանջատիրութեան քիչէ, որ հանրային խօսույթին մէջ պարզունակացուց հարցն ու ջրեց անոր պատմական ամբողջ գործընթացի պատումը: Թոյլ չտուաւ Յեղասպանութեան միջազգային ճանաչման այնքան սպասուած վերջին յաջողութիւնները, ի մասնաւորի ԱՄՆ-ի Նախագահ Զօ Պայտընի կողմէ յղացքին գործածումը Ապրիլ 2021-ին, քաղաքական դրամագլուխի վերածելու ոչ Հայաստանի մէջ, ուր արդէն նման նախանձախնդրութիւն չկար, ոչ ալ Սփիւռքի, ուր քառասուն տարիներու հետեւողական ու անկոտորուն աշխատանքներու այդ գլխադիր յաջողութիւնը մնաց պարզ յայտարարութիւն մը: Աւելի'ն, Յեղասպանութեան հարցը ռազմավարական գործօնի կարեւորութեամբ բանաձեւելու մեծ բացթողումը, որ իր կարգին բարացուցական է Սփիւռքի մէջ Հայ Դատի պահանջատիրութեան եւ հայկական դիւանագիտութեան համագործակցութեան հայեցակարգի բացակայութեան, պատճառ դարձաւ անոր ապիկար մանրադրուցման համաձայն պահու պահանջներուն: Ընդ որում, այնքան ալ զարմանալի պէտք է թուի Քառասունչորսօրեայ Պատերազմին ցեղասպանական սպառնալիքի ահագնազ բարձրացնող Փաշինեանի մը հետագայ մերժումը Արցախի բռնի հայաթափումը ցեղասպանութիւն որակելու, հակառակ որ այդ մէկը արդէն հեղինակաւոր կերպով բանաձեւուած էր միջազգային մասշտապով հանրաձայնօթ իրաւագէտ Լուիս Մորենօ Օքամփոյի կողմէ:

Թուրք լրագրողներու առջեւ Յեղասպանութիւնը արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու կարգին չդասելու Փաշինեանի նախաձեռնութիւնները միայն պատգամ մը չէ Անգարային՝ զայն «հանգստացնելու» համար, որ Հայաստանի իշխանութիւնները այնքան ալ տրամադիր չեն թրքական ժխտողականութեան դիմադրելու: Անոր փաստը իրենց կրկնակի հանդուրժողականութիւնն է՝ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ մօտիկ անցեալին թուրք բլոգերին եւ Փաշինեանի հարցազրոյցին հրաւիրուած թուրք լրագրողներէն մէկուն կողմէ նահատակներու յիշատակը անարգելու եւ հեղնելու: Ի վերջոյ, նոյն այդ տարածքին էր, որ Զարեհ Սինանեանը հարցականի տակ դրած էր Յեղասպանութեան միջազգային ճանաչման «յաւելեալ արժէք»ը Հայաստանին համար: Փա-

շինեանի կողմէ այդ հարցին թէեւ տարբեր սակայն նոյնիմաստ բանաձեւումը նաեւ ազդանշան էր Յեղասպանութեան հարցը ստեղծագործելու ներքին քաղաքականութեան օրակարգ, ուր եւ ուրացման «փափուկ» տարբերակը այս՝ առաջնահերթային հարցի պիտի վերածուի Սահմանադրութեան փոփոխութեան ատրպէյճանական պահանջի գործնականացման քայլերուն մէջ: Ընդ որում՝ «փափուկ» ուրացումը պիտի ժխտէ Յեղասպանութեան... ուրացումը, միեւնոյն ժամանակ, սակայն, Յեղասպանութեան հարցը պիտի սահմանափակէ արարողական սովորութեան մը մէջ, ուր եւ անոր կարեւորութիւնը ժամանակի ընթացքին պիտի նսեմանայ ու կորսուի:

Փաշինեանի այս վարքագիծը անշուշտ մերժելի է հայրենի ընդդիմադիր ամբողջ հատուածին կողմէ Խորհրդարանի մէջ ներկայութիւն ունեցող թէ անկէ դուրս քաղաքական ուժերու եւ ղեկավար անձնաւորութիւններու համար: Պիտի յուսալ, որ այն մերժելի ըլլայ նաեւ Հայաստանի ժողովուրդի լայն զանգուածներուն, ներառեալ Փաշինեանին քուէ տուած հատուածներուն եւ անհատ քաղաքացիներու կարեւոր թիւի մը համար: Պիտի կարենա՞ն, սակայն, ընդդիմադիր ուժերը համոզել հայրենի զանգուածներուն առկայ սպառնալիքի մասին եւ գորաշարժի ենթարկել զանոնք ի խնդիր իշխանափոխութեան... Ամէն պարզայի, այս վերջինը կը թուի անհրաժեշտ բայց ոչ բաւարար պայման՝ Յեղասպանութիւնը յետ-միջազգային ճանաչման հանգրուանի կտրուածքով արտաքին քաղաքականութեան օրակարգին բերելու համար: Առնուազն այդ կը յուշէ անկախութեան յաջորդած աւելի քան երեք տասնամեակի հայրենի պետական քաղաքականութեան գործընթացը: Եւ նոյնիսկ եթէ Յեղասպանութեան հարցի ողջունելի վերադարձը արտաքին քաղաքականութեան օրակարգին իրականութիւն դառնայ, ապա եւ յետ-միջազգային ճանաչում հանգրուանը ներկայիս չի՞ կրնար նշանակել հատուցման ժամանակաշրջանի մեկնարկ: Առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ հարցին բանաձեւումն ու դիւանագիտական գործնականացումը որպէս ռազմավարական գործօն՝ երկրի, ժողովուրդի եւ համայն հայութեան լինելութեան ապահովման ի խնդիր:

Կը մնայ որ Սփիւռքը չի՞ կրնար սպասել, որ իշխանափոխութեան անհրաժեշտ ու բաւարար պայմանները ամբողջացուին, որպէսզի Յեղասպանութեան հարցը յաւուր պատշաճի վերադառնայ արտաքին քաղաքականութեան օրակարգ, եւ, հետեւաբար, միջազգային բեմահարթակ: Թրքական ժխտողականութեան շատ աւելի ինքնավստահ ու ակրեալի հանգրուանը արդէն ինքզինք կը զգացնէ. հայաստեացութեան արտայայտութիւններէն մինչեւ Յեղասպանութեան յուշակոթողներու դէմ վայրագութեան արարքներ, եւ մօտ ատենէն շատ հաւանաբար ճանաչման կարգով ընդունուած օրէնքներու չեղարկումի արշաւ: Ասոնց վրայ պիտի աւելցնել Փաշինեանական ուրացման «փափուկ» տարբերակը, որ արդէն փոխադրուած է Սփիւռք: Բարեբախտաբար աննկատ չեն անցնիր այդ ճիգերը, եւ բազմաթիւ սփիւռքահայ կազմակերպութիւններ հակազդեցին Փաշինեանի այդ առաջին փորձերուն: Բայց այդ մէկը բաւարար չէ. անհրաժեշտ է Սփիւռքեան օրակարգին վրայ Յեղասպանութեան հարցին նորագոյն քաղաքականացումը, որ յետ-միջազգային ճանաչում հանգրուանը սահմանէ ու մեկնարկէ՝ անմիջական սպառնալիքի դիմադրաւման եւ հեռակայ նպատակներու ճշգրտման համար: Առաջինին պարագային՝ Յեղասպանութեան պատմական ճշմարտութեան զրահաւորումն է անոր ճշմարտութեան բացարձականութիւնը թիրախաւորող ամէն փորձի դէմ, ժխտողական յարձակողական ըլլայ այդ թէ «փափուկ» ուրացման նախաձեռնութիւն: Այնպէս ինչպէս զրահաւորուած է Ողջակիզման պատմական ճշմարտութեան բացարձականութիւնը: Ինչ կը վերաբերի հեռակայ նպատակներուն, ապա եւ ոչինչ կ'արգիլէ պետական քաղաքականութեան կաշկանդումներէ գուրկ Սփիւռքին համար օրակարգի վրայ բերել հատուցման հարցը, եւ սկսիլ այդ ուղղութեամբ պատրաստուիլ:

Ատրպէյճանի հետ կնքելիք «խաղաղութեան համաձայնագիրը» խաղաղութեան երաշխիքներ չի տալիս. պատմաբան

«Հորիզոն»-ի յատուկ համարի գրուցակիցը պատմաբան, ՀՅԴ ԳՄ անդամ Խաչատուր Ստեփանեանն է: Նրա հետ գրոյցում անդրադարձել ենք Հայոց Յեղասպանութեան միջազգային նախապայմանութեան, հայ-թուրքական եւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններին, քաղաքական հնարաւոր զարգացումներին եւ տարածաշրջանում առաջիկայում տեղի ունենալիք վերադասաւորումներին, որոնք ազդեցութիւն են ունենալու նաեւ Հայաստանի վրայ:

– ՀՀ անկախութեան հռչակագրի 11-րդ կէտով սահմանուած է. «Հայաստանի Հանրապետութիւնը սատար է կանգնում 1915 թուականին Օսմանեան Թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում Հայոց Յեղասպանութեան միջազգային նախապայմանութեան գործին»: Այսուհանդերձ, 2025 թուականի Մարտի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Հայաստան ժամանած թուրքական լրատուամիջոցների ներկայացուցիչների հետ հարցազրոյցի ընթացքում նշեց. «Յեղասպանութեան միջազգային նախապայմանութեան արտաքին քաղաքականութեան առաջնահերթութեան մէջ չի մտնում»: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք սա: Արդեօ՞ք այս յայտարարութիւնը կարող է բացասական ազդեցութիւն ունենալ Հայոց Յեղասպանութեան միջազգային նախապայմանութեան գործընթացի վրայ:

– Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնը, թէ «Յեղասպանութեան ճանաչումը մեր արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնների մէջ չի մտնում», իսկապէս, կարող է բացասական ազդեցութիւն ունենալ Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի վրայ: Շատ դէպքերում միջազգային գործընկերները ՀՀ ղեկավարի յայտնած կարծիքն ընկալում են որպէս պաշտօնական որոշում: Ըստ այդմ, միջազգային հանրութիւնը կը խոսափի հայ-թուրքական այսպէս կոչուած՝ հաշտութեան գործընթացի մէջ մտնելուց: Այս տեսանկիւնից Փաշինեանն, իսկապէս, վտանգաւոր յայտարարութիւն է արել եւ փաստօրէն ջուրն

է գցում այն գործը, որը երկար ժամանակ իրականացրել են Հայ դատի գրասենեակները, յանձնախմբերը նաեւ միւս լոբբիստական կազմակերպութիւնները: Սա աւելի է բարդացնելու գործընթացը եւ ինչ-որ առումով բաւական մեծ աշխատանք պէտք է նորից սկսել: Ինչ-որ առումով Նիկոլ Փաշինեանի այս յայտարարութիւնը բխում է ոչ թէ հայ-թուրքական հաշտեցման տրամաբանութիւնից, այլ մէկ անգամ եւս օգտակար է դառնում թշնամի երկրի վարած հակահայ քաղաքականութեանը:

– Վստահ եմ՝ հետեւել էք Փաշինեանի թուրքական լրատուամիջոցներին տուած հարցազրոյցին: Ընդհանուր առմամբ ի՞նչ հետեւում եք թուրքերի արեւելի: Իշխանութիւնը ի՞նչ քաղաքականութիւն է որդեգրել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններում:

– Հետեւել եմ այդ հարցազրոյցին: Հետեւութիւնս հետեւեալն է. մեր իշխանութիւնը որդեգրել է ամէն զնով թուրքերին դուր գալու քաղաքականութիւն, եւ Նիկոլ Փաշինեանը դա էլ էր թաքցնում: Բայց, իրականում պէտք էր ոչ թէ թուրքերին դուր գալու, չորդեգրութիւն բովանդակութեամբ հարցազրոյց տալ, այլ հայոց պետականութեան, ՀՀ շահերը պաշտպանել: Ցաւօք սրտի, մենք դա այդ հարցազրոյցում չտեսանք: Նա թուրքերին ուզում էր հասկացնել, որ իրենք պատրաստ են ընդունելու բոլոր նախապայմանները, իսկ դրանից կարելի է հետեւութիւն անել, որ թուրքերը պատրաստ են նոր նախապայմաններ թելադրելու, որոնք շատ աւելի վտանգաւոր հետեւանքներով են յղի մեր պետութեան եւ ընդհանրապէս հայ ժողովրդի համար:

– Մամուլում պարբերաբար հրապարակումներ են յայտնում այն մասին, որ Հայաստանի իշխանութեան դիրքորոշումը շատ մտահոգիչ է՝ Հայոց Յեղասպանութեան միջազգային նախապայմանութեան վերաբերեալ, աւելին՝ մտահոգութիւններ կան այն մասին, որ ՀՀ իշխանութիւնը կարող է տեղի տալ թուրք-



ատրպէյճանական նշումներին, եւ ըստ այդմ՝ նոյնիսկ Հայոց Յեղասպանութեան ուրացման նախադրեւով գնալ: Դուր ե՞ս ունէ՞ք նման մտահոգութիւն: Եթէ այո, ապա ինչո՞ւ:

– Բացայայտ ասում են, որ հրաժարուելու են Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացից եւ որեւէ ձեւով դա չեն դիտարկելու հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման մէջ: Տպաւորութիւն կայ, որ ի դէմս թուրքական պետութեան եւ իշխանութեան՝ Հայաստանի իշխանութիւններն իրենց համար հովանաւոր են փնտռում իրենց իշխանութեանը մնալու եւ հակահայկական քաղաքականութիւնը շարունակելու առումով:

– Անդրադառնա՞նք այսպէս կոչուած «խաղաղութեան պայմանագրին»: Ի՞նչ վտանգներով է յղի այդ փաստաթղթի ստորագրումը:

– Նիկոլ Փաշինեանի խօսույթում «խաղաղութեան պայմանագիրը» վերանուանուել է «խաղաղութեան համաձայնագիր», որը իրաւական առումով աւելի ցածր կարգավիճակ ունի: Հիմա էլ Ալիւր ձգձգում է այդ համաձայնագրի ստորագրումը, իսկ Նիկոլ Փաշինեանը պատրաստակամութիւն է յայտնել միայնակ, միակողմանի ստորագրելու դա, որովհետեւ ուզում է ամէն զնով ցոյց տալ, թէ դա խաղաղութեան փաստաթուղթ է՝ փորձելով հասարակութեանը դրանով հանգստացնել: Բայց, իրականում դա խաղաղութեան որեւէ երաշխիք չի տալիս: Այդ պայմանագիրը կամ հա-

մաճայնագիրը գաղտնի է պահում, բայց գաղտնագերծուած կէտերից յայտնի է դառնում, որ, որքանով ինձ յայտնի է, դրանում որեւէ կէտ չկայ Ատրպէյճանի կողմից խաղաղութեան երաշխիքի վերաբերակ:

- Այդ փաստաթղթի ստորագրումով Հայաստանը կարող է որեւէ երաշխիք ունենալ, որ Ատրպէյճանը դարձեալ ռազմական գործողութիւններ չի սանձագերծի այն դէպքում, երբ հենց այս պահին այդ երկիրը բռնագրաւել է ՀՀ սուվերեն տարածքներից Գեղարքունիքում, Սիւնիքում... Աւելին՝ ատրպէյճանցի բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներ (նաեւ նախագահը) խօսում են նուաճողական ու հակահայկական քաղաքականութեան լեզուով՝ պարբերաբար յիշեցնելով նաեւ «Արեւմտեան Ատրպէյճանի» մասին, որի մէջ, իբր, մտնում է նաեւ ՀՀ տարածքը:

- «Խաղաղութեան համաձայնագրով» չեն յստակացում Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանները, իսկ վիճարկելի խնդիրը դա է: Երկու երկրների միջեւ կոնֆլիկտի թեման սահմանն է, իսկ սահմանի մասին որեւէ բան չկայ: Եթէ Ատրպէյճանը ՀՀ սուվերեն տարածքից իր վերահսկողութեան տակ տարածքներ ունի, էլ ի՞նչ խաղաղութեան մասին է խօսքը: Եթէ Ատրպէյճանում կան ռազմագերիներ եւ քաղաքական գերիներ եւ դրա մասին այդ համաձայնագրում չի խօսում, ի՞նչ խաղաղութեան մասին է խօսքը: Մենք երաշխաւորուած չենք նոր յարձակումներից: Ինչպէս նշեցիք, Ատրպէյճանի խօսողը վկայում է, որ այս պայմանագիրը խաղաղութեան որեւէ երաշխիք չի տալու, ընդհակառակը, մեր հասարակութեան գլխի տակ փափուկ բարձ է դնում: Յաւանք սրտի, եթէ այդ պայմանագիրը ստորագրուի, մենք կարող ենք ականատես լինել նոր յարձակման:

- Առաջիկայ ամիսներին կամ 2025 թուականի ընթացքում Ատրպէյճանի կողմից լայնամասշտապ ռազմական յարձակման հաւանականութիւն կանխատեսու՞մ է:

- Ատրպէյճանի կողմից Հայաստանի վրայ ռազմական յարձակման վտանգ միշտ էլ կայ, եւ դա այս կամ այն հանգամանքով պայմանաւորուած՝ տեղի չի ունենում, որովհետեւ միջազգային որոշ ուժային կեդրոններ դէմ են դրան: Դա պայմանաւորուած է ՀՀ իշխանութեան որդեգրած

րած քաղաքականութեամբ: Այսինքն՝ Ատրպէյճանը ոչ թէ վախենում է Հայաստանի պատասխանից, կամ ՀՀ իշխանութիւններն են ստիպում միջազգային կեդրոններին՝ զսպելու Ատրպէյճանի ցանկութիւնները, այլ պարզապէս գերտէրութիւններն, իրենց շահերից ելնելով, փորձում են զսպել Ատրպէյճանին: Սա ցաւով եմ ասում, բայց այսպիսի որդեգրական պետական քաղաքականութեամբ մենք հեռու չենք կարող:

- 2025 թուականին ռուս սահմանապահները հեռացան հայ-թուրքական սահմանի՝ Մարգարայի անցակետից: Փետրուարի 28-ին վարչապետ Փաշինեանը յայտարարեց. «Այսօրուանից Հայաստան-Թուրքիա պետական սահմանի «Մարգարա» անցման կետում սահմանային ծառայութիւնը իրականացում է բացառապէս ՀՀ Սահմանապահ զօրքերի ուժերով»: Ի՞նչ է կարծում, սա ի շահ, թե՞ ի վնաս Հայաստանի էր: Ռուսական ուժերը Հայաստանից աստիճանաբար դուրս մղելուց Հայաստանը կը շահի, թե՞ ընդհակառակը:

- Իրականում Ռուսաստանի ռազմական ներկայութիւնը ՀՀ-ում բխում է թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Հայաստանի շահերից: Եկէ՛ք դիտարկենք Հայաստանի շահը. ակնյայտ է, որ ռուսական ռազմական ներկայութիւնը մեզ համար անվտանգութեան երաշխիք է ինչ-որ առումով: Դա կարող ենք քննարկել, օրինակներ բերել՝ ասելով, թէ՛ այսպէս եղաւ, այնպէս եղաւ, բայց այս պահին փաստ է, որ դա անվտանգութեան երաշխիք է: Քանի մենք դրան այլընտրանք չունենք (իսկ գլխաւոր այլընտրանքը կարող է լինել ուժեղ բանակը, որը կը կարողանայ երաշխաւորել ՀՀ անվտանգութիւնը Թուրքիայի յարձակումից), պէտք է ապաւինենք նաեւ դաշնակցի աջակցութեանը, ինչպիսին այս պահին Ռուսաստանն է:

- 2025 թուականի Մարտի 20-ին տեղի ունեցած Կառավարութեան նիստի ընթացքում յայտարարուեց, որ Մարտի 21-ից 10 օրով բացուելու է Հայաստանը Թուրքիային կապող Մարգարայի կամուրջը՝ առաւել արագ եւ նուազ ծախսերով Սիրիայում, Լիբանանում, Իրաքում գտնուող վտանգուած հայ համայնքին մարդասիրական օգնութիւն ուղարկելու նպատակով: 32 տարուայ ընթացքում սա երկրորդ դէպքն է, երբ

Մարգարայի անցակետը բացում է հումանիտար բեռների համար: Նախորդ անգամ 2023-ին բացուեց կամուրջը. Երեւանը 100 տոննա մարդասիրական օգնութիւն ուղարկեց Թուրքիա՝ Ասիաման քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից տուժածների համար: Անցակետի թէկուզ ժամանակաւոր բացումը որեւէ կերպ կ'ազդի՞ հայ-թուրքական յարաբերութիւնների վրայ:

- Անշուշտ, հոմանիտար աջակցութիւն միշտ էլ պէտք է ցոյց տալ: Հոմանիզմը քաղաքակրթութեանը բնորոշ երեւոյթ է, բայց յիշենք, որ Արցախի շրջափակման պարագայում ՀՀ իշխանութիւնները որեւէ նման քայլ չձեռնարկեցին, Թուրքիային չփորձեցին դրդել, որ Բերձորի միջանցքը բացելու համար միջոցներ ձեռնարկէր... Իսկ այն, ինչ այժմ անում է ՀՀ իշխանութիւնը, թուամորթութիւն է, թուրքական իշխանութիւններին չողորթութիւն եւ միջազգային հանրութեան վրայ կեղծ տպաւորութիւն գործելու քաղաքականութիւն է:

- Իշխանավարման տարիներին ընթացքում այս իշխանութիւնն աստիճանաբար ընդունում է եւ առաջիկայում ամբողջապէս կ'ընդունի՞ Թուրքիայի ներկայացրած նախապայմանների ամբողջական փաթեթը, որը ներառում էր Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման դադարեցումը, Արարատ լեռը որպէս խորհրդանիշ հեռացնելը, անկախութեան հռչակագրի փոփոխութիւնը եւ այլն: Փաստ է, որ այս իշխանութեան օրօք այս ամէնի վերաբերեալ եղել են աղմկայարոյց յայտարարութիւններ: Հաւանական համարո՞ւմ է, որ մինչեւ 2026 թուականի ընտրութիւնները այս իշխանութիւնը կարող է ընդունել Թուրքիայի ներկայացրած նախապայմանների փաթեթը:

- Այս իշխանութիւնների ղեկավարման տարիներին հասարակութեանը տրամադրում են Թուրքիայի առաջարկած նախապայմանների ամբողջական փաթեթն ընդունելու, որը ներառում է նաեւ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի դադարեցումը: Փաթեթում կէտեր կան, որոնք վերաբերում են խորհրդանիշերին, անկախութեան հռչակագրի փոփոխութեանը եւ այլն... Չգիտեմ՝ որքանով է հաւանական մինչեւ 2026 թուականի ընտրութիւնները նախապայմանների ամբողջ

ջական փաթեթն ընդունելը, բայց մի բան վստահ կարելի է ասել. քանի այս իշխանութիւնները կան, թուրքական նախապայմաններն ընդունուելու են, եւ նոր նախապայմաններ են աւելանալու ընդգէմ Հայաստանի:

– Ի՞նչ վերադասաւորումներ կարող են լինել մեր տարածաշրջանում, եւ ինչպէ՞ս կարող է դա ազդել ՀՀ վրայ:

– Վերադասաւորումներ տեղի են ունենում ամբողջ աշխարհում, եւ մեր տարածաշրջանը, մշտապէս լինելով «տաք» գոտի, պարբերաբար վերադասաւորումների փուլերում է: Հիմա էլ են նման վերադասաւորումներ տեղի ունենում: Ակնյայտ է, որ ռուսական ներկայութեան հեռացումը Սիրիայից արդէն որոշակիօրէն փոխելու է տարածաշրջանային վերադասաւորումները: Ռուսաստանը ռուս-ուքրաինական հակամարտութեան կարգաւորումից յետոյ, մի գուցէ, փորձի ամրապնդուել մեր տարածաշրջանում, մասնաւորապէս՝ ՀՀ-ում: Դա, իսկապէս, կը փոխի տարածաշրջանային վերադասաւորումները, եւ ՀՀ-ն, մի գուցէ, կարողանայ աւելի նպաստաւոր դիրքում յայտնուել, բայց, սա մեծապէս պայմանա-

ւորուած է նաեւ ՀՀ իշխանութիւնների դիրքորոշմամբ: Թերեւս դրանով է պայմանաւորուած այն փաստը, որ Ատրպէյճանն ու Թուրքիան շտապում են օր առաջ Հայաստանն աւելի ծանր իրավիճակի մէջ դնել եւ մինչեւ վերջնական վերադասաւորումներն իրենց համար բարենպաստ պայմաններ ստեղծել:

– Արդեօ՞ք Հայաստանի իշխանութիւնը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր քայլերը, հնարաւոր բոլոր ջանքերը գործադրո՞ւմ է Պաֆուի բանտերում պահուող գերիներին վերադարձնելու եւ նրանց նկատմամբ կատարուող վայրագութիւններին, անօրինական դատական գործընթացի վրայ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար:

– Հայաստանի իշխանութիւնները ոչ թէ ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր քայլերը, այլ ընդհակառակը՝ ոչինչ չեն անում այդ ուղղութեամբ: Եւ իրենց պարզաբանումը, թէ իբր իրենք քայլեր չեն անում, որպէսզի չփտանգեն Պաքուում պահուող հայերի անվտանգութիւնը, որեւէ արդարացում չունի, որովհետեւ Ատրպէյճանում տեղի ունեցող դատավարութիւններից տեսնում ենք,

թէ ինչպիսի անմարդկային պայմաններում են գտնուում գերիները: ՀՀ իշխանութիւնների վարած անհեռատես քաղաքականութիւնն աւելի է վտանգելու թէ՛ գերիների, թէ՛ Հայաստանի վիճակը: ՀՀ իշխանութիւնները փոխանակ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեն այս գործընթացի վրայ եւ Ատրպէյճանի վրայ ճշոււմ գործադրեն, որը կը նպաստի Պաքուում պահուող հայ գերիների վերադարձին, հայանպաստ խաղաղութեան հաստատմանը, ոչինչ չեն անում:

– Հնարաւոր է հայերի վերադարձն Արցախ: Եթէ այո, ապա ինչպէ՞ս, ի՞նչ կարգավիճակով, ո՞ր դէպքում:

– Հայերի վերադարձն Արցախ հնարաւոր է միջազգային երաշխիքների դէպքում՝ նկատի ունեմ անվտանգութեան նկատառումները: Կամ էլ պիտի Արցախը նորից ազատագրենք, եւ այդ մարդիկ գնան, իրենց տներում, իրենց պատմական հայրենիքում շարունակեն ապրել եւ արարել:

Հարցազոյցը վարեց Յասմիկ Պալէեան

Ինչպէ՞ս բնաջնջուեցան Տրապիզոնի հայերը

15 Մայիս 1915.- Տոքթ. Պեհաշտտին Շաքիրի եւ Նազըմի այցելութենէն ետք, Տրապիզոնի մէջ կ'իմացուի երզնկայի հայերուն տեղահանութիւնը:

27 Մայիս 1915.- Իշխանութիւնները կը գրաւեն հայոց ունեցած գէնքերը: Այդ միջոցին, հայ երեւելիները կը դիմեն կառավարութեան՝ յայտարարելով որ հայերը իրենց ամբողջ ունեցուածքը եւ տունները կը յանձնեն կառավարութեան, պայմանաւ որ ոստիկան զօրաց հսկողութիւն հաստատուի իրենց [թաղերուն վրայ]: Կառավարիչը վստահեցուց, որ իրենք պիտի չտարագրուին:

22 Յունիս 1915.- Իշխանութիւնները կը ձեռնարկեն բոլոր հայ մտաւորականները, թուով 35-40 հոգի: Վերջիններս, երկու օր բանտ պահուելէ ետք, առաքաստանաւ կը հանուին, կը սպաննուին ջուրին բացերը եւ ծով կը նետուին:

30 Յունիս 1915.- Իշխանութիւնները կը սկսին տարագրել լուսաւորչական հայերը եւ կը յայտարարեն, որ կաթողիկէ եւ բողոքական հայերը անհանգստանալու պատճառ չունին բնաւ:

3 Յուլիս 1915.- Կաթողիկէ եւ բողոքական հայերը յանկարծ հրահանգ կը ստանան իրենք եւս մեկնելու: Խեղճերը ժամանակ չեն ունենար իրենց հետ տանելու անհրաժեշտ իրեղէնները:

Առաջին կարաւանը կը հասնի մինչեւ Տոգտապան, ուր կը ջարդուի. երկրորդ եւ երրորդ կարաւանները կը հասնին մինչեւ Քեմալ, ուր նոյնպէս կը կոտորուին: Տրապիզոնի հայերէն միայն պր. Կայծակ Արապեան կանացի ծպտումով կը հասնի Դամասկոս, ուր կը մեռնի ժանտաւտենդէ:

Գլխաւոր պատասխանատուները.-

Ճեմալ Ազմի, կառավարիչ, «ճիւղաւ եւ մարդակեր»:

Նայիլ, Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան քարտուղար:

Ռիզա, օգնական Նայիլի:

[Կը հետեւին անուններ, որոնցմէ] Քիրզատէ Շէֆքի եւ իր փեսան Մուսթաֆա, որ շատ մը հայ վաճառականներու ապրանքներուն տիրանալէ ետք, եկած ու հաստատուած է Կ. Պոլիս, Կալաթա, Սիկուլթա խան, գերմանական Օրիենթ պանքի յարկին վերեւ:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-15

Հայոց Յեղասպանութենէն վերապրող Նորայր Պէնօհանեան՝ Աղեքսանդրիոյ հայութեան «Հայրիկ»ը

Բժիշկ Կարպիս Հարպոյեան

Նորայր Պէնօհանեան ծնած է 1912-ին Մարգուան: Հօր անունն է Յակոբ եւ մօր անունը՝ Եսթեր Դանիէլեան: Մարգուան 1915-էն առաջ ունեցած է 26000 բնակչութիւն, մեծամասնութեամբ Հայեր, որոնք եղած են Հայախօս, նոյնիսկ թուրքերը սորված են Հայերէն:


Նորայրին Հայրը՝ Յակոբ Պէնօհանեան, աշխատած է կաշիի գործով եւ ունեցած է կօշկակարական երկու վաճառատուներ: Ան նաեւ զբաղած է աֆիոնի ցանքով եւ առեւտուրով: Ունեցած է այգիներ եւ պարտէզներ: Եղած է յայտնի վաճառական եւ յեղափոխական: Ան տան մէջ պահած է անձնական զէնքեր ինքնապաշտպանութեան համար, սակայն չէ կրցած օգտագործել այդ զէնքերը ամէնէն կարեւոր առիթին, երբ թուրք զինուորները անակնկալօրէն խուժած են իր տունը, ձերբակալած են զինք եւ տարած են թրքական անյայտ հաւաքավայր մը: Յակոբ ձերբակալուած ատեն կողակիցին՝ Եսթերին ըսած է. «Դո՛ւն տէր պիտի կանգնիս զաւակներուս, պիտի ըլլաս թէ՛ մայր, թէ՛ հայր»: Ան կը շղթայուի եւ այդպէս կը տարուի ոստիկանատուն: Այս բոլորը կատարուած են երեք տարեկան Նորայրի ներկայութեան: Յակոբ այդ ձերբակալումէն ետք տուն չէ վերադարձած:

Նորայր ապրած է Մարգուանի մէջ մեծ բակով երկ-յարկանի տան մը մէջ: Տունը ունեցած է շատ մը սենեակներ, աղբիւր մը եւ լողանալու համար մեծ բաղնիք մը: Այս տունը եղած է պապեանական օճախը, ուր ապրած են Պէնօհանեան 7 ընտանիքներու մօտաւորապէս 60 անդամները: Տունը գտնուած է Հայկական թաղին մէջ եւ Հայկական եկեղեցիին մօտ, որ կոչուած է «Հայր եւ Որդի»:

1915-ի առաջին ամիսներուն թուրք ոստիկաններ հաւաքած են Մարգուանի երիտասարդներն ու տղամարդիկը եւ տարած են քաղաքէն դուրս անյայտ վայր մը, ուր բոլորը սպաննուած են: Ինչպէս յիշուեցաւ նախապէս Նորայրին ակնատեսութեամբ, Հայրը՝ Յակոբ, եւ հօրեղբայրը եղած են այս ձերբակալուածներէն: Անոնք շղթայակապ տարուած են եւ սպաննուած:

Մարգուանի մէջ մնացած են Հայ կիները, աղջիկները, տարեցները եւ երեխաները: Անոնք բոլորը յաջորդող օրերուն տեղահանուած են իրենց տուներէն եւ կարաւաններով քալած են քանի մը թուրք զինուորներու հսկողութեամբ, անորոշ ուղղութեամբ: Անոնք դարձած են գաղթական եւ ապա աքսորեալ: Անոնցմէ շատերը ճամբուն վրայ սպաննուած են, երիտասարդ աղջիկներէն շատերը առեւանգուած են եւ ուրիշներ հրապարակներու վրայ աճուրդով ծախուած են իսկ երեխաներէն շատերը թուրք ընտանիքներու կողմէ իւրացուած են: Ողջ մնացողները ապրած են գաղթականութեան արհաւիրքը, դառնութիւնն ու անօթութիւնը:

Եսթեր իր երկու զաւակներով, ձգելով իրենց հօրեանական տունը, մաս կազմած են Մարգուանի կարաւաններէն մէկուն: Եսթեր շատ դանդաղ եւ դժուարութեամբ կը քալէ, դուստրին ալ ձեռքը բռնած եւ կռնակին վրայ շալկած Նորայրը: Այս պատճառով անոնք կը կորսնցնեն



Նորայր Պէնօհանեան

կարաւանին հետքն ու կը քալեն մերթ ընդ մերթ ժայռի մը վրայ նստելով: Յանկարծ մթութեան մէջ պղտոր լոյս մը կը տեսնեն: Կը մօտենան լոյսին եւ իրենք զիրենք կը գտնեն դուռը քանդուած պզտիկ տնակի մը առջեւ: Ներսէն կը լսեն հեծկտանքով Հայերէն լեզուով հետեւեալը. «Ալ կը բաւէ, Տէր Աստուած, ամուսինս տարին, չեմ ուզեր ես եւ երկու զաւակներս զոհ երթալ թուրք զինուորներուն»: Եսթեր երկու զաւակներով ներս կը խուժէ եւ անակնկալի կու գայ, տեսնելով երիտասարդ մայր մը, գետին ինկած երկու երեխաներով միասին: Այս երիտասարդ մայրը երեխաներուն հետ աֆիոն խմած են, որպէսզի մահանան եւ թուրք ոստիկաններուն չյանձնուին: Երեխաներէն մէկը քիչ ետք կը մահանայ, իսկ երկրորդը եւ մայրը կը փսխեն ու կը վերագտնեն իրենց արթնութիւնը ու կ'ազատին մահէ: Եսթեր իր երկու զաւակներով դուրս կու գան այս սրտաճմլիկ տնակէն եւ կը շարունակեն անորոշութեամբ լեցուն իրենց ճանապարհը: 1-2 ժամ քալելէ ետք կը հասնին Մարգուանի արուարձաններուն մէջ գտնուող Ճիզուրիթ վարդապետներու եկեղեցին, որ հոյ գարակ դարձած է թուրք զինուորներուն կողմէ:

Նորայր մօրը եւ քրոջը հետ կը շարունակեն քալել եւ կը հասնին թրքական գօրանոց մը, որ շրջապատուած էր խոր եւ լայնատարած փոսով մը: Մեծ թիւով սպաննուած Հայերու ալյանդակ դիակներ կը տեսնեն այդ փոսին մէջ: Զօրանոցին պահակները կը ձերբակալեն եւ կը բանտարկեն զիրենք: Բանտի խուցին մէջ Նորայրին քոյրը քիթի արիւնահոսութիւն կ'ունենայ: Մայրը կասեցնելու համար աղջկան քիթի արիւնահոսութիւնը ոստիկանի մը մէկ ոսկի կու տայ գաւաթ մը ջուր ունենալու: Թուրք զինուորը հպարտանքով եւ հրապարակային կը միգէ եւ մէզով լեցուն գաւաթը կու տայ Եսթերին: Անոնք

կը գիշերեն զօրանոցի բանտին մէջ եւ յաջորդ առաւօտ իրենց շուրջ, զօրանոցին մէջ կը գտնեն հարիւրաւոր հայ-րենակիցներ: Թուրք զինուորները կը խոշտանգեն բոլոր հայ բանտարկեալները, կը բռնաբարեն հայ աղջիկները, կը խարազանեն տարեց մամիկները եւ տեղւոյն վրայ կը սպաննեն երիտասարդ հայերը: Յդի հայ կին մը, որ անկիւն մը նստած մտածումներու մէջ մխրճուած է, կ'ենթարկուի ոճրագործ թուրք զինուորներուն խոշտանգումին: Անոնք գրաւի կը դնեն հայ յդի կնկան ծնելիք զաւկին աղջիկ թէ տղայ ըլլալը: Զինուորներէն մէկը վայրագօրէն եւ գազանաբար կը նետուի յդի կնկան վրայ եւ խոշոր դանակով մը կը բանայ անոր փորը եւ դուրս կը հանէ ծնելիք մանչ մանկիկը: Խեղճ կինը արիւնջուայ, հոգին կ'աւանդէ: Ուրիշ մամիկ մը անկիւն մը քաշուած Սուրբ Գրքը կարդալուն համար կը սպաննուի: Եսթեր դառնալով երկու զաւակներուն կ'ըսէ. «Եթէ թուրք զինուորները զիս սպաննեն եւ զօրանոցը չըջապատող փոսը նետեն կը խրատեմ ձեզի, որ դուք ալ ինծի միանաք, դուք ձեզ փոսին մէջ նետելով»: Բարեբախտաբար այդպիսի բան չի պատահիր: Զօրանոց-բանտին մէջ գտնուող հայերուն մէջ եղած է Յովսէփ Քրիշեան անունով ուսուցիչ մը, որ մօտենալով հայ բանտարկեալներուն ըսած է. «Կը կարծեմ, որ մօտօրէն բոլորս ազատ պիտի արձակուինք եւ մեր տունները պիտի երթանք»: Յաջորդ օրերուն իրապէս Եսթեր եւ երկու զաւակները, մնացեալ բոլոր հայ բանտարկեալներուն հետ, ազատ կ'արձակուին: Եսթեր զաւակներուն հետ 2-3 օր քալելէ ետք կը վերադառնան իրենց տունը, որ այրած եւ քանդուած էր, այնպէս ինչպէս քանդուած եւ կամ այրած էին հայկական հարիւրաւոր տուններ:

Նորայր, մայրն ու քոյրը կ'ապաստանին հօրաքրոջը տունը, որ շատ չէր վնասուած, եւ ուր հօրաքոյրը աղջկան հետ կ'ապրէր առանձին: Հօրաքրոջը աղջիկը մի քանի օր ետք կ'առեւանգուի, եւ հօրաքոյրը կը մնայ առանձին:

Նորայրին մայրն ու քոյրը, որպէս ծառայ, կ'աշխատին թուրք մեծահարուստ ընտանիքի մը քով, իսկ ինք կը մնայ հօրաքրոջը քով: Շրջան մը ետք Եսթեր ջուլհակութեամբ ընտանիքին ապրուստը կ'ապահովէ: Ան բուրդ եւ թել կը գնէ եւ անձեռոցներ ու «խաւի» հիւսելով կը ծախէ, իսկ Նորայր եւ քոյրը կ'ընդունուին Մարգուանի ամերիկեան միսիոնարական բարեսիրական կազմակերպութեան որբանոցը, ուր արդէն կ'ապրէին հազարաւոր հայ որբեր:

Նորայր այս որբանոցին մէջ կը մեծնայ, հայերէն եւ թրքերէն լեզուները կը սորվի եւ կ'ուսննայ ուրախ եւ հանգիստ կեանք մը: Օր մը, երբ որբանոցէն դուրս ելլելով ընկերներուն հետ կը խաղայ որբանոցին մօտակայ դաշտին մէջ, անակնկալօրէն թուրք մը դանակով վրան կը յարձակի եւ կը փորձէ դաշունահարել զինք: Նորայր հրաշքով փախուստ կու տայ ոճրագործ թուրքին ձեռքէն եւ վազելով կը հասնի որբանոց:

1918-ին աքսորավայրերու մէջ ապրող մարգուանցիներէն շատերը, մօտ 3-4 հազար անձ, կը վերադառնան իրենց քաղաքը: Անոնք կը վերաշինեն իրենց տունները, եկեղեցիներն ու դպրոցները: Կամաց կամաց բնականոն կեանքը կը սկսի վերահաստատուիլ: Այս միջոցին Մարգուանի թուրքերէն շատերը կը վախնան, որ հայերը վրէժ կրնան լուծել իրենցմէ, ուստի անոնք կը մնան իրենց տուններուն մէջ ու կ'ապրին զգուշութեամբ:

Զինադադարին, անգլիացիներուն մեկնումէն ետք, Փրանսացիները կը ստանձնեն չըջանի իշխանութիւնը, սակայն անոնց ալ կեցութիւնը երկար չի տեւեր: 1921-ին

Փրանսացիներն ալ կը լքեն երկիրը, եւ կը սկսի հայերուն երկրորդ գաղթականութիւնն ու ջարդը: Հայ մարտիկները կը դիմադրեն եւ յարձակողականի կ'անցնին: Այս մարտիկներէն եղած են Զօրավար Անդրանիկի երկու հօրեղբայրները՝ Գագիկ եւ Մերուժան Օզանեանները: Տեղի կ'ուսննան զինուորական գործողութիւններ եւ թուրքերու սպաննութիւններ, սակայն հայերը տեղի կու տան: Թուրքերը կը թալանեն, կը կոտորուեն Մարգուանի հայերուն տունները: Կը քանդեն հայոց վերաշինուած եկեղեցիներն ու դպրոցները: Կը սպաննուին մեծ թիւով հայեր: 60-70 հոգի հաշուող Պէնօհանեաններէն ողջ կը մնայ միայն ինք՝ Նորայրը: Յոյները լսելէ ետք կարգ մը տարածայնութիւններ, թէ թուրքերը պիտի ջարդեն նաեւ զիրենք, նմանապէս կը լքեն Մարգուանը եւ կը մեկնին Պոնտոս:

Նորայրին մօրեղբայրը՝ Կարապետ Դանիէլեան, Մարգուանի մէջ ջարդի օրերուն իր տանը արկղին մէջ ունեցած է 100 կարմիր ոսկի: Կարապետ ձերբակալուելէ օր մը առաջ, այս 100 կարմիր ոսկիները կը յանձնէ ամերիկացի միսիոնար իր մտերիմ բարեկամին, քաջ գիտեմալով որ ինք պիտի սպաննուէր թուրք զինուորներու կողմէ, եւ կ'ըսէ անոր. «Պահէ այս ոսկիները քովդ, եւ եթէ ապագային Դանիէլեան մը ողջ մնայ Մարգուանի մէջ, անոր յանձնէ այս ոսկիները»: Ամերիկացի միսիոնարը կը ստանձնէ ոսկիները եւ կը պահէ զանոնք իր քով մինչեւ 1918:

Զինադադարին, երբ շատ մը մարգուանցիներ կը վերադառնան իրենց տունները, ան կը տեղականայ, որ Կարապետ Դանիէլեանին քոյրը՝ Եսթեր Դանիէլեանը, ողջ է եւ կը գտնուի Մարգուան: Կը փնտռէ եւ կը գտնէ զայն ու կ'ըսէ անոր. «Եղբօրդ 100 ոսկիները քովս են, Կարապետ Դանիէլեանը ժառանգ ձեզած էր զանոնք քեզի»: Ուստի ամերիկացի միսիոնարը կը յանձնէ 100 ոսկիները Եսթերին ու կը մեկնի:

1922-ին Մարգուանի Ամերիկեան միսիոնարական որբանոցի պատասխանատուները կ'որոշեն հայ որբերը փոխադրել Աթէնք: Ուստի հայ որբերը կը տանին նախ Սամսոն եւ հոնկէ նաւով կը հասցնեն Աթէնքի Զամբիոն պալատը, որ որբանոցի վերածուած էր Ամերիկեան Նպաստամատոյցին կողմէ: Այս որբերուն մէջ եղած է նաեւ Նորայրը:

1-2 տարի ետք նպաստամատոյցի որոշումով հայ որբերը Զամբիոն որբանոցէն կը փոխադրեն Եգիպտոս: Որբերուն փոխադրութիւնը տեղի կ'ուսննայ իտալական նաւով մը: Ծամբուն ընթացքին որբերը փոխադրող իտալական նաւը յարձակումի կ'ենթարկուի թրքական զինուորական նաւու մը կողմէ: Թուրքերը կը փորձեն ընկղմեցնել որբերուն նաւը եւ խեղդամահ ընել բոլոր հայ որբերը: Ամերիկեան ռազմանաւ մը օգնութեան կը փութայ եւ արգելք կը հանդիսանայ թուրքերուն ոճրագործութեան:

Հայ որբերով լեցուն իտալական նաւը ապահով կերպով կը հասնի Եգիպտոս: Այս որբերուն մէջ կ'ըլլայ Նորայր, իսկ իր քոյրը իրմէ առաջ արդէն հասած էր Եգիպտոս, նոյն կազմակերպութեան կողմէ, եւ աշխատած որպէս օգնական իտալացի ընտանիքի մը մօտ: Եսթեր, Նորայրին մայրը, կը մնայ Մարգուան առանձին մինչեւ 1929:

Նորայր Աղեքսանդրիա (Եգիպտոս) հասնելէ ետք հեղասահ կեանք մը չ'ուսննար: Անոր մայրը՝ Եսթեր, միշտ ենթադրութիւնը ունեցած է, որ Եգիպտոս ապրող կերպասավաճառ մեծահարուստ մարգուանցի եւ իրենց մօտիկ ազգական Դանիէլեան ընտանիքը օգտակար կը դառնայ Նորայրին նիւթապէս եւ բարոյապէս: Սակայն այդպէս



Տիկին Վարդուհի Պէնօհանեան իր հինգ զաւակներուն հետ՝ բժիշկ Անդրանիկ Պէնօհանեան, տիկին Շաքէ Կէօնճեան, Արամ, Վահէ եւ Արման Պէնօհանեաններ

չ'ըլլար: Նորայր Եգիպտոս հասնելէ ետք կը տեսնուի կերպասավաճառ Դանիէլեան ընտանիքին անդամներուն հետ, սակայն ոչ մէկ օժանդակութիւն կ'ունենայ: Նորայրին օգնութեան կը հասնի անծանօթ բայց համեստ ու բարեսիրտ հայ ընտանիք մը, որոնց մօտ ան կ'ապրի քանի մը ամիս: Շրջան մըն ալ կը մնայ հայ մայրապետներու մօտ:

Նորայր կը յաճախէ Պօղոսեան Ազգ. վարժարանը, ուր կը դառնայ յառաջագիտ աշակերտ: Ան շուտով կը սորվի հայերէն, ֆրանսերէն եւ թուաբանութիւն: Իր դպրոցական ծախսերը կը հոգայ Կամսարական անունով բարեսիրտ հայրդի մը: Երրորդ դասարանի հայերէն լեզուի ուսուցչուհին կ'ըլլայ տիկին Պօղոսեան, որ մեծ հոգատարութիւն կը ցուցաբերէ իրեն հանդէպ:

Երկու տարի ետք Նորայր դպրոցը կը լքէ եւ կը սկսի աշխատիլ Դանիէլեաններուն գործարանին մէջ, որուն բաժնեկից եղած են նաեւ Գալֆայեաններն ու Ալթունեանները: Նորայր շուտով կը հմտանայ իր գործին մէջ եւ կը ստանձնէ պատասխանատու պաշտօն: Պրն. Դանիէլեան կը շահագործէ Նորայրին որք ըլլալն ու նուազագոյն ամսավճարով կը վարձատրէ զինք տարիներ:

Նորայր ինքնաշխատութեամբ հայերէն եւ ֆրանսերէն լեզուները կ'իւրացնէ, ինչպէս նաեւ կը հետեւի մեքենագիտութեան դասընթացներուն:

Նորայրին մայրը՝ Եսթեր, Եգիպտոս կը հասնի 1929-ին: Ան կը մահանայ 1931-ին քաղցկեղի հիւանդութեամբ: Նորայր մօրը մահուան օրը յուզիչ դամբանական մը կը գրէ եւ յետագային կը տեղադրէ այդ գրութիւնը մօրը տապանաքարին վրայ:

Նորայր 17 տարի չարաչար աշխատելէ ետք Դանիէլեաններուն գործարանէն ներս, կը լքէ գործը եւ անմիջապէս կը հիմնէ իր սեփական մեքենագործութեան գործարանը: Նիւթապէս եւ բարոյապէս մեծ յաջողութիւն կը

գտնէ նոր ասպարէզին մէջ: Քանի մը տարուան ընթացքին կը զարգացնէ գործարանը եւ կ'ունենայ արդիւնաւէտ արտադրութիւն ու վաճառք: Ան կը դառնայ համբաւաւոր գործատէր եւ կ'ունենայ պատուաւոր համբաւ Եգիպտոսի մէջ: 1948-ին Նորայր կը գնէ Տիրան Օհաննէսեանի գամի գործարանը: Ան կը զարգացնէ այս հաստատութիւնը, որ կը գործէ մինչեւ իր մահը:

Նորայր 1942-ի սկիզբը, Սարգիս Փալանճեանի միջոցաւ, կը ծանօթանայ Սեբաստացի գեղադէմ, բարի, քաղաքավար, ամօթխած աղջկայ մը՝ Վարդուհի Մինասեան անունով: Աղջկան ծնողքը ակնցի, Եգիպտոս հաստատուած են 1895-ի ջարդի օրերուն: Վարդուհի ծնած է Եգիպտոս:

Նորայր եւ Վարդուհի կ'ամուսնանան 1942-ին: Անոնք կը բախտաւորուին չորս մանչ՝ Անդրանիկ, Արամ, Վահէ եւ Արման ու մէկ աղջիկ՝ Շաքէ զաւակներով: Բոլորն ալ ծնած են Եգիպտոս: Անդրանիկ ծնած է 1943-ին, Շաքէ՝ 1945-ին, Արամ՝ 1947-ին, Վահէ՝ 1952-ին, Արման՝ 1967-ին: Բոլորն ալ ամուսնացած են: Զաւակներէն երեքը՝ Անդրանիկ, Շաքէ եւ Արման հաստատուած են Մոնթրէալ, իսկ Վահէ մինչեւ օրս կ'ապրի Եգիպտոս:

Տիկին Վարդուհի, Նորայրին կինը, կը դառնայ ամուսնոյն աջ բազուկը: Ան կը հոգայ զաւակներուն հայեցի դաստիարակութիւնը եւ ամէն տեսակի պէտքերը:

Նորայր իր ամբողջ կեանքին ընթացքին եղած է Եգիպտոսի հայ գաղութին գործունեայ մէկ անդամը: Եղած է բարեսիրտ, ծառայատէր, բարեգութ ու հայրենասէր: Ունեցած է ազգանուէր ծառայութիւն: Ապրած է հայրենիքի տեսլականով:

1931-ին, երիտասարդ Նորայր, 22 տարեկան հասակին եղած է Եգիպտոսի նորաստեղծ «Վերածնունդ» միութեան ատենապետը:

Ինքնաշխատութեամբ սորված է փող (trumpet) նուագել եւ մաս կազմած է Երիտասարդական նուագախումբին: Եղած է Աղեքսանդրիոյ Հայոց եկեղեցւոյ հոգաբարձու, Քաղաքական ժողովի ատենապետ եւ Թեմական ժողովի ատենապետ:

Նիւթական մեծ նուիրատուութիւն (քսան հազար ամերիկեան տոլար) կատարած է 1995-ին Գահիրէի մէջ Հայաստանի դեսպանատան շինութեան ֆոնտին եւ եղած է մնայուն ու մտերիմ բարեկամը դեսպանատան:

Երբ Սպիտակի որբերը Եգիպտոս հրաւիրուած են, ինք մեծ ընդունելութիւն սարքած է իր տան մէջ եւ իւրաքանչիւր որբի ոսկի խաչ մը նուիրած է:

Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի Եգիպտոս այցելութեան 1956-ին, մեծ հիւրասիրութիւն մը սարքած է ի պատիւ վեհափառին, ինչպէս նաեւ մեծ ներդրում ունեցած է ՀՅԴ-ի «Յաւադդիմասէր» սրահին մէջ տեղի ունեցած Վեհափառ Հայրապետին ի պատիւ սարքուած պաշտօնական ընդունելութեան:

Նիւթապէս օժանդակած է կարօտեալ հայերուն, հայ դպրոցին եւ հայ եկեղեցիին:

Գանատա գաղթող եգիպտահայերուն նիւթապէս օգտակար եղած է եւ հոգացած անոնց օգնականային ճամբորդութեան ծախսը:

Նիւթապէս օժանդակած է Աղեքսանդրիոյ Հայ ծերանոցին: Հոն շինել տուած է սենեակ մը իր ծնողաց յիշատակին:

Աղեքսանդրիոյ հայ ժողովուրդը զինք կոչած են «Հայրիկ»: Իր մահուան օրը Աղեքսանդրիոյ հայերը ըսած են, թէ «Հայրիկ»-ը մահացաւ:

Հայաստան այցելած է երկու անգամ եւ հանդիպումներ ունեցած է բանաստեղծ Շիրազին հետ: Ան հմայուած է Շիրազով եւ սերտ բարեկամութիւն հաստատած է անոր հետ:

Նորայր գրած է «Մայիս 28»-ի եւ «24 Ապրիլ»-ի նուիրուած երկու բանաստեղծութիւններ, որոնցմէ «Ապրիլեան յիշատակ»ը կը հրապարակենք ստորեւ:

Նորայր մահացած է Աղեքսանդրիա, 9 Օգոստոս 2001-ին, 89 տարեկանին:

Մահէն մի քանի ամիս առաջ, հարցազրոյցի մը ընթացքին ըսած է. «Աստուած օր մը թշնամիին պատիժը պիտի տայ, չեմ ներեր ջարդարար թուրքին, ներելու հարց չկայ բացարձակապէս: Հայ ժողովուրդը մէկ մարմին, մէկ հոգի պէտք է ըլլայ միշտ, բոլորս պէտք է ըլլանք հայրենիքի կողքին: Ղեկավարներ կու գան ու կ'երթան, սակայն հայրենիքը կը մնայ: Կեղծ հայութիւն պէտք է ըլլայ: Կուսակցութիւնները իրենց տարակարծութիւնները մոռնալու են եւ գործելու են ի շահ հայրենիքին»:

Ողբացեալ Նորայրին կողակիցը՝ Վարդուհին, մահացած է Եգիպտոս, 31 Յունուար 2021-ին:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան
Մոնթրէալ, 15 Փետրուար 2025

Օգագործուած աղբիւրներ.

- 1.- Նորայր Պէմօհանեանի հարցազրոյցի խտասալիկը, Աղեքսանդրիա, 1962:
- 2.- Անճնական տեղեկութիւններ տիկին Ծաքէ Պէմօհանեան-Կէօնճանէն եւ պրն. Արամ Պէմօհանեանէն, Մոնթրէալ, 2019:

Ապրիլեան յիշատակ

Զօնուած յաւիտ կորած, անթաղ եւ անշիրիմ,
իմ շատ սիրելի ծնողացս նահատակութեան
յիսունհինգամեայ տարելիցին առթիւ

Սարսափազդու Ապրիլ է քսանչորս,
Սեւազգեստը՝ մուրհակն ի ձեռին,
Կանգնած է ընդդէմ մինուճար Ազգիս,
Մահասարսուռ մանգաղը սրած,
Սրբեց առյաւէտ սերունդները մեր...

Ոճրակամ դիւային ստուերը ցցած,
ձիւաղային մոլուցքէն տարուած,
Գազանային գիշատիչ կլափը բացած,
Յօշոտեց, լափեց մանուկ, աւետոր,
Անխնայօրէն սրածեց, փշրեց ու մրկեց...

Խաւարը պատեց երկիրը Հայոց,
Մթադենց Արեւը երկնի երեսին,
Կորան առյաւէտ ճիչերը մանկանց:
Կարկամած Մօրը արցունքը ցամքած,
Ան ալ միացաւ նահատակ որդւոյն...

Սաղայեւական սարսափի թուին,
Եփրատ ու Տիգրիս արեամբ ծովացան,
Նահատակ ազգս խորը սուղուեցաւ,
Նզովքի ձայներ երկինք բարձրացան,
Երկնային Գահը՝ հիմէն սարսեցաւ...

Շինականին մրմունջը յաւէտ խամրեցաւ,
Թորգոմայ Տունը աւերակ դարձաւ,
Կարին, Մուշ, Սասուն, ալլանդակուեցան,
Նեմրոթա սարին բուն էր, որ նստաւ,
Ողբաձայն կանչին Արամն զարթնեցաւ...

Վրէժ... Մարտագոռ... Ահազանգ տուաւ,
Սեւանայ ափին Պատգամն էր հասած,
Ծերուկ, պատանի զրահ հագուեցան,
Բահերու փոխան, սուրբը մերկացան,
Անարգ թշնամու դիմաց կանգնեցան...

Փաղանդներ կազմած առաջ ընթացան,
Փշրել, խորտակել, շղթաները մեր,
Յոյց տալ ոսոխին, ահեղ հորդանին,
Հեղեղանման արեան ծովընէն,
Կեանքի կոչուեցան, Մասեաց գազաթին...

Սարգարապատի բարձունքին վրայ,
Գրոհ տալով, մոլեռանդ դելին,
Դուրս շարտեցին լկտի վոհմակին,
Կերտելով լուսաշող օրերու օրը՝
Հիմնաքար դրին Մայիսեան թուին:

Աղեքսանդրիա, 21 Մարտ 1970
Նորայր Պէմօհանեան

Արիւնաթաթաւ լիճը



Մեծ ու փոքր, կին ու աղջիկ, առանց բացառութեան, բոլորը ենթարկուեցան հրէշային այս սպանողին: Ոմանք կը փորձէին խուսափիլ հատու կացինին հարուածէն եւ կ'ուզէին նետուիլ լճին սառն ջուրերուն մէջ:

Աքսորի ընթացքին բոլոր տեսածներէս այն մէկը, որ բազմաթիւ ուրիշներու կարգին ընդմիշտ դրոշմուած պիտի մնայ յիշողութեանս մէջ, այն տեսարանն է, զոր պիտի ջանամ նկարագրել կարելի հարազատութեամբ:

1915 թ. Սեպտեմբեր 15-ին, Խարբերդի մէջ պը. Նահուսէն բաժնուելէ ետք, ես եւ երկու ընկերակիցներս՝ Աբր[ահամ] Ամատօ եւ Տ. Արտիթի, շարունակեցինք մեր ճամբան դէպի Պիթլիս, ուր, Քրանսահպատակի հանգամանքով կ'ուղարկուէինք Զմիւռնիա, նախկին նահանգապետ Ռահմի պէյի հրամանով:

Շարունակեցինք մեր ճամբան երկու օր առանց մասնաշատուկ ոչինչի հանդիպելու, բացի հոս ու հոն ցրուած հայերու դիակներէն, որոնց կը հանդիպէինք գրեթէ ամէն քայլափոխի: «Մասնաշատուկ ոչինչ» կ'ըսեմ, որովհետեւ ընտելացած էինք արդէն այս տեսակ տեսարաններու, որոնց ամէն օր ականատես ըլլալու բերումով այլեւս ազդեցութիւն չէին գործեր անոնք մեր վրայ:

Երրորդ օրը, սկսանք շրջանցել Պաքիր-Մատէնի մերձակայքին ցցուող լեռները:

Լեռնանցքի մը վրայ, մարդկային բազմութեան մը ձայները լսեցինք: Մեր հարցումին թէ ի՞նչ էր այդ, ժանտարմները պատասխանեցին, որ նախօրէին երեք հազար հայեր անցած էին այնտեղէն եւ որ վստահաբար անոնք են, որ դադար առած են լիճին եզերքը: Հինգ վայրկեան անց, մեր աչքերով հաստատեցինք ժանտարմներուն ըսածը:

Արդարեւ, լիճին մօտենալէ ետք տեսանք մարդկային բազմութիւն մը, որ պտոյտ կու տար ամէն կողմ դառնալով. իմացանք որ այս խեղճ մարդիկը կը պատրաստուէին լիճը ճեղքել ու առաջ անցնիլ:

Մեր հոն հասնելէն ետք, շատեր փութացին մեր մօտ եւ անձկութեամբ հարց տուին, թէ ուրկէ՞ կու գայինք եւ արդեօ՞ք մենք ալ հայ ենք: Բաւարարութիւն տուինք իրենց հետաքրքրութեան եւ նստանք չոր հացով մեր քաղցը յագեցնելու համար:

Այս տեսնելով շատ մը կիներ փութացին մեզ հիւրասիրելու ասկէ-անկէ ճարուած ուտեստեղէնով:

Հագիւ ճաշը աւարտած, յանկարծ լիճին հանդիպակաց լեռնէն արձակուած հրացանի ձայներ լսեցինք: Այդ կողմ ուղղեցինք մեր հայեացքները եւ լեռներու գագաթին նշմարեցինք քիւրտերու բազմութիւն մը, որ չես գիտեր՝ ուրկէ եկան:

Հրացաններով եւ կացիններով էին զինուած բոլորը:

Հայերը, որ փորձառութեամբ գիտէին, թէ անողորմ են քիւրտերը, խուճապի մատնուեցան՝ տեսնելով զանոնք մինչեւ ատամները զինուած. շուտաւ իրարու կը նայէին եւ, բնազդաբար, մօտեցան ժանտարմներու խումբին, կարծես պաշտպանութիւն աղերսելու համար:

Յանկարծ լսեցինք նոր պայթումներ, որոնք կու գային լիճին աջ եւ ձախ կողմերը եզերող լեռներէն: Խեղճ հայերը այս անգամ ամբողջապէս կորսնցուցին իրենց քաջութիւնը, մտածելով որ վստահ, բոլորն ալ պիտի կողոպտուին: Խեղճերը չէին պատկերացներ, թէ ի՞նչ պիտի պատահէր քանի մը վայրկեան ետք...

Հրացանի առաջին զարկերուն, ժանտարմները իրենց տեղէն իսկ չշարժեցան. բայց երկրորդ զարկերէն ետք, նախազգալով որ ծանրակշիռ բան մը կը պատրաստուի, անոնցմէ մէկը, հաւանաբար գլխաւորը, ճերմակ թաշկինակ մը անցընելով հրացանին, ելաւ եւ գնաց քիւրտերուն կողմը:

Քանի մը վայրկեան անց, գլխաւորը եկաւ երեք քիւրտերու ընկերակցութեամբ ու միւս ժանտարմաներուն հետ կարճատեւ խորհրդակցութենէ մը ետք, տեսանք, որ անոնք առանձնացան հեռու տեղ մը: Ան, որ քիւրտերու գլխաւորը կը համարուէր, թնդացող ձայնով մը գոռաց. «Մահմետականները թող հեռանան»:

Անմիջապէս մէկ կողմ քաշուեցան բոլոր ժանտարմաներն ու հայերու կողմէ վարձուած ջորեպանները: Հայերը, սարսափահար աչքերով, կը հետեւէին այս սարքուած դաւադրութեան: Ինչ կը վերաբերի ինծի, ընկերներուս հետ խորհրդակցելէ ետք, դիմեցի ժանտարմաներու պետին իմանալու համար, թէ ի՞նչ պէտք է ընէինք մենք այս պարագային, նկատի ունենալով որ մենք ոչ հայ էինք եւ ոչ ալ մահմետական... Իբրեւ պատասխան ըսաւ, որ իրեն պէտք է յանձնէինք մեր ունեցած դրամները, եւ որ միայն այդ ձեւով մեզ ազատելու միջոցը կրնային գտնել: Անմիջապէս վեց մեծիտիէ վճարեցինք իրեն:

Ծիշդ այդ պահուն, երբ մօտեցած էինք թուրքերուն, քիւրտերը գահավիժեցին լեռներէն եւ միաժամանակ երեք կողմերէն շրջապատեցին հայերը, այնպիսի ձեւով մը, որ եթէ անոնցմէ մէկը խոյս տալ մտածէր, կրնար միայն լիճ նետուիլ:

Մենք փոռած էինք գետին, լիճին եզերքը, անգիտանալով ճշգիւ, թէ ի՞նչ տեղի պիտի ունենար մեր աչքերուն առջեւ:

Սաստիկ ճակատամարտի մը ընթացքին, երբ մարդիկ հազարներով կը մեռնին, այս կամ այն չափով բան մը կայ վսեմ, որովհետեւ երկուստեք իտէալի մը համար կը պայքարին եւ ամէն պարագայի տակ, կը կոռւին հաւասար գէնքերով: Մինչդեռ հոս, նման ոչինչ կար:

Եղածը պարզապէս կատղած գազաններու յարձակում մըն էր անպաշտպան ոչխարներու հօտի մը վրայ:

Տեսանք յանկարծակիօրէն հարաշուք փայլատակումը հազարաւոր կացիններու, որոնք միեւնոյն կշռոյթով կը բարձրանային ու կ'իջնէին գլուխներուն վրայ դժբախտ հայերուն, որոնք, խելագարուելու աստիճան ահաբեկուած, նուագագոյն շարժումն իսկ չէին ընել պաշտպանուելու համար:

Ծայր աստիճան սարսափի մատնուած, յուսահատական ճիշդ ու աղաղակ կը բարձրացնէին՝ շրջակայքի սարերը հիմնովին խախտելու աստիճան:

Արցունքը յորդառատ կը հոսէր մեր աչքերէն, եւ մեր սրտերը կը ճմլուէին ամէն անգամ, որ կացինները կը բարձրանային այս թշուառներուն վրայ: Անոնք որ փախուստի դիմելու փորձ մը կ'ընէին, կ'իյնային հարուածներուն տակ անողորմաբար: ... : Մեծ ու փոքր, կին ու աղջիկ, առանց բացառութեան, բոլորը ենթարկուեցան հրէշային այս սպանդին...:

Ոմանք կը փորձէին խուսափիլ հատու կացինին հարուածէն եւ կ'ուզէին նետուիլ լճին սառն ջուրերուն մէջ, որ հոն նուազ ահաւոր մահ մը գտնեն, բայց արդէն ջրափին կանգնած էին քիւրտեր՝ իրենց վստահուած չարաշուք պարտականութիւնը գործադրելու նպատակով: Անոնք կը կրակէին ու կը սպաննէին բոլոր այն թշուառ հայերը, որ կը փորձէին ջուրերուն մէջ լողալու ճամբով փրկուիլ գտնել:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»,
Փաստ. 883-44

Էրզրումի խաչելութեան ճամբան

Երեք կիներ՝ սարսափի մատնուած, իրենց երեխաները նետեցին գետին յորձանքներուն մէջ

Երկու օրուան արկածալից ու սարսափելի ճամբորդութենէ մը ետք, երրորդ կարաւանը ճամբան կը փոխէ ու կ'ուղղուի դէպի Երզնկա, անցնելով դիակներով եւ արեան ճահիճներով ծածկուած դաշտերէ ու կը հասնի Բաբերդի գիւղերէն Բլուր, որ արդէն ամայացած էր ու քանդուած:

Հոս երկու կորուստ ունեցանք, Գարապետը Հերթեւ գիւղէն եւ Սեթօն՝ Կան գիւղէն, երկուքն ալ կտոր-կտոր եղած եաթաղանի հարուածներէն:

Հասնելէ ետք գետին մօտ (Թրքական Սիեկիոր գիւղին մօտակայքը), ուր անճանաչելի դարձած դիակներ սփռուած էին, կարաւանէն երեք կիներ՝ սարսափի մատնուած, իրենց երեխաները նետեցին գետին յորձանքներուն մէջ:

Երզնկայի մօտենալէ ետք կարաւանը կանգնեցուցին հայոց գերեզմանատան մէջ, ուր բոլոր տարագրեալներու աչքին առջեւ ոչխարի մը պէս մորթեցին Վահան Մնացականեանը, որ արդէն խելագարուած էր Էրզրումի բանտին մէջ իր կրած չարչարանքներուն եւ գանակահարութեան հետեւանքով:

Հոս է որ կը գտնեն շուրջ 60 ընտանիքներ եւ կը զրկեն ուղղակի Քեմախ:

Քեմախի երեսփոխան Խալէտ պէյն էր սարքած դաւադրութիւնը,– բոլորը կը ջարդուին. ընկերացող ժանտարմաները վերադարձան արիւնաթաթաւ վիճակի մէջ:

Ոստիկան զօրաց հրամանատար Մուխթար պէյ, որ կարաւանին կ'ընկերանար, ճանապարհին անընդհատ մահու սպառնալիքով կը չարչրկէր Բարսեղ Ազարեանը, որպէսզի վերջինս յօժարի աղջիկը կնութեան տալ իրեն:

Իմացած ըլլալով որ նահանգապետ Թահսին պէյը Երզնկա կը գտնուի, կարաւանի մարդիկը կ'աղերսեն լալազին որ վերջ մը տայ իրենց տառապանքին. ու կը պատմեն ժանտարմաներու կողմէ գործուած սպանութիւններու մասին: Վալին անողորմ կ'ըսէ. «Ապահով եղէք, Ուրֆայէն անդին պիտի չանցնիք? ժանտարմաներուն հետ լաւ վարուեցէք»:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-73

Երզնկայի կոտորածները եւ երեսփոխան Խալէտի արարքները

Խալէտ պէյ, Քեմախի երեսփոխանը, որդի Թահիր փաշայի, Սեհրեզատէ ընտանիքէն։ Ընդհանուր զօրակոչէն ետք, զինուորական պաշտօն վարելու կոչուած էր Երզնկայի 4-րդ զօրաբանակին մէջ։ Ամիսներ ետք, կազմած էր արդէն հինգ հարիւր հոգիներու գունդ մը, ընտրուած Քեմախի եւ Երզնկայի ամէնէն արիւնարբու թուրքերէն։

Ընտրած էր Քեմախի եւ շրջակայ գիւղերու ամէնէն ուժեղ, երիտասարդ ու կորովի հայերը եւ ըսած, որ զիրենք կը զրկէ ամէն թաղուրիններու մէջ աշխատելու։ Յետոյ, զանոնք զրկեց Մամախաթունի մօտ գտնուող Սանսիւր-Տերէ, ուր եւ անգթօրէն սպաննել տուաւ բոլորը։

Դաւկներ գիւղէն Վարդան Գրիգորեանը ականատես գիւղացի մըն է։ Խալէտ, իրեն գործակից Շէյթան Պեքիրի հետ առեւանգեցին Սարգիս Տէր Ստեփանեանի աղջիկը՝ Բարբերունը. երեք օր բռնի պահելէ ետք, հօրը վերադարձուցին զայն։ Տեղահանութենէն 8 օր առաջ Խալէտ պէյ ձերբակալած էր արդէն հետեւեալ անձերը։

Սարգիս Տէր Ստեփանեան, Խաչիկ Զայճեան, Աբգար Բարսեղեան, Տիրան Թաշճեան, Հաճիպապ Փաշալեան, տոքթ. Տիրան Փափագեան, Տէր Վարդան Զաքարեան քահանան։

Ասոնք Խարբերդ զրկուեցան եւ իրենց ունեցուածքն ու բնակարանները բռնազրաւուեցան։ Իրենց տարագրուելէն ետք, երիտասարդներուն պարտադրուեցաւ երկրորդ անգամ փրկագին վճարել եւ յաջորդ օր Սաւսիւր-Տերէ տարուելով կոտորուեցան (Այս ձորին մէջ նախապէս ջարդուած էին Քեմախի հայերը)։

Ասկէ ութ օր ետք, Մայիսի 26-ին, սկսաւ ամբողջ հայ համայնքին տարագրումը։ Խալէտ պէյ եւ իր մեղսակիցները հրամայեցին 40-50 տարեկան բոլոր տղամարդոց, որ հաւաքուին հայոց գերեզմանատունը, ուր ժանտարմներն ու չեթէները սպաննեցին ամէնքը։ Ողջ մնացածներուն ստիպեցին առաջ շարժիլ Քեմախի ուղղութեամբ. ճամբան դադար առնել տուին Խալէտի հօրեղբօր Հաճի պէյի օթեւանը։ Հոս, շրջակայքի եօ-

թը գիւղերէն հաւաքուած քիւրտները եւ չեթէները յանկարծակի յարձակեցան անմեղ ու անպաշտպան հայերուն վրայ եւ վայրագօրէն կոտորեցին զանոնք։ Կարաւան մը կազմեցին այս ահաւոր սպանդէն փրկուած մարդոց մով, եւ անոնց միացնելով հայկական չորս գիւղերու (Դաւկներ, Գառնի, Թորդան եւ Գոմեր) բնակիչները, տարագրեցին զանոնք սպայ Մուսթաֆա էֆէնտիի եւ 10 ժանտարմներու ուղեկցութեամբ։

Երեք օրերու տաժանելի գնացքէ ետք, Խալէտ, ընկերակցութեամբ իր զարմիկին՝ Մազար պէյի եւ վանեցի Քեմալ պէյի, ինչպէս նաեւ Ասլան պէյ եւ չեթէյապետ Պող Աղա քիւրտներուն, ընդամենը 20 ոճրագործներ, եկան կողոպտելու կարաւանը։ Իրենց հետ տարին 60.000 թրքական ոսկեղրամ եւ վեց գեղանի աղջիկներ, որոնք տուն պիտի չվերադարձուէին այնուհետեւ։

Յաջորդ օր, այս նոյն մարդիկ վերադարձան եւ կարաւանի տղամարդիկը բաժնեցին կիներէն։ Կիներն ու երեխաները սկսան լալ։ Ասոր վրայ Խալէտ իբր փրկագին հազար ոսկի պահանջեց։ Հայերը հազիւ 500 ոսկի կարողացան հաւաքել ու վճարել իրենց ազատութեան համար, երբ յանկարծ նոր առաջարկ մը ներկայացուեցաւ, իրենց յանձնել Գառնիի գիւղացիներէն Տիգրան Յովակիմեանն ու Պետրոս Հազարեանը, որոնք Սահմանադրութեան առաջին օրերուն համարձակութիւնն ունեցած էին 3000 ոսկիով գնելու Խալէտի հօրեղբօր պատկանող հողեր։ Ասոր վրայ, խլեցին ու բռնի տարին եւ սպաննեցին զանոնք։ Ոճրագործները բարձրաձայն կը գոռային. «Ահա թէ ինչպէս կը գնուի Սատըք պէյի ստացուածքը»։

Տարագրեալները շարունակեցին իրենց գողգոթան մինչեւ Գանլը-Տերէի անցքը եւ այս սոսկալի նեղ կիրճին մէջ դէմ յանդիման գտնուեցան արիւնածարաւ խուժանի մը, բաղկացած չեթէներէ, զինուորներէ, ժանտարմներէ եւ թուրք ժողովուրդէ։ Կին, երեխայ, ծերունիներ, բոլորը զինուած կացիներով, սուրե-

րով եւայլն, եւ որոնք անողորմաբար ջարդեցին հայերը։

Կարաւանէն վերապրողները իրենց ճամբան շարունակեցին դէպի Արմտան. այստեղ անոնք կողոպտուեցան ու կոտորուեցան թուրք ջորեպաններու եւ ուղտապաններու ձեռքով։ Քիչեր միայն ազատեցան ու կարողացան հասնիլ Օվայի գայմազամութիւն։

Այս եղանակով է, որ հարուստ ու բարգաւաճ Երզնկա քաղաքի հայերը բնաջնջուեցան։ Այս ահաւոր սպանդէն փրկուածներու պարագան՝ հրաշքի համագոր բան մըն է։

Խալէտի գործած ոճիրներուն մէջ կան այնպիսիներ, որ բացառիկ կերպով դազանային են։ Առիթով մը ինք խոստովանած է, թէ բազմաթիւ ոճիրներ գործած է, բայց անոնց մէջ կան այնպիսիներ, որ իր քուէն կը փախցնեն։

Տարագրուողներու վերջին կարաւանը Երզնկայէն հեռանալու պահուն, երբ Խալէտ կը վերադառնար քաղաքին մօտ, Եփրատի ափին կառուցուած իր պալատը, կը նշմարէ ողբալի ձայներ արձակող մարդիկ մը։ Մօտենալով անոր, կը տեսնէ ժանտարմի մը հսկողութեան տակ գտնուող 7-800 հայ երեխաներ, ծայրայեղօրէն ողբալի վիճակի մէջ։ Բոլորը անոք ու անօգնական եւ սովահար էին, ոմանք արդէն մահացած, ուրիշներ՝ մեռնելու վրայ։

Խալէտ հարց կու տայ ժանտարմին, թէ ի՞նչ բանի կը սպասէ. «Պէյ էֆէնտի, կը պատասխանէ ժանտարմը, ծնողները սպաննեցինք եւ ասոնք ոչ կրնան առաջ երթալ եւ ոչ ետ դառնալ, ու ուտելու ոչինչ ունին»։

«Գետին մէջ թափէ», կը պոռայ Խալէտ. ժանտարմը սարսափի մատնուած այդ մտքէն, կը դառնայ ու կը փախչի։ Արիւնածարաւ երեսփոխանը երկար չի տատամսիր. մօտակայ գիւղերէն բերել կու տայ թուրքեր եւ քիւրտներ, ու բոլոր երեխաները գետ թափել տալէ ետք, բոլորովին հանգստացած, իր ճամբան կը շարունակէ։

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-50

Բաբերդցի աղջկայ մը արտաճմլիկ պատմութիւնը



Հետեւեալ ձեւով կը պատմէ իր արկածալից կեանքը ծագումով բաբերդցի օր. Գեղարդ Լուսիկեան, այժմ ապաստանած Վաղինակ Քահանայի տունը (Ֆիլիպէ)։

1915 թ. Յուլիս ամսուն, սուրինաւոր ժանտարմներ չըջապատեցին Բաբերդի երեւելի հայերուն բնակարանները, ձերբակալեցին տղամարդիկը եւ քարիւղի շիշեր տանելով այրեցին այն տունները, ուր ապաստանած հայերը կրնային գիմադրութիւն ցոյց տալ։ Ապա հրահանգեցին ընտանիքներուն պատրաստ ըլլալ յաջորդ առաւօտ ժամը 9-ին Երզնկա տաքերուելու համար։

Մեզի ընկերացող ժանտարմներ սկսան բռնաբարել աղջիկներն ու կիները։ Քաղաքէն հագիւ երկու ժամ հեռաւորութեան վրայ, գինեալ չեթէներ հասան բարբարոսութիւնը լրացնելու. տղամարդիկ սպաննուեցան մեր աչքերուն առջեւ. ամուսիններու պաշտպանութեան նպատակով զանոնք չըջափակող կիները եւս սպաննուեցան գազանաբար։

Քրդի, Զալակուր եւ Բլուր գիւղերու ճամբուն վրայ քիւրտերը խուժեցին կարաւանին վրայ ջարդէն վերապրած տարեց մարդիկն ու կիները կոտորելու համար. բռնաբարե-

ցին նաեւ կիները եւ առեւանգեցին գեղեցիկ կոյսերը։

Բլուր գիւղի միւտիրը բռնութեամբ կնութեան առաւ հօրեղբօրս՝ Պարգեւ Լուսիկեանի երեսուն տարու կինը, որուն երկու երեխաները մօտս ապաստանեցան։

Այդ պահուն էր, որ քաղաքի երեւելիներէն Յակոբ Աղապապեան, Զաքար Շէյրանեան եւ եղբայրը՝ Կարապետ, որոնք մինչ այդ ողջ մնացած էին ձեւով մը, դուրս բերուեցան կարաւանէն եւ փողկապով մը տառացիօրէն խեղդամահ եղան։

Քեմալ Պողազիի մօտ, Եփրատի եզրին մեզ կանգնեցուցին, հոս առանձնացուցին կիները, աղջիկները եւ երեխաները։

Երզնկայէն եկած թուրքերը ընտրեցին իրենց հաւնած կիներն ու աղջիկները։ Այս դժբախտները, թուով 400 հոգի, տարուեցան Երզնկա, միւսները թափեցին Եփրատի ալիքներուն մէջ։

Երզնկայի մէջ կային բազմաթիւ հայուհիներ, բերուած էրզրումէն եւ չըջակալէն. 300-ը ամուսնացուցած էին գինուորականներու եւ 200-ը քաղաքային պաշտօնեաներու հետ։ Ես բաժին ինկայ Շաքիր կոչուած դատաւորին, եւ վեց զարմիկներէս

միայն երկուքը կրցայ փրկել։

Երկու ամիս ետք, Կոստանդնուպոլսէն եկած հրահանգով, հաւաքեցին մեծ ու փոքր հայերը, մինչեւ 70 տարու, եւ թափեցին Եփրատի ջուրերուն մէջ։ Աչքերովս տեսայ թաւալող դիակներ, եւ ողջ մնացած տղոց տապալակիլը ջուրերու մէջ...

Արաբկիր հասնելուն մնացած էինք 15 հոգի միայն. ճամբան ուտելիք ոչինչ ունէինք. կը սնանէինք խոտով, իսկ թուրք գիւղացիներ կը պահանջէին աւարի իրենց բաժինը։

Շնորհիւ դատաւորին, յաջորդեցայ Երզնկա վերադառնալ կորսնցնելով Յարութիւն զարմիկս, զոր նետած էին Եփրատի ջուրերուն մէջ։

Դատաւորը Կալլիպոլիի մէջ պաշտօն ստացած ըլլալով, փոխադրուեցանք Կոստանդնուպոլիս։ Ահաւոր է նկարագրել այն ինչ որ տեսանք ճամբու ընթացքին.՝ իրար վրայ դիզուած դիակներ, արտերու վրայ ցրուած դիակներ, արեան լերդացած ճահիճներ, խեղդամահ ու կտոր կտոր եղած մարդկային մարմիններ... Ո՛հ, ահաւոր է, ահաւոր։

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-81ա

Կիրասոնի հայերուն բնաջնջումը

(Փախստական կնոջ մը պատումը)

1915 թ. Յունիս ամսուն է որ Կիրասոնի բոլոր հայերը ձերբակալեցին. առաջին նշանն էր հայերու դէմ նիւթուած դաւադրութեան: Սարսափի մատնուած կիները դիմեցին կառավարութեան, որ ժամանակաւորապէս ազատ թողուց բանտարկեալները՝ այն խոստումով, որ նշանակուած օրը պատրաստ պիտի ըլլան մեկնելու:

Քանի մը օր ետք, ծանուցուեցաւ, որ բոլոր հայերը պիտի հեռանան քաղաքէն: Մեզի հետ վերցուցինք մեր դրամն ու գոհարեղէնները:

Տարագրութիւնը սկսաւ: Մեր կարաւանը, որ չորրորդն էր, կը բաղկանար 1500 հոգիէ, որոնց 500-ը տղամարդիկ էին: Երկու օր անց հասանք Տարըքէոյ, ուր 30 պառաւներ առանձնացնելով հրացանազարկ ըրին: Սարսափը մեր հոգիներուն, շարունակեցինք մեր ճամբան: Երրորդ օրը հասանք Իքի-սու: Կարաւանը առաջնորդող հրամանատար սպան հրահանգեց տղամարդիկը անջատել: 80 ժանտարմներով շրջապատուած՝ անոնք զրկուեցան էյրի-սէլ լեռը: 24 ժամ անց, երեք ժանտարմներ վերադարձան եւ ըսին մեզի. «Ուրախ եղէք, եթէ դրամ տաք մեզի, ձեր ամուսինները պիտի վերադառնան. այսպէս է Կիրասոնի իշխանութեանց հրամանը»: Տուինք դրամով ու գոհարեղէններով լի մեր թաշկինակները: Բայց մեծ եղաւ մեր յուսախաբութիւնը, երբ միայն 8 հայեր վերադարձան...

Հինգերորդ օրը հասանք էյրիսէլ, որ սպանդին թատրն էր հանդիսացած. ժանտարմները շնականօրէն յարեցին. «Ահա ձեր դիակները»...

Շապին Գարահիսարի մէջ կողոպտուեցանք թուրք խուժանէն: Յաջորդ օր վրանաբնակ քիւրտներու գիւղի մը մէջն էինք: Գիշերը քիւրտերը մեծ խարոյկ մը վառեցին, սպառնալով մեզ կրակին մէջ նետել եթէ 2-300 ոսկի չտայինք. եւ իրողապէս գիւղացի տղեկ մը նետեցին բոցերուն մէջ. սարսափահար այս տեսարանէն՝ հաւաքեցինք եւ քիւրտներուն յանձնեցինք մեր մօտ մնացած դրամը:

Առաւօտուն կը հասնինք Գայլ գետի ափերուն. քիւրտերը առեւանգեցին մեր կարաւանին սիրուն աղջիկները: Արգիլուեցաւ մեզի անցնիլ գետին կամուրջէն. շատեր խեղդուեցան ալիքներուն մէջ: Ես եւ ընկերուհիներէս մէկ քանին լողալով ճեղքեցինք գետը: Երբ Ածպտեր հասանք, հրամանատար Հասան Սապրի 8 հայեր զատեց, ծնրադրել տուաւ զանոնք ու հրացանի բռնել տուաւ, ապա կիսամեռ վիճակի մէջ զանոնք նետել տուաւ նախօրօք փորուած փոսի մը մէջ: Ներկայիս այս ճիւղը կը պատի մայրաքաղաքի փողոցներուն մէջ: Երբ Քաւաքը կոչուած քարանձաւը հասանք, շրջապատուեցանք Կիրասոնէն եկած ոճրագործներով. ասոնցմէ ամէնէն նշանաւորներն էին՝

– Սարը Մահմուտգատէ էչըէֆ եւ եղբայրը Հասան, որոնք հարստացան հայերու պատկանող ունեցուածքով: Այժմ առեւտուրով կը զբաղին Կոստանդնուպոլսոյ մէջ: Կը բնակին Բերա, Շիշլի, Հաճի Մանսուր խան, 28:

- Քեաթիպ Ահմէտ
- Քեմալ, ոստիկան գորաց հրամանատար
- Հազարապետ Ֆայիք
- Սպայ Օսման եւ իր եղբայրը



Այս ճիւղները կողոպտեցին եւ ողորմելի վիճակի մատնեցին մեզ: Թալանէն զատ, սրիկայութիւնը ունեցան գոհարեղէն ու դրամի փնտռուած կատարելու կիներու մարմիններուն մէջ...

25 օր քալելէ ետք, յոգնած եւ ուժասպառ կը հասնինք Քուրու-Չայ, ուր ոչ մէկ հայ մնացած էր: Քիչ մը հեռուն, հազարաւոր դիակներ նշմարեցինք: Մեզի ընկերացող ժանտարմները մեղուի փեթակներ կը շրջեն մեր վրայ. մեղուախումբը կը յարձակի մեր վրայ, եւ ոճրագործները կը ծիծաղին յիմարաբար... Այս գիւղէն քանի մը ժամ հեռու գտնուող գիւղին մէջ, մեզի ընկերացող գայմազամը իր հրացանը պարպեց, իսկոյն տղամարդ, կին ու մանուկ քիւրտեր՝ կացիններով, սուրերով, մանգաղներով ու բիրերով զինուած, յարձակում գործեցին մեր վրայ. եւ սկսաւ սպանդը: Մեր կարաւանը, որ զանազան գիւղերէ հաւաքուած 500 հոգիէ կը բաղկանար, այնպէս ջարդուեցաւ, որ միայն 40 հոգի ազատեցաւ:

Վերստին ճամբայ կը հանուինք եւ կը հասնինք Տեմիր-Մաղարա կոչուած քարայրը, որուն «հայերու սպանդանոց» անունը տուին թուրքերը: Իրողապէս հազարաւոր հայեր խողովուած էին հոն: Միեւնոյն օրը հասանք Եփրատի կամուրջը: Պահակը դրամ պահանջեց, այլապէս սպառնաց գետը թափել մեզ: Արդարեւ, մեզ համոզելու նպատակով, 25 տարու հայ երիտասարդ մը նետեց գետին ալիքներուն մէջ: Բարեբախտաբար Երզնկայի ու այլ գիւղերու հայ տարագրեալները վճարեցին պահանջուած փրկագինը: Եփրատի ափերուն դադար առած ժամերու ընթացքին գետին ալիքներուն մէջ ծփացող հազարաւոր դիակներ տեսանք:

Մեր մեկնումի 38-րդ օրը հասանք Ակն: Թրքական որբանոցին մէջ 500 հայ տղաք կը գտնուէին: Այս բոլոր դժբախտ որբերը մահացան թունաւորուած՝ բժիշկին եւ զեղազործին կարգադրութեամբ: Դիակները նետուեցան Եփրատի մէջ: Այս բժիշկը, որուն անունը կ'անդիտանամ, անամօթաբար յայտարարեց. «Հայերը երկիր չունին. իրենց գերեզմանը Եփրատն է»:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր», Փաստ. 883-40

ԱՅԼԻՐԱԽ Է

Մեր գերդաստանի գաղտնի պատմութիւնը

Դարն է այլիրաւութեան, այսինքն այլընտրական ճշմարտութեան, որուն վերահասու կը դառնանք օրըստօրէ:

Վերջերս արխիւներս խառնշտկած ատենս գտայ տուփ մը, որ չեմ գիտեր ինչպէ՛ս ցարդ վրիպած էր ու՝ չադրութենէս: Ծնողքէս մնացած էր, եւ տակաւին առիթ չէի ունեցեր ծանօթանալու անոր պարունակութեան: Զգուշութեամբ բացի: Բացած չըլլայի: Ինչե՛ր ըսես չգտայ այնտեղ, ինչե՛ր՝ գերդաստանիս պատմութեան վերաբերեալ: Երկու մեծհայրերուս եւ երկու մեծմայրերուս երիտասարդական օրերն էին պատմուած այնտեղ, այլեւ մեր ժողովուրդի տարեգրութեան ամենէն երջանիկ շրջանը: Ինչպէ՛ս եղած էր, որ ես անտեղեակ մնացած էի այդ բոլորին, ու ամբողջ կեանք մը այդ ըսուածներուն ճիշտ հակառակին հաւատացած էի ու ըստ այնմ կողմնորոշուած իմ ազգային կեցուածքներուս ու գործունէութեանս մէջ:

Այսպէս, որքան, որ տեղեկացած եմ, հօրենական մեծհայրս բռնի զինուոր էր տարուած Տարսոն գոլեմ ուսանած տարիներուն, երբ արդէն վաղուց կորսնցուցած էր իր ծնողքը ու մնացած մեծօր խնամքին: Մինչդեռ, ինկ չէր գիտեր, որ շնորհիւ երկրի բարենպաստ պայմաններուն, իր ծննդավայր Հաճնոյ մէջ ծնողքին տրամադրուած է եղեր շքեղ բնակարան մը, իսկ իր ուսման ամբողջ ծախսը ստանձնած է եղեր պետութիւնը: Յետոյ, երբ զինուորական տարիքի էր հասած, իրեն առաջարկած են Պէյրութ ծառայել բանակին, ուր համեմատաբար նուազ պահանջկոտ պայմաններ կային, հո՛ն շարունակելու իր համալսարանական ուսումը՝ ծառայութեան զուգահեռ: Աւարտին, բանակը պատրաստակամութիւն յայտնած էր զինք՝ իբր յառաջագէ՛մ ուսանող, Ամերիկա ուղարկել՝ բարձրագոյն վկայականներու արժանանալու համար, վերադարձին ալ խոստանալով հրամանատարական առաջնակարգ պաշտօն մը: Մինչդեռ մեր գիտցածը այն էր, որ Պէյրութ իրեն արտօներ էին, որ մէկ կողմէն համալսարան երթայ, քանի որ լաւ յարաբերութիւններ ունէր իր մեծաւոր անգրագէտ սպաներուն հետ՝ գրելով անոնց անձնական նամակները ուղղուած իրենց ընտանիքներուն, բայց ուսումը աւարտելուն պէս կծիկը դրած, շուրջը Աղեքսանդրիա առած էր՝ նաւու մը վրայ պահուրտած: Իր ընտանեկան պարագաներէն՝ ոչ մէկ լուր: Որքա՛ն սխալ է եղեր մեր գիտցածը:

Հօրենական մեծմայրս ալ, գիտէինք, որ 1895–1896-ի ջարդերուն Ակնէն ճողոպրած ընտանիքի մը գաւազն էր, ծնած Հալէպ. մինչդեռ, անոնք փախստական չէին եղած, այլ իր հայրը տէր ու տնօրէնն էր լուսանկաչական մեծ հաստատութեան մը, երեք մասնաճիւղերով, թէ՛ իր ծննդավայրին մէջ, թէ՛ Հալէպ, եւ թէ՛ ալ Աղեքսանդրիա, ուր պիտի փոխադրուէին ընտանեօք աւելի ուշ: Գտած տուփիս մէջ կային թէ՛ իր Ակնի ապարանքին բանալին, թէ՛ ալ միւս մեծհօրս Հաճնոյ տան բանալին: Անոնք յաճախ կը վերադառնան եղեր ու կը վայելէին

իրենց հայրենական տուներու հարազատ միջավայրն ալ:

Մօրենական մեծհայրս Դանիէլ Վարուժանի համագիւղացի, դասընկեր, ամբողջ կեանքը շարունակած է թղթակցիլ իր բանաստեղ ընկերոջ հետ մինչեւ խոր ծերութիւնը երկուքին: Աղեքսանդրիա գործուղուած է իբր ուսուցիչ, չափազանց սիրած է քաղաքը, հոն ալ կանչած է նշանածը՝ Սամաթիա ծնած ու Վառնա իբր ուսուցչուհի պաշտօնավարած մեծ մայրս. ամուսնացած են 1915 ապրիլ 24-ին, խաչեղբայրութեամբ նոյն ինքն Վարուժանի: Մեծօրս քոյրերէն ոմանք ճամբորդել սիրող աղջիկներ եղած են, առիթով մը Փարիզ գացած են, անոնցմէ երկուքը սիրահարուած են ա՛յդ քաղաքին, հոն ալ մնալ որոշած են: Միւս երկուքը վերադարձած են Պոլիս՝ ամեն տարի այցելելու երթալով կամ մէկ քրոջ կամ միւսին:

Այդ մոգական տուփին մէջէն տակաւին ի՛նչ-ի՛նչ հետաքրքրական բաներ ալ ի յայտ եկան: Հայաստանի պաշտօնական քարտէջ մը, հայերէն ու թրքերէն, հրատարակուած Օսմանեան կայսրութեան պատկան նախարարութեան կողմէ, ուր հայաշատ վեց նահանգները որպէս մէկ ամբողջութիւն ներկայացուած են որպէս հայկական ինքնավար պետութիւն՝ հայերէնը ունենալով որպէս պետական առաջին լեզու:

Տակաւին բազմաթիւ գեղատիպ լուսանկարներ, մեծ մասամբ հայկական միջնադարեան եկեղեցիներու, մասամբ ալ այլ շէնքերու՝ դպրոցներ, գրադարաններ, պատմական բերդեր եւ այլն, բոլորն ալ վերանորոգուած, իրենց հի՛ն պատմական տեսքը վերստացած ու հռչակուած որպէս ազգային անհպելի ժառանգութիւն, արժանի՝ պետական մնայուն հոգածութեան:

Նաեւ երկար ցանկ մը բոլոր այն ձեռագրերուն, որոնք յատուկ ուշադրութեան արժանացած են, պետութեան ծախսով մաքրուած, նորոգուած, ամրակուռ կազմուած ու յատուկ նորակերտ թանգարաններու մէջ գետեղուած, անխորտակելի ապակեղարաններու մէջ:

Յստակ է հիմա մեզի համար, որ մեր ընտանիքը որեւէ հարստահարութեան, որեւէ հալածանքի, որեւէ զրկանքի չէ երթարկոած, ընդհակառակն, վայելած է կեանքի լաւագոյն պայմանները:

Նոյնը ըլլալու է շատ շատերու համար, բոլորի՛ս համար: Ի՞նչ եղեոն, ի՞նչ ցեղասպանութիւն:

Արթնցայ ընդոստ:

Երա՞ջ մըն էր: Շքե՞ղ երազ մը: Այլընտրական պատմութիւն մը:

Արթնցէ՞ք դուք ալ: Այդպիսի շողշողուն անդոյու-թիւններէ չխաբուիք:

Տակաւին երկա՛ր է ճանապարհը մեր առջեւ:

Պայքարի՛՛ ճանապարհը:

ՎԻԷԺ-ԱՐՄԷՆ

Տէր Զօրի կոտորածներէն փրկուած ականատեսի մը վկայութիւնը

Մեծ թիւով կիներ խրամի մը մէջ նետած եւ այրած էին քարիւղով: 2000 մահուկներ, ամէնէն մեծերը հազիւ թէ 10 տարեկան, այրած էին նոյնպէս:

Արեւելեան Անատոլիոյ մէկ ծայրէն միւսը կատարուած երկար եւ աներեւակայելիօրէն դժուարին ճամբորդութենէ մը ետք հասայ Տէր Զօր:

Ականատես եղայ ամէն օր հարիւրաւոր հայերու մահուան: Անօթութիւնն ու տանջանքները կը սպառնային ջարդերէն վերապրածներու կեանքին: Եւ սակայն, հակառակ այս բոլորին, հայերը կը փորձէին նոր կեանք ստեղծել:

Ձէքի պէյ, որ Տէր Զօրի միւթեսարըՖ կարգուած էր, նախապէս իբրեւ կառավարիչ իր ղեկավարած գաւառակին մէջ (Տիարպեքիւրի վիլայէթ) արտասովոր եռանդ ցոյց տուած էր գործուող գազանութիւններուն մէջ:

Ծագումով չերքէզ ըլլալով, չերքէզ ջարդարարներ գատած էր չերքէզական այն գիւղերէն, ուրկէ անցած էր Տիարպեքիւրէն Ռաս-իւլ-Այն ճամբուն վրայ:

Ձէքի պէյ կազմակերպեց 500 ոճրագործներէ բաղկացած չեթէներու գունդ մը, որուն հրամանատարութիւնը յանձնեց Սիւլէյման անունով չեչէնի մը, որ միեւնոյն ատեն կարգուած էր Սուվարի միւսիւր կայան մը՝ Ռաս-իւլ-Այնէն ծագում առնող ինչպէս գետին վրայ:

«Ինչպէ՞ս կը հանդուրժէք որ դեռ կ'ապրին հայերը, որովհետեւ եթէ հանգիստ ձգուին անոնք, տէր կը դառնան ձեր երկրին: Մնաց որ, ես եկած եմ անձամբ զբաղելու այդ խնդրով»: Պաշտօնական առաջին ընդունելութեան ընթացքին կատարուած այս յայտարարութիւնը շատ նշանակալից էր: Ան կը հաստատէր շրջան ընող զրոյց մը, ըստ որուն Ձէքի պէյի հրահանգուած էր բնաջնջել հայերը:

Երեք օր ետք, մուսնետիւր կը յայտարարէր, որ հայերը պէտք է անցնէին Եփրատի միւս ափը, սպառնալիք կարգադրով միաժամանակ բոլոր անոնց, որ հայեր կը պահէին իրենց մօտ:

Յիսուն հազար հայեր, մահուան սարսափը հոգիին մէջ, կը սպասէին իրենց փրկութեան ժամուն, մինչ Ձէքի պէյ, մտրակը ձեռին, կը հակէր անցքին վրայ:

Յիսուն հազար այս հայերը, չորս կարաւաններու բաժնուած, մէկ ամսուան ընթացքին տեղահանուեցան եւ կոտորուեցան: Ես չորրորդ կարաւանին մէջ էի: Ընկերացող չերքէզները կը վստահեցնէին մեզ, թէ նախորդ կարաւանները ապահով հասած էին Ռաս-իւլ-Այն, ուրկէ եւ առած էին Պաղտատ մեկնող շոգեկառքը: Մենք սարսափի մէջ էինք ի տես գետին վրայ ծփացող դիակներուն:

Փրկութեան յոյս չկար: Ձէքի պէյի հրամանին տակ գտնուող ջարդարար հրոսակները մեզմէ շատ հեռու կը գտնուէին: Նախ եւ առաջ ամէնէն երիտասարդները կ'անջատէին մեզմէ՝ ալիւրի պարկեր շալկելու պատրուակին տակ: Քիչ անց, պաթթումի ձայներ լսուեցան, ու վիրաւոր եւ մերկ մարդ մը վազեց պոռալով. «Գիտէ՞ք, կը ջարդեն»: Միշտ ըլլալով արդէն, մենք, վեց բարեկամներ, գետ նետուեցանք եւ հեռացանք: Պաթթումի եւ ողբի ձայներ կը հետեւէին մեզի:

15.000 թրքական լիրայի փոխարէն, Ձէքի պէյ Չերքէզ Սիւլէյմանին ծախած էր մեր կարաւանը:

Մեծ թիւով կիներ խրամի մը մէջ նետած եւ այրած էին քարիւղով: 2000 մահուկներ, ամէնէն մեծերը հազիւ թէ 10 տարեկան, այրած էին նոյնպէս:

Քննութիւն մը՝ Ռաս-իւլ-Այնի չերքէզ գիւղերուն մէջ, քաղաքակիրթ աշխարհին ցոյց պիտի տայ, որ մինչեւ իսկ թրքական [անցեալի] տարեգրութեանց մէջ նմանօրինակ ոճիրներ չեն գործուած բնաւ:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր», Փաստ. 883-10թ

Շապին Գարահիսարի կոտորածը

Փրկուեցան միայն մօտ 800 մահուկներ, որոնք իսլամացուեցան

1915 թ. Յունիս 1-ի նախօրէին, Շապին Գարահիսարի գրութիւնը անտանելի էր. ժանտարմները յանկարծական ու կոպիտ եղանակով մուտք կը գործէին հայոց տուններէն ներս, դասալիքներ ու զէնք փնտռելու պատրուակով: Կանխօք մատնանշուած մարդիկը կը ձերբակալուէին ու բանտ կը տարուէին: Այս մարդոց վրայ ի գործ դրուած գազանութիւնները սարսափի մատնած էին ժողովուրդը, որ ջարդերէն պաշտպանուելու համար քաշուած էր միջնաբերդ: Զինուորներու եւ ժանտարմներու յարձակումը 25 օր տեւեց եւ հազարաւոր մարդոց մահուան պատճառ դարձաւ: Այն ատեն կարգ մը հայեր փորձեցին փախուստի գիմել: Միջնաբերդին մնացած 6000 հոգին անձնատուր եղաւ, բայց եւ այնպէս կոտորուեցաւ: Աննկարագրելի է յարձակման անցած թուրքերու գործած բարբարոսութիւնը:

Փրկուեցան միայն մօտ 800 մահուկներ, որոնք իսլամացուեցան: Միեւնոյն ճակատագրին ենթարկուեցան Շապին Գարահիսարի գիւղերը: Պէտք է յատկապէս յիշատակել Բուրդ գիւղը, որուն բնակչութիւնը տարուեցաւ Եփրատի ափին, ուր գեղեցիկ աղջիկները զատուելով տարուեցան, Տէր Գուրգէն Քահանան խողխողուեցաւ ժողովուրդին աչքին առաջ, իր երկու աղջիկները բաժին ինկան Սապրի պէյին, իսկ ժողովուրդը զանգուածով թափեցին Եփրատի մէջ:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր»
Փաստ. 883-83

THE CHRONOLOGY OF RECOGNITION ...

1915	May 24	France, Great Britain and Russia Joint Declaration
1916	Feb. 9	U.S. Senate Concurrent Resolution 12
1919	Aug. 6	U.S. Congress An Act to Incorporate Near East Relief
1920	May 11	U.S. Senate Resolution 359
1965	Apr. 20	Uruguay Senate and House of Representatives Resolution
1975	Apr. 9	U.S. House of Representatives Joint Resolution 148
1982	Apr. 29	Cyprus House of Representatives Resolution
1984	Sep. 12	U.S. House of Representatives Joint Resolution 247
1987	Jun. 18	European Parliament Resolution
1993	May 5	Argentina Draft Law
1996	Jun. 11	U.S. House of Representatives Resolution 3540
1996	Apr. 25	Greece Parliament Resolution
1997	Apr. 3	Lebanon Chamber of Deputies, Resolution
1998	Mar. 26	Belgium Senate, Resolution
1998	Apr. 24	Council of Europe Parliamentary Assembly Declaration
1998	May 28	France National Assembly, Draft Law
2000	May 11	Lebanon Parliament, Resolution
2000	Mar. 29	Sweden Parliament, Report
2000	Nov. 7	France Senate, Draft Law
2000	Nov. 15	European Parliament Resolution
2000	Nov. 10	Vatican City Communiqué
2000	Nov. 16	Italy Chamber of Deputies Resolution
2001	Jan. 29	France Law
2001	Apr. 24	Council of Europe Parliamentary Assembly Declaration
2001	Sep. 26	Prayer of Pope John Paul II Memorial of Tzitzernagaberd, Yerevan
2002	Jun. 13	Canada Senate Resolution
2003	Aug. 20	Argentina Draft Law
2003	Dec. 16	Switzerland (Helvetic Confederation) National Council Resolution
2004	Mar. 18	Argentina Draft Law
2004	Mar. 26	Uruguay Law
2004	Mar. 31	Argentina Senate Resolution
2004	Apr. 21	Canada House of Commons Resolution
2004	Nov. 30	Slovakia National Assembly Resolution
2004	Dec. 21	Netherlands House of Representatives Resolution
2005	Apr. 14	Russia Duma Resolution
2005	Apr. 19	Poland Parliament Resolution
2005	Apr. 20	Argentina Senate Resolution
2005	Jun. 15	Germany Parliament Resolution
2005	Jul. 14	Venezuela National Assembly Resolution
2005	Sep. 15	European Parliament Resolution
2005	Dec. 15	Lithuania Assembly Resolution
2006	Apr. 19	Argentina Senate Special Statement
2007	Jan. 15	Argentina Law
2007	Jun. 5	Chile Senate Resolution
2010	Mar. 11	Swedish Parliament Resolution
2014	Nov. 26	Bolivia Parliament Resolution
2015	Apr. 9	Netherlands (Parliament Resolution)
2015	Apr. 21	Austria (Parliament Resolution)
2015	Apr. 24	Bulgaria (Parliament Resolution)
2015	May 6	Luxembourg (Chamber of Deputies Resolution)
2015	June 3	Brazil (Senate Resolution)
2015	June 18	Belgium (Parliament Resolution)
2015	Oct. 29	Paraguay (Senate Resolution)
2016	June 2	Germany (Parliament Resolution)
2017	April 25	Czech Republic (Parliament Resolution)

... AND 110 YEARS OF
DENIAL

TURKEY
1915-2025



2019	Apr. 24	Portugal (Parliament Recognition)
2019	Oct. 29	USA (House of Representatives Resolution)
2019	Dec. 12	USA (Senate Resolution)
2020	Feb. 13	Syria (National Assembly)
2021	Apr. 24	US President Joe Biden officially recognizes the Armenian Genocide
2024	Feb. 8	Mexico (Senate)

Տէր Զօրի սարսափազդու ջարդէն վերապրողի մը պատմութիւնը

Տէր Զօր հասանք 4-5000 հաշուող հայ տարագիրներու հետ: Հոն մնացինք մինչեւ 27 Յուլիս [1915]: Մեզ ուղարկեցին՝ Սուվար (արաբական միւստիրուծիւն), ուր 100.000 հոգի էինք:

Մեր չորս ժանտարմները մեզ յանձնեցին չերքէզական գունդի պետ Օսման պէյին: Այս միւստիրուծեան մէջ մնալու ութերորդ օրը հասաւ Տէր Զօրի միւստարըֆ Ձէքի պէյ:

Մուստարըֆը հրաւիրեց տարագիրները համախմբուելու ըստ իւրաքանչիւր խումբի ծննդավայր քաղաքի եւ հաւաքուելու վրաններուն տակ: Մուստարըֆի կոչին համաձայն, իւրաքանչիւր համախմբում պէտք է նշանակէր իր ներկայացուցիչը, որպէսզի դիւրացուէր շտապ կատարուելիք պարենաւորման գործը:

Երկու օր ետք, միւստարըֆ Ձէքի պէյ հրամայեց այս ներկայացուցիչներուն, որ կազմեն անուանացանկը բոլոր անոնց, որ 1000-1500 թրքական լիւրա ունէին, եւ գումարները անմիջապէս իրեն յանձնեն:

Յաջորդ օր, յայտարարուածին համաձայն ամէն մարդ գնաց 10 վայրկեան հեռու գտնուող Սուվարի քաղաքապետարան՝ յանձնելու համար իր մօտ գտնուող դրամը: Ոչ ոք վերադարձաւ: Բոլորը սպանուած էին գիշերը:

Միւստարըֆը տիրացաւ նաեւ զոհերու պահած դրամին: Կոտորուածներու ընտանիքները քաղաքապետարան կացին իրենց ամուսիններուն միանալու համար:

Գարա-Համգա անունով չերքէզ մը այս ընտանիքներու մէջէն ընտրեց երկու աղջիկներ, մէկը Տարտանէլէն, միւսը Թեքիրտաղէն: Գեղեցիկ եւ Լուսին Պալեան:

Ամբողջ կարաւանը ջարդուեցաւ: Քանի մը հոգի, որոնք վիրաւորուած էին միայն եւ թաքնուած դիակներու մէջ, հրացանազարկ եղան. միայն Արուսեակ, 10 տարեկան աղջնակ մը Ատաբազարէն, փրկուեցաւ այս ահաւոր նախճիրէն:

Միւստարըֆ Ձէքի պէյ կը մեկնի Շետատի, Մերկետէ եւ Հասիչէ, ուր չեթէներ կազմակերպելու նպատակով:

Այդ օր, հրոսակներու պետ Օսման պէյ ալիւր եւ դրամ կը բաժնէր չեթէներուն: Գիշերը կամ առաւօտ կանուխ զանոնք կը դրկէր Շետատի, ուր չարագործութիւններ կատարելու համար: Իրեն կեդրոն իրենց գործողութիւններուն, միւստարըֆը երեք գիւղեր ընտրած էր.՝ Շետատի, Մերկետէ, Հասիչէ: Հրոսակապետերը կը մնային Սուվար. գլխաւորներն էին՝ Ռաս-իւլ-Այնէն (Սաֆա գիւղ) Օսման պէյ, Շէյխ Սիւլէյման պէյ, Ապտիւլքերիմ պէյ, Մուհամմէտ պէյ եւ եղբայրը Մեհմէտ պէյ, թափառաշրջիկ արաբներ՝ Խալիֆ պէյ, Ճաւուտ պէյ, Հիւսնի պէյ, Շապան աղա, Մուհամմէտ պէյ, Գարա-Համգա (Թարիման գիւղէն):

Տակաւին կային ուրիշներ, որոնց անունները մոռցած եմ:

Այս հրոսակապետերը հաւաքեցին երիտասարդները եւ, հակառակ անոր որ իրենց պահանջած փրկագինը գանձած էին արդէն, զոյգ-զոյգ կապած զանոնք՝ տարին Սուվարի բլուրը եւ բոլորը կոտորեցին:

Ձէքի պէյ վերադարձաւ Կարապետին կառքով, հայ մը, զոր ճամբան սպաննել տուաւ եւ մինչեւ Սուվար ինք

վարեց կառքը:

Կիները կը դիմեն Ձէքի պէյին եւ կը պահանջեն իրենց ամուսիններն ու եղբայրները: Ձէքի պէյ կը պատասխանէ որ պիտի ուղարկուին Շետատէ, ուր իրենք ալ միանալով անոնց՝ պիտի մնան մինչեւ պատերազմի աւարտը:

Զրոյց կը շրջի, թէ Ատաբազարէն վեց տարեկան աղջնակ մը ողբաձայն «Մայրիկ, հայրիկ» կը գոչէր. սարսափահար աղջնակը կը պատմէ ի գործ դրուած գազանութիւններուն մասին: Հայերը, ի լուր աղջնակի պատմածներուն, ահազանգային վիճակի մէջ են:

Միւստարըֆ Ձէքի պէյ Շետատի, Հասիչէ, Մերկետէ մեկնած ըլլալով, բացի քանի մը հոգիէ Սուվարի մէջ մարդ չէ մնացած:

Այս ժամանակամիջոցին Ձէքի պէյ հայերը կը կանչէ մասնակցելու ճամբաներու շինութեան: Երիտասարդները կը մերժեն, բայց Ձէքի պէյ կը սպառնայ սպաննել գիշերը: Երիտասարդներու այն վճռական կեցուածքին վրայ, թէ իրենք ոչ զինուոր են եւ ոչ ալ նոր տարագրեալներ, միւստարըֆը կը պահանջէ, որ հարկւրապետ մը եւ 200 ժանտարմներ ուղարկեն Տէր Զօրէն: Ասոնց միջոցաւ հայերը բռնի կը տարուին Խապուր գետի ափին այնպիսի տեղ մը, որ իսկապէս թերակղզիի մը ձեւը ունէր: Ամէն կողմ ժանտարմներով եւ չեթէներով շրջապատուած՝ հայ երիտասարդները կը դիմադրեն (avec leur pistolet)(2) մառազներու ահեղ կրակոցներուն: Դիմադրութիւնը տեւեց մօտաւորապէս երեք ժամ. բոլոր հայերը մահացան այս յուսահատական կռուին մէջ:

Ձէքի պէյ Տէր Զօր փոխադրել տուաւ կոտորուածներուն բոլոր անասունները, կառքերը եւ իրեղէնները: Այս պահուն, թուրք երկու սպաններու ընկերակցութեամբ Ռաս-իւլ-Այն հասան երկու ամերիկացիներ. կ'ուզէին տեղեկութիւններ հաւաքել Տէր Զօր հաստատուած հայերու մասին: «Ձերքէզներն են, որ զանոնք ջարդեցին», կը պատասխանեն արաբները առանց տատամսելու:

Ձէքի պէյ, իր կարգին, կը վստահեցնէ ամերիկացիներն ու սպանները, որ ինք հայերը ղրկած է Խապուր գետի եզերքը, ուր թափառաշրջիկ արաբները կոտորած են զանոնք:

Այս անակնկալ այցելութենէն ազդարարուած, շրջապայութեան ելած է Տէր Զօրի եւ Ռաս-իւլ-Այնի երկրամասի տարածքին, վստահ ըլլալու համար թէ ամբողջովին բնաջնջած են հայերը: Այս նպատակով ալ խիստ խուզարկութեան ենթակայ է արաբներու պատկանող բոլոր վրանները, եւ որպէսզի ոչ մէկ կենդանի վկայ թողու, սպաննել տուած է արաբներու մօտ ապաստան գտած տարագիրներու բեկորները: Ձէքին Կոստանդնուպոլիս վերադարձած է հսկայական հարստութեան տիրացած:

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր», Փաստ. 883-81

- 1.- Թեքիրտաղը թրքական անուանակոչումն է Ռոտոսթոյի:
- 2.- Ֆրանսերէն՝ իրենց ատրճանակներով:

Տէր Զօրի տասն հազարներով նահատակներէն ողջ մնացողի մը վկայութիւնը

**Ձանազան տեղացի 300 ընտանիքներու հետ մեզ ալ խապուր գետի եզերքը տարին. օր մը
երթալէ յետոյ էրիկները մեզմէ զատելով, քիչ մը անդին տարին եւ մորթեցին:**

Նոյն վկան՝ Մարաշի հիւսիս արեւմտեան կողմը 18 ժամ հեռաւորութիւն ունեցող Կապան կոչուած գիւղէն է, եղբօրս Վարդիվառին աղջիկը Փիփէ Գարատեմիրճեանն է: Յիշեալը իր բնակած գիւղէն 300 տուն ժողովուրդին հետ արտագաղթուած ըլլալով, Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Պերսիկ, Ռաքքա եւ Տէր Զօրի ճամբով 60 օր տաժանակիր ճամբորդութենէ յետոյ, Տէր Զօրէն 9 ժամ հեռաւորութեամբ Միառին ըստած գիւղը հասած է: Նոյն գիւղին մէջ տարուան մը միջոցին արդէն իր 3 զաւակները սովի զոհ գացին: 1916 Յուլիսի վերջերը Պապէն, Մեսքենէն, Համամէն, Սապգայէն, Եփրատ գետին երկայնքը գտնուող, ինչպէս նաեւ Տէր Զօրի բոլոր գաղթականները հաւաքելով խապուր գետի եզերքը, Սուվար-Գալէսի անունով տեղը կը հաւաքէին: Միայն Ռաքքայի գաղթականները, չնորհիւ տեղացի ժողովուրդին եւ Ուրֆայի ու Տէր Զօրի միւլթեսարըֆներուն, 9-10.000-ի հայութիւն մը ազատեցաւ:

Նոյն ժամանակ յիշեալ Փիփէն, Միառինի մէջ գտնուող գաղթականներուն հետ դէպի Սուվար-Գալէսի ղրկուեցաւ: Անկէ վերջը Փիփէին կենսազրութիւնը հետեւեալն է:-

«Սուվար ըստած անիծեալ վայրը հասնելուս պէս տեսայ որ Միառին ղրկելու համար կարաւան կը գրեն: Մենք ալ արդէն ջորի մը ունէինք եւ ստիպուած գրուեցանք ու գացինք. սակայն դժբախտաբար 1 ամիս յետոյ մեզ նորէն Սուվար ղրկեցին: Այդ ժամանակ կարգ մը մարդիկ Շետաութէ եւ անկէ ալ Հասըրճէ ըստած կողմերը տանելով, կը մորթէին: Մորթուելու տարուած սեփքէթներու կերպը այսպէս էր. չհէններ ու չերքէզներ՝ գինուած, գաղթականները չփախցնելու համար, ամէն հնար ձեռք կ'առնեն, եւ ո՛չ մէկը չեն ձգեր որ վորաններէն հեռանայ, նոյնիսկ առանց հրամանի ջուր առնելու երթալը: Ասկէ զատ գետէն լողալով անցնողներուն ալ արգելք ըլլալու համար, միւս կողմը մասնաւոր



արարներ դրած են, որոնք փախչողները ետ կը բերէին: Իսկ երբ սպանդանոց ըստած վայրը բերէին, կողոպտելու եւ մորթելու գործը արարներու կը ձգէին:

Ձանազան տեղացի 300 ընտանիքներու հետ մեզ ալ խապուր գետի եզերքը տարին. օր մը երթալէ յետոյ էրիկները մեզմէ զատելով, քիչ մը անդին տարին եւ մորթեցին: Յաջորդ օրը մեզ, այսինքն կիներ ու երեխաներ, ճամբեցին եւ դիակներու վրայէն կոխելով անցանք դէպի Շետաութէ, ուր տեսանք անօթի-ծարաւ եւ առանց պատճառի գուռատած կիներ, որոնք մորթուելէ ազատուած էին: Այս կիներուն մէջ տեսայ եղբօրս կիներ թրուանտը, որ մէկ ձեռքը աւետարանը բռնած, իսկ միւս ձեռքն ալ ձիու եղունգ մ'առած՝ որ կրակին տաքցնելով ուտէր: Զիս տեսնելուն պէս սկսաւ լաւ եւ ըսաւ. «Երեք օր է ի վեր այս ձիու եղունգով կ'ապրիմ. մէկ հատիկ սրտահատորս մեռաւ. մեռեալներուն չեմ ցաւիր, սակայն իմացայ որ ուրիշներ ինձմէ ծածուկ անոր դիակը գողնալով՝ եփած ու կերած են: անոր կը ցաւիմ...»:

Հետեւեալ օրը հոն գտնուած արարներէն ձեռքս կտոր մը հաց անցաւ. այդ հացը անօթութենէ լացող

աղջկանս տուի: Պատիկը երբ հացը ձեռք առաւ սկսաւ ինծի նայելով լալ. «Աղջիկս, ինչո՞ւ կու լաս, ինչո՞ւ հաց չես ուտեր» ըսելուս պէս, աղջիկս հիւսնալի ու սրտաճմրկ հայեացքով մը երեսս նայեցաւ. «Ա՛խ, մայրիկ, երբ դուն հոս չէիր, այս կիներ իր զաւակը մորթեց եւ հիմա ալ կ'եփէ որ ուտեն. դո՛ւն ալ զիս պիտի մորթես...»:

Ասոր վրայ աչքերս արցունքով լեցուն աշխատեցայ որ համոզեմ սրտահատորս. դժուարութեամբ յաջողեցայ եւ հացը անոր կերցուցի: Սոյն տեղը արարները ցորեն բերելով օխան մէկ ոսկիի սկսան ծախել. սակայն դժբախտաբար չհէնները երբ լսեցին այս խնդիրը, սկսան չարչարել կիները «խնդրը կեաւուր, սենտէ փարա վար իքէն, նէ իջին պիզ իսթեր վէ արարքէն կէօթերմէտին. տէ՛ պաքալըմ լիւրալարըն կերեսինի չըգար» ըսելով(1): Սակայն երբ իմանային թէ մէկը ոսկի կլլած է, անոր փորը պատուելով աղիքները կը խուզարկէին: Այս տեսնելով կիները դրամը իրենց թշնամին համարելով, զայն գետը կը նետէին՝ փոխանակ շուններուն յանձնելու:

Քսան օր այս խայտառակութիւնները շարունակելէ յետոյ «Ձեզ հայրենիքնիդ պիտի ուղարկենք»

ըսելով ճամբայ հանեցին. այս միջոցին ումանք գեղեցիկ կրներ ու աղջիկներ առնելով կը փախչէին. ումանք ետ մնացողներուն կը սպաննէին. իսկ ումանք ալ պզտիկ տղաքները տնկելով նշան կ'առնէին: Այս պահուն կառքով Մեքսիկէն շատ պզտիկ տղաներ բերին եւ քիչ յետոյ ամէնքը մորթելով գետը թափեցին, մինչդեռ այս պզտիկները իբր թէ «Ձեզ որբանոց կը տանինք» ըսելով բերած էին:

Այս միջոցին չերքէզ մը զիս աջ ոտքէս զարկած էր, սակայն աւելի մեծ չարարանքի չենթարկուելու համար ամբողջ ուժովս կը վազէի որ ընկերուհիներէս ետ չմնամ: Վերջապէս մեզ բլուրի մը քով տանելով՝ սկսան խումբ-խումբ դատել եւ ամէն մէկը տեղ մը տանիլ: Այս կարգադրութիւնը երբ տեսանք, սկսանք ուրախանալ եւ այլեւս մեռնելով պիտի ազատուէինք տանջանքէ: Իմ խումբս ալ քիչ մօտեցին լայն քարայրի մը քով տարին եւ սկսան վար նետել: Այս միջոցին աղջկանս ձեռքը բռնած կարգիս կը սպասէի. կարգը եկաւ մէյ մը հեռացանք (?) ես եւ աղջիկս. յետոյ աչքս բացի տեսայ որ արար մը զիս կողոպտել կ'ուզէ, եւ ես ալ ինձմէ առաջ նետուած դիակներու վրայ իյնալուս շատ վնասուած չեմ. եւ աղջիկս ալ ինձ պէս: Երբ կողոպտող արարը տեսայ ամենայն սիրով անոր հնազանդեցայ աղաչելով որ վերջ տայ իմ կեանքին. սակայն փոխանակ մեռցնելու, սուրով ուսիս եւ կողիս երեք հարուած տուաւ ու գնաց: Ասոր վրայ բոլորովին ինքզինքս կորսնցուցի եւ միայն ձայն մը լսեցի. «Մայրիկ, մայրիկ, ո՞ւր ես դուն, չըսի՞ր թէ քեզ չեմ թողուր... արդեօք ինչ ո՞ւր թողիր...»: Աղջիկս էր բայց ինչ օգուտ: Ո՛չ խօսքով եւ ոչ ալ մարմնով անոր պատասխանելու անկարող էի: Տակաւին մինչ այժմ այդ Ձայնը ականջիս հնչելով՝ զիս կ'անհանգստացնէ...

Ծիշդ այս պահուն արարները գեղեցիկ մերսինցի աղջիկ մը քարայրէն դուրս հանելով՝ կ'ուզէին իրենց վրանները տանիլ: Աղջիկը իր բոլոր ուժով մաքառելով՝ ըսաւ. «Եթէ կ'ուզէք զիս մեռցուցէք, ես հետերնիդ չեմ գար եւ Մահմէտ չեմ ճանչնար: Այս խօսքերը լսելով արարները աղջկան ձեռներն ու սրունքները կտրելով, սկսան մորթը քերթել: Ասկէ յետոյ աղջկան քարայր նետեցին: Այդ պահուն կիսամեռ աղջիկը հետեւեալ խօսքերը սկսաւ. «Աստուած իմ, գիտեմ որ մեր վրէժը անոնցմէ պէտք է լուծես. սակայն ներեցէք անոնց: Ով

Աստուած, որովհետեւ ինչ ըրածնին չեն գիտեր, ո՛վ Աստուած: Հոգիս քեզ առ...» եւ մեզի դառնալով՝ «Քոյրե՛ր, ձեզմէ մէկը թող կեանքիս վերջ տայ. այլեւս չեմ կրնար դիմանալ...» ըսաւ: Վերջապէս արար մը զինք մեռցուց:

Դիակներու մէջ չորս օր մնալէ ետք, արար մը քարայրին մէջ մտնելով ըսաւ. «Կրնե՛ր... Ձեր մէջ ողջ մնացողները թող գան: Զիրենք վրանները պիտի տանիմ»: Ես ճարահատ ստիպուեցայ այս արարին հետեւիլ. ինձմէ զատ ութ կրներ եւս եկան: Զիս իր վրանը տարաւ, հագուստ տուաւ եւ երեք ամիս վէրքերս դարմանեց: Միւս կիներուն վէրքերը անբուժելի ըլլալուն՝ զանոնք Եփրատ գետը նետած էին:

Բոլորովին աղէկնալէ յետոյ զիս տանող արար Շէմմար ցեղէն արարի մը տուաւ երկու ոչխարի փոխարէն:



Այս ցեղը թափառիկ ըլլալով ձմրան ատեն Պաղտատի մօտերը գացին. եւ ես ալ առիթ մը գտնալով փախայ ու Պաղտատ գացի. հոն պաշտօնեայի մը տունը ծառայ մտայ: Գործերս շատ ծանր ըլլալուն համար արդէն ձանձրացած էի. օր մը փախչելու նպատակաւ տունէն դուրս ելայ, եւ մարդ մը ինծի հանդիպելով ըսաւ. «Դուն հայ գաղթականներէն չե՞ս. եկուր քեզի եկեղեցին տանիմ. քահանային յանձնեմ». այս խօսքը լսելուս պէս ուրախութեամբ հետեւեցայ մարդուն. բայց մարդը զիս քաղքէն դուրս հանելով՝ թափառիկ արարի մը գօռով յանձնեց: Գարնան պատճառաւ այս արարներն ալ Սընճար լեռան կողմը գա-

ցին, իսկ ես նորէն առիթ մը գտնելով փախայ եւ երեք օրէն Սընճարի մէջ գտնուող սուրիացիներուն մէջ ինկայ: Հոն հանգստացայ. սակայն կերպով մը դարձեալ արարի մը ձեռքը ինկայ, որու քով տաժանակիր աշխատութեանց ենթարկուեցայ: Օրական երկու շաբաթ փայտ եւ գետին մեծ թուղումներով(2) ջուր բերել ստիպուած էի: Հակառակ պարագային ամէն տեսակ արգահատանք ինծի համար էր: Վերջը ասոր քովէն փախչելով՝ Մերտինի ճամբան բռնեցի: Մերտինի քով հողագործի մը պատահեցայ. արաբերէն Մերտինի ճամբան հարցուցի, մինչդեռ քերտ է եղեր. երբ հայ ըլլալս հասկացաւ, զիս յետաձգեց եւ իր վրանը տարաւ: Երեք ամիս չարաչար աշխատցնելէ յետոյ, երեք այժով ծեր քերտի մը որպէս կրն ծախեց: Ես անկից ալ փախչելով՝ Մուսիպինի քով երկաթուղագործի վրայ աշխատող քանի մը մարդոց քով ինկայ: Հոն իտալացի Տէօնիչի անունով մարդու մը հետ ամուսնացայ: Հոն տարիուկէս մնացի: Անգլիացիք Մուսուլ եկան, որի պատճառաւ Ալի Հասան փաշան էրկանս գերի բռնեց եւ զիս ալ որպէս գաղթական՝ երկաթուղով Հալէպ դրկեց: Մինչդեռ ինձ նման ուրիշ հայ աղջկայ մը ամուսնացած իթալիանէ մը(3) 30 ոսկի առնելով, կրնն ալ որպէս իթալիէն փաստորթին մէջ արձանագրեց եւ միասին ապրելու հրաման տուաւ:

Երբ ձարապուս հասայ, հօրեղբայրս Կարապետ Քեթէնճեանի Պերեհիկ ըլլալը հասկցայ եւ անոր քով գալով, այժմ միասին Այնթապ կը գտնուիմ: Ազգականներուս թիւը 98 ըլլալով, 2 հատին ուր գացած ըլլալէն լուր չունիմ, իսկ մնացեալ 96-էն միայն ես ողջ եմ: 95-ը գաղթի ատեն արտերով ու դաշոյններով մեռած են: Եւ հիմա տակաւին ի՞նչ ըլլալիքէս լուր չունիմ: Միայն Աստուծմէ կ'աղաչեմ որ համբերութիւն տայ ինձ:

Փիփէ Քարաւեմիրճեան
[1919]

«Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար – ԺԲ. հատոր», Փաստ. 1407-49

1.- Թորքերէն՝ «Անհաւատ խոգ. մօտդ դրամ ըլլալով հանդերձ, ինչո՞ւ համար մեր պահանջած ու փնտած ատեն ցոյց չտուիր. օ՛հ, տեսնեմ մնացած ոսկիները հանէ»:

2.- Դոյլերով, տիկերով:

3.- Իտալացիէ մը:

Հայերը Ալաուիթի պետութեան մէջ



Հայերը Լաթափիոյ մէջ.– Ներկայիս գոյութիւն ունի 1,500 գաղթական հայութիւն, որուն 1,350-ը Լուսաւորչական իսկ մնացեալները բողոքական եւ կաթոլիկ են: Տեղացի 35 ընտանիքներ կ'ապրէին նախքան պատերազմը, սակայն տեղահանութենէն յետոյ 5-6 ընտանիքներ միայն վերադարձած են, ասոնք ալ մեծ մասամբ արաբացած, տոհմային սովորութիւններն լեզունին կորսնցուցած են:

Կիլիկիոյ պարպումէն յետոյ հայերու թիւը բարձրացած է մինչեւ 2,500-ի, բայց գործի նուազութեան պատճառաւ, մաս առ մաս հեռանալով մնացած են մի միայն 1,500 հոգի, գրեթէ մեծ մասամբ արհեստաւորներ, որ կը ճարեն իրենց օրապահիկը եւ տեղացի տարրին համակրութիւնը կը վայելեն: Կառավարութեան մէջ ունինք 5-6 պաշտօնեաներ: Լաթաքիոյ մէջ կան 1 Հայ բժիշկ, 3 ատամնաբոյժ եւ 1 ղեղադործ:

Հայերը Լաթաքիոյ մէջ ունին

Երուսաղէմապետկան Ս. Յակոբեանց վանքը, որ մեծապէս օգտակար եղած է հասնող գաղթականութեանց: Այս վանքը կը ծառայէր ժամանակին հետիոտն Երուսաղէմ ուխտի գացողներու իր օթեւան եւ կը կոչուէր Հոգեւոր, մինչեւ այսօր տեղացիք զայն կ'անուանեն քէզուն: Ունի մօտաւորապէս 200 տարուան հնութիւն, ըստ հետեւեալ արձանագրութեան՝ որ եկեղեցւոյ դրան կամարին վրայ փորագրուած է:

«Աստուծով եւ յայտնեամբ Ս. Երուսաղէմի Տեառն Թէոդորոսի ճգնազգեաց վարդապետի, այս հոգեւորական արար յիշատակ իւր արհեստի վաստակէն վասն հոգւոյն իւրոյ եւ ծնողացն հոգւոյն որ է ծնողեամբ Հալէպցի եւ սննդեամբ Ստամպուլցի, արհեստիւ սէտէֆճի Յակոբ ամուսնաւ կոչեցեալ Սրբոյ Յակոբայ Միաբան եւ վայելողքդ ասացէք Աստուած ողորմի: Ամէն»

Ի թիւ Ռ.Բ.Ճ.Դ.

Թուականէս մօտ քսան տարի առաջ Մեսրոպ պուպլի անուն Իգմիւրցի ազգային մը, որ այդ շրջանին ըէթի տնօրէնութիւնը կը վարէր, գեղեցիկ գաղափարը ունեցած է վանքը գրաւելով ըէթի պաշտօնատան վերածելով՝ ազատելու համար զայն զանազան ոտնձգութիւններէ եւ փրկելու մէջ, ու այսպէսով ուղղակի իր հսկողութեան տակ առնելով ոչ միայն փրկած է զայն, այլ եւ կատարած է պէտք եղած անհրաժեշտ նորոգութիւնները: Թաղէսս վրդ. Եկանեան իր արձանագրութեանց մէջ մեծ գովեստով կը խօսի այդ ազգասէր հայուն մասին:

Վանքը կը կառավարուի Երուսաղէմի Միաբանութեան կողմէ նշանակուած վարդապետի մը կողմէ, որ կը կրէ Հոգեւոր Տեսուչ անունը եւ կը զբաղի ոչ միայն վանքի մատակարարութեամբ, այլ կը վարէ տեղւոյն կրօնական եւ ազգային գործերը՝ տեղ-

ւոյն ազգային մարմնոյն հետ համախորհուրդ:

Մինչեւ 1926 թուականը Լաթաքիոյ հոգեւոր հովիւները միեւնոյն ժամանակ կը կրէին «եւ Առաջնորդ Անտիոք» անունը եւ իբր ալ՝ մասամբ ալ ենթակայ էին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, բայց այս վերջնոյն եւ Երուսաղէմի Պատրիարքարանի միջեւ տարակարծութեանց հետեւանքով, տեղւոյս հոգեւոր հովիւները ձեռք քաշած են Անտիոքէն՝ իրաւասութեան խնդիր յարուցանելով:

Առաջնորդարանի արձանագրութիւններէն քաղելով, վանքը ունեցած է 10-է աւելի տեսուչներ՝ մինչեւ գրադարանով մը 200 կտոր գրքերով՝ որմէ փոքր վճարումներով կ'օգտուի հասարակութիւնը: Միութիւնը կը ստանձնէ գրեթէ բոլոր ազգային հանդէսներու կազմակերպութեան հոգը, ան նախաձեռնարկը կ'ըլլայ պարբերական ներկայացումներու, որոնց հասոյթին երկու երրորդը կը յատկացնէ Ազգ. վարժարանին:

«Կրթասիրաց»ը կարելի է նկատել ազգային վերին մարմնոյն օժանդակ ուժը: Այս միութիւնն ալ վաւերացուած է եւ Ազգային իշխանութենէն եւ կառավարութենէն:

«Ասպարէզ» թատերախումբ.- Ամաթէօս դերասաններէ կազմուած այս միութիւնը կու տայ պարբերաբար ներկայացումներ, որոնց հասոյթը կը բաժնուի Ազգ. վարժարանի եւ «Կրթասիրաց»ի միջեւ:

ՀՄԸՄ եւ ՀԲԸՄ.- Այս երկու միութիւնները կազմուեցան ներկայ տարւոյ մէջ եւ միայն ունին հինգական անդամնոց վարչութիւններ:

Ազգային վարժարան.- Տեղւոյս Ազգային վարժարանը բացուած է առաջին անգամ եկեղեցւոյ մէջ, զուրկ բոլորովին առողջապահական միջոցներէ եւ դպրոցական պիտոյքներէ: Այդ թուականէն ի վեր աստիճանական յառաջդիմութեամբ, փոխադրուած է վանքին 7 սենեակնոց յարկարածինը եւ օժտուած է Ազգ. վարժարանի մը անհրաժեշտ կազմածներով:

Տարեկան պիւտճէն է 240 օսմ. ոսկի, ունի նախակրթարանի եւ մանկապարտէզի բաժին 260 աշակերտ-աշակերտուհիով եւ 8 ուսուցիչ-ուսուցչուհիով: 1926-27 տարեշրջանին առաջին անգամ վարժարանը տուաւ 10 շրջանաւարտներ նախակրթարանի բաժնէն:

Տեղական կառավարութիւնը յատկացուցած է 2 ուսուցչուհի արաբերէնի եւ Ֆրանսերէնի դասաւանդութեանց համար, իսկ Բ. Գօմիսէրութիւնը կը վճարէ տարեկան 2,000 Ֆրանք, մնացեալը կը հոգացուի գրեթէ տեղական միջոցներով:

Տոււն.- Ժողովուրդին մօտ 500 անձ, հիւղական շինած կը բնակին վանքին ընդարձակ պարտէզին մէջ, որ ունի առանձին շրջաբակ եւ մուտքի դուռ:

Այս փոքրիկ թաղամասը ըլլալով վանքին տեսչին անմիջական հոկոյութեան տակ, ունի անհրաժեշտ կարգապահութիւնը եւ մաքրութիւնը:

Հայերը Պանեասի մէջ.- Լաթաքիայէն 40 քմ. հեռու, Թրիփօլի գացող խճուղիին վրայ Միջերկրականի եզերքի այս փոքրիկ քաղաքին մէջ ունինք 60 անձ գաղթական հայութիւն, բոլորն ալ արհեստաւոր,

պատուաւոր կերպով կը ճարեն իրենց օրապահիրը:

Անցեալ տարի ձեռնարկներ եղան պատիկ վարժարան մը բանալու, սակայն նիւթականի պակասը արգելք եղաւ ձեռնարկին: Լաթաքիոյ քահանան եւ հոգեւոր տեսուչը իրենց այցելութեամբ երբեմն կը կատարեն այս ժողովուրդին հոգեւոր պարտականութիւնները:

Հայերը Թարթուսի մէջ.- Լաթաքիայէն 90 քմ. կրկին Թրիփօլի խճուղիին վրայ Միջերկրականի եզերքին պատմական այս քաղաքին մէջ եւս կան 60-ի չափ հայեր, չկայ ոչ դպրոց, ոչ եկեղեցի, կան 30-ի մօտ դպրոցական աշակերտներ փողոցները թափառող: Իրենց պսակը, մկրտութիւնը եւ ննջեցեալներու թաղումը կը կատարէ օրթոթօքս քահանան: Տարին 1-2 անգամ Լաթաքիոյ հոգեւորականները կ'այցելեն բացառաբար միթարելու տեղւոյն հայութիւնը: Ժողովուրդը մեծ մասամբ արհեստաւոր է եւ գոհ իր վիճակէն:

Հայերը Արամոյի եւ Ղընեմի-էի մէջ.- Այս երկու գիւղերը զուտ հայաբնակ են, ժողովուրդը հոն հաստատուած է երկար տարիներէ ի վեր, մեծ մասամբ արաբախօս են: Երկու գիւղերն ալ ունէին իրենց ուրոյն եկեղեցին նախքան պատերազմը եւ այժմու Լաթաքիոյ քահանան կը կատարէր պաշտամունքը: Գաղթականութեան շրջանին եկեղեցիները աւերուեցան շրջակայ գիւղացիներու կողմէ, բայց Ֆրանսական իշխանութիւնը 400 սուրիական վճարած է անոնց վերաշինութեան համար:

Արամոյի եւ Ղընեմիէի հայութիւնը, որ կը հաշուէ մօտ 400 անձ, թէեւ բարքով արաբացած՝ սակայն ունի ազգային զօրաւոր զգացում:

Մեռելները կը թաղուին առանց քահանայի, իսկ մկրտութիւնք եւ պսակները կը սպասեն Լաթաքիոյ քահանային պատահական այցելութեան:

Այս ժողովուրդը տարիներէ ի վեր ալ ու ձախ խնդրանք կը ներկայացնէ ունենալու իր քահանան եւ վարժարանը:

Ընկալէի եւ Սաֆիթայի մէջ եւս ունինք տասնեակ մը հայ ընտանիքներ, որոնք կ'ապրին մանր վաճառականութեամբ եւ զանազան արհեստներ ի գործ դնելով:



Սուրիահայ Տարթուսի, 1929

Յակոբ եւ Ահարոն Սաչազլեան եղբայրները՝ մեր խոնարհ եւ անյայտ հերոսները

Յակոբ եւ Ահարոն Սաչազլեան եղբայրները՝ մին հայ որբերու փրկարարը, միւսը՝ «Նեմեսիս»ի հաշուարկի չբացայայտուած պատասխանատուն

Յակոբ եւ Ահարոն Սաչազլեան եղբայրները մեր խոնարհ եւ անյայտ հերոսներուն մեծ փաղանգին կը պատկանին, որոնց տարած գործունէութեան վրայ տակաւին ըստ արժանւոյն լոյս չէ սփռուած: Յակոբ Սաչազլեան Հայոց Յեղասպանութեան տարիներուն ծանօթ էր Զրմպա Եագուպ անունով, եւ որպէս ծպտեալ իսլամ, թուրքերուն ճանկերէն եւ մահուան ճիրաններէն փրկած է հայ որբեր, կիներ եւ մահուան դատապարտեալներ: Իսկ Ահարոն Սաչազլեան «Նեմեսիս»ի չբացայայտուած մասնակիցն էր, որուն գործունէութեան մասին նոյնիսկ իր ընտանիքի անդամները անտեղեակ էին: Անոր թողնուած Մարիան Մեսրոպեան Մաքքըրդին, վերջերս իր մեծ հօր արխիւները բացայայտելով ԱՄՆ-ի մէջ հրատարակած է «Սրբազան արդարադատութիւն. հայկական «Նեմեսիս» գործողութեան ձայներն ու ժառանգութիւնը» գիրքը, պատմելով իր մեծ հօր՝ Ահարոնի դերակատարութեան մասին: Սաչազլեան այս եղբայրները, թէեւ իրարմէ անկախ ու աշխարհի տարբեր ցամաքամասերու մէջ, երկուքն ալ հայրենիքի ու հայ ժողովուրդի ողիսականները ապրելով, անվերապահօրէն, նոյնիսկ իրենց սեփական կեանքն ու ընտանիքը կորսնցնելու վտանգը աչքի առած, նուիրուած են ազգին ծառայութեան վսեմ գործին:

Յակոբ եւ Ահարոն Սաչազլեան եղբայրները բնիկ մալաթիացի են: Անոնց հայրը՝ Յարութիւն, ամուսնացած է երկու անգամ, առաջին կնոջմէն ունեցած է երկու մանչ եւ մէկ դուստր (որոնց անունները չեն յիշուած), իսկ երկրորդ կնոջմէն ունեցեր է երեք մանչ զաւակներ՝ Ստեփանը, Յակոբը եւ Ահարոնը: Յարութիւն եղած է նշանաւոր ճարտարապետ եւ շինած է թրքական մզկիթ մը, որ կը յիշուի «Արթին ամուսն ճամբն» անունով: Ստեփան փոքր տարիքէն կը հաստատուի Ամերիկա, ու կը

մնայ ամուրի, կը զբաղի արեւելեան գորգերու վաճառականութեամբ ու կը մահանայ 1940-ին:

Յակոբ Սաչազլեան

Յակոբ (որուն ծննդեան թուականը անյայտ է), 1895-1896-ի Մալաթիոյ կոտորածներուն ընթացքին հեռացած է Մալաթիայէն, գացած է Ատանայի կողմերը ու հաստատուած Տէօրթ Եոլի (Չորք Մարգպան.- խմբ.) Զամպա գիւղը (որուն կը վերագրուի իր Զրմպա Եագուպ կոչուիլը հետագային), հոն ամուսնացած է տեղաբնակ թրուանտա Պասմաճեանին հետ եւ ունեցած հինգ զաւակ. մէկ մանչ՝ Ասատուր եւ չորս դուստրեր՝ Էլիզապէթ, Մարի, Մարկօ եւ Ուսաննա: Զբաղումով եղած է կառապան եւ Համաշխարհային Ա. պատերազմին 1914-1918-ին ընտանեօք աքսորուելով անցած են Սագա գիւղէն, ապա Հալէպ, Մարա, Համամ եւ Ռագգա: Ռագգայի մէջ արաբ ժանտարմաներէն Ուահիտ Անթիլ կը փախցնէ Ուսաննան, կը տանի Հաֆսէրճի գիւղը ու բռնի իսլամացնելով ու Ֆաթմա անունը տալով իրեն կ'ամուսնացնէ իր եղբորը հետ:

Ուսաննա առաջին ամիսները կ'անցընէ դառնութեամբ եւ խոր ընդվզումով, բայց հետզհետէ կ'ընտելանայ միջավայրին հետ եւ կ'ունենայ 3 մանչ՝ Մահմուտ, Ահմատ եւ Ալի: Ուսաննա սակայն յամառօրէն կը մնայ հայախօս եւ անոր զաւակներէն Ալին հայացած է, անունն ալ փոխած եւ դարձած Ժան Պոյաճեան, հաստատուած է Պէյրութ եւ ամուսնացած հայուհիի մը հետ, բախտաւորուած է հինգ զաւակներով, որոնք յաճախած են հայկական վարժարան Պէյրութի մէջ:

Մինչ Յակոբ Սաչազլեան պատերազմի այդ տարիներուն, երբ հաստատուած էր Ռագգա եւ կը շարունակէր իր գործը որպէս կառապան, կառքով մարդիկ կը փոխադրէ Մալաթիայէն Ատանա, Այնթապ եւ Հալէպ, ճամբուն վրայ հանդիպած



Յակոբ Սաչազլեանի ընտանիքը

հայ աքսորեալները եւ հայու բեկորները փրկելով: Ան այս հայահալած ման եւ հայապահպանման գործունէութիւնը կը տանի ամէն վտանգ արհամարհելով: Ան ժամանակաւորապէս կրօնափոխ կը դառնայ, կ'ընդունի իսլամութիւնը երեսանց, կը ճանչցուի որպէս Զրմպա Եագուպ եւ իր շրջանակի թուրքերուն վստահութիւնն ու համակրանքը կը շահի, որպէսզի ազատօրէն կարենայ իր հայահալած գործունէութիւնը կատարել: Ան նաեւ կ'որդեգրէ երկու հայ որբեր:

Ըստ Իգմիտի նշանաւոր Առաջնորդ լուսահօգի Տ. Ստեփանոս Եպիսկոպոսի գրաւոր վկայութեան, Յակոբ Սաչազլեան թշնամիներուն ձեռքէն ազատած է շատ մը հայ մտաւորականներ, կիներ աղջիկներ ու երիտասարդներ, աքսորի դատապարտուածներ: Ան Հալէպի Ամերիկեան հիւպատոսին՝ պրն. Ճէքսընի միակ վստահելի անձը եղած է, եւ անոր միջոցաւ անապատներուն մէջ մահուան դատապարտուած հարիւրաւոր հայ խլիկներուն ամերիկայէն զրկուած դրամական օգնութիւն հասցուցած է: Եպիսկոպոսը կը յիշատակէ նաեւ, որ Սաչազլեան ամբողջ երեք տարի իբրեւ թափա-



Բնիկ Մալաթիացի Յակոբ Սալազլեան 1898-էն ի վար հաստատուած Տէօրթ-Եօլ (Զամպաք) Հալէպ աքսորւած: Չի կարենալով տոկալ իր ազգակիցներու կրած առապանքներուն ու ջարդերուն, ունեցած է հետեւեալ գործունէութիւնը:

Յակոբ Սալազլեան 1914-1918 պատերազմէն առաջ Տէօրթ-Եօլի մէջ առևտուրով կը զբաղուէր: Աքսորուելով Հալէպ գաւէն յետոյ, լքելով անձնական և ընտանեկան ամէն հանգստութիւն, նետուեցաւ անապատի կառավարի զօրութիւն և վասնդաւոր գործն իր միջոց գործածելով իր ազատարարի նպատակի ու ճամբորդեց ամէն կողմ համայնակով անապատէն սղատելով հարիւրաւոր յայտնի և անյայտ հայ խլիւղիկներ: Իր գործունէութիւնը կարելի է դասել հետեւեալ կերպով:

1— Թշնամիներուն ձեռքէն ազատած է չոտ մը հայ մտաւորականներ, կիներ, աղջիկներ և հրիտասարդներ:


2— Աքսորի դատապարտուածներ:

3— Հալէպի Ամերիկեան քօնսիւլ Պր. Վ. Բ. Նիկ. միակ վատահիւլին եղած և իր միջոցաւ անապատ երաւ մէջ մեռնելու դատապարտուած հարիւրաւոր հայ խլիւղիկներուն գրամական օգնութիւն հասցուցած է, զրկուած գումարներուն համար օրինական ստագիրներ բերելով գօնսիւլին: Այս գրամներուն իր վարձք առած գումարն ալ իր ճամբուն հանդիպող անտէր և անօգնական ընտանիքներուն կը բաժնէր:

4— Ամբողջ երեք տարի թափարականի ոտտ և ամեն վտանք ուղք առած կը ճամբորդէր քաղաքէ քաղաք գիւղէ գիւղ: Իր գործունէութեան վայրերը եղած են Համա, Մաարա, Դասթօն, Մէզքէնէ, Պապ, Համամ Ռազզա, Սապգա, Թէլապիլատ եւայլն, միշտ հայ գաղթականներ ազատելու համար:

5— Իր այս հայրենասիրական ուշիատանքին և գործունէութեան համար բազմաթիւ անգամներ ձերբակալուած բանտարկուած և անասելի չարչարանքներու ենթարկուած է բայց միշտ ալ զազմապահ մնալով, մեծ մեծ գումարներ կաշառք տալով ազատած է, և շարունակած իր սիրելի գործը:

Մենք ստորագրեալներս կ'ընդունինք և կը հաստատենք վերը գրուածները, և զայն կը ստորագրենք:



Մերազ Թատրեան	4	Մարիամ Աղջարեան	2
Մուշեղ	3	Մարեամ Տէրպետրոսեան	3
Համբարձում Եանիկեան	4	Սրբուհի Տաթրեան	1
Քէրտի Պէնկեան	3	Արմենուհի	1
Յակոբ Խարամանեկեան	1	Իսկուհի	1
Խաչատուր Գրողեան	1	Վիքթորիա	1
Մկրտիչ Մարախրոսեան	2	Զարուհի Թօզաթլեան	1
Մարիամ Գիւլօղլեան	4	Վարդանուշ	3
Արուշ	1	Պաղտասար Ճերմակեան	1
Մէլիսաս Կարաքէշիշեան	2	Պետրոս Աղվէնեան	3
Յովհ. Կարասարգիսեան	1	Սարգիս Կարապաշեան	3
Պօղոս Կարաեան	1	Արուսեակ Կարապետեան	3
Կարապետ Միւսիկեան	3	Մաքրուհի	3
Խլիւր Կրամեան	5	Տուտու Վարդանեան	1
Տիգրան Դանիշեան	4	Ովսաննա Գրլաշեան	3
Յովհաննէս Մկրտիչեան	3	Մարգրիտ Քէօրօղլուեան	3
Յարութիւն Ստեփանեան	3	Աննա Տէյրմէնճեան	2
Յակոբ Թօնճուեան	3	Իսկուհի Փափաղեան	1
Պօղոս Գօճապաշեան	6	Յակոբ Տէյրմէնճեան	2
Յովհաննէս Թէրճանեան	3	Խանարճ. Սարգիսեան	1
Արքայամ Պետրոսեան	3	Յարութ. Յարութլեան	2
Օ'նիկ Յարութլեան	5	Սարգիս Պաղլեան	3
Մարտ Օննիկեան	2	Յովնան Վարժապետեան	4
Տիւրահի Տաղլեան	2	Մարիամ Մերապեան	7
Սարգիս Եղուպեան	2	Ափիկ Ափիկեան	7
Սուրբ Զապիւսեան	4	Զարուհի Կարաքէշիշեան	3
Յակոբ Խաչիկեան	5	Էվէթկցի Աննա	4
Սեդրակ Մանուկեան	4	Այս գրութիւնը եւ այս մարդուն նոտարը կը հաստատենք:	
Նիկա Պառուսեան	2	Սարգիս Տէմիրճեան - ՀԲԻ	
Ազարիկ Գօրքմապեան	2	Ջոս Արարեան մէլէն ազատեց:	
Զարուհի Վարժապետ	1	Մ'րի Տէյրմէնճեան	4
Զարուհի Պալտաեան	1		

Ահաւասիկ իզմիտի նշանաւոր Առաջնորդ լուսանորդ Ստեփաննոս Եղիսիպոս (Քափակիմեանի վկայութիւնը, ստորագրուած Սալազլեանի նախորդ փոփոխութեան լուսանկարին վրայ: Դո՛ւք եմ քեզմէ զաւաթն Յակոբ Սալազլեան: Մարտի հայոց աքսորին երեք տմիս յետաձգուելուն պատճառը գուցէ բլլալով նամակը Ազարուշաքեան Կարապետ Էֆէնտիկին տանողը, Մարտի հրչապը կ'առանձնէ քեզ:

Աղգին ծառայ
Ստեփաննոս Եղիս. Քափակիմեան

ռական հայորդի ամէն վտանգ աչք առած կը ճամբորդէ քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ՝ Համա, Մարա, Գասթօն, Մեսքենէ, Պապ, Համամ, Ռազգա, Սապգա, Թէլապիատ եւ այլուր հայ գաղթականները փրկելու, որոնց համար բազմաթիւ անգամներ ձերբակալուած է, բանտարկուած եւ անտանելի չարչարանքներու ենթարկուած, բայց միշտ ալ մեծ-մեծ գումարներ կաշառք տալով յաջողած է ազատիլ ու շարունակել իր գործը: Եպիսկոպոսին այս գրաւոր վկայութեան տակ ստորագրած են իր փրկած անձերէն ու ընտանիքներէն 62 հոգի, վկայելով որ զիրենք փրկողը եղած է Զըմպա Եագուպ՝ Յակոբ Սաչագլեան:

1940-ին Յակոբ Սաչագլեան կը հաստատուի Պէյրութ, ուր իր վրայէն կը նետէ թրքութեան շապիկը եւ կը վերադառնայ հայութեան ու կը ճանչցուի որպէս Յակոբ Ադա, ուր կ'ապրի իր ընտանիքի անգամներով շրջապատուած: Կեանքի վերջին տարիներուն կը վարակուի խլիրդէ եւ 1945-ին կը մահանայ ձիւնի մէջ:

Յակոբ Սաչագլեանի Անդրանիկ գաւազնը՝ Ասատուրը, վաղուց՝ 1911-ին, Տէօրթ Եոլէն, իր հօրեղբոր Ահարոն Սաչագլեանի եւ անոր կնոջ



Յամիկ Վասիլեան Պէլլէի

Էլիզա Տէր Մելքոնեանի հետ անցած է Ամերիկա: Յակոբին Էլիզապէթ դուստրը կը հասնի Ֆրանսա, իսկ Մարին կը հաստատուի Ամերիկա:

Յակոբ Սաչագլեանի թոռնիկներէն մին, Մարկոյի դուստրը՝ Յասմիկ Վասիլեան Պէլլէի, 1967-ին իր ամուսնոյն հետ հաստատուելէ ետք Գանատա, ծնողքը՝ Մարկօն եւ ամուսինը հետեւելով իրեն կը հաստատուին Մոնթրէալ: Յասմիկ 1994-2009 եղած է Մոնթրէալի քաղաքա-


պետարանի անդամ եւ ունեցած բեղուն գործունէութիւն: Ըստ Յասմիկի յիշողութեան, Յակոբ Սաչագլեանի Լիբանանի մէջ անցուցած վերջին տարիներուն ընթացքին անոնք յաջողած էին կապ հաստատել ու տեսնուիլ իրենց կորուսեալ մօրաքրոջ՝ Ովսանայի հետ:

Ահարոն Սաչագլեան

Ահարոն Սաչագլեան, Ստեփանի եւ Յակոբի կրտսեր եղբայրը, ծնած է 1879 Սեպտեմբեր 9-ին, Մալաթիոյ մէջ, 16 տարեկանին մօրաքրոջ ամուսնոյն հետ մեկնած է Ֆրանսա, Մարսէյ, ապա 1895-ին հասած են Ամերիկա, Հարուըրտ, ուր հաստատուած էր Ահարոնի աւագ եղբայրը՝ Ստեփանը: Ան մասնագիտանալով հաշուապահական ճիւղին մէջ կը դառնայ պետական պաշտօնեայ, իբր հաշուապահ: 1909-ին կ'ուղեւորուի դէպի Տէօրթ Եոլ, սակայն շրջան մը Պէյրութ կը մնայ, ուր կը հանդիպի դաշնակցական քեսապցի եւ սուեռացի տղոց, որոնք Ամերիկեան համալսարանի ուսանողներ էին, միեւնոյն ժամանակ գէնք կը փախցնէին իրենց երկիրը, Ահարոն օգտակար կը դառնայ այդ գործին՝ մաքսատունէն առանց խուզարկուելու սնտուկ մը գէնք դուրս բերելով ու յանձնելով տղոց: Ապա Պէյրութէն կ'ուղղուի Տէօրթ Եոլ, ուրկէ իր եղբոր Յակոբին հետ կ'անցնի Իսկէնտէրուն, հոն հասնելէ ետք կը լսեն, թէ Տէօրթ Եոլ պաշարուած է եւ մահու կենաց կռիւ կը մղէ: Ահարոն անմիջապէս կը դիմէ Իսկէնտէրունի ամերիկեան հիւպատոսին ու անոր հետ միասին կ'անցնի Պէյրութ, ուր կը խորհրդակցին ամերիկեան հիւպատոսին հետ, միասին կ'երթան Մերսին ու Պոլիս հեռագիրներ կը զրկեն: Ազգեցիկ հայերու եւ օտար միջամտութիւններու շնորհիւ Տէօրթ Եոլի պաշարումը վերջ կը գտնէ երկու շաբաթ ետք:

18 Յուլիս 1910-ին Տէօրթ Եոլի մէջ կ'ամուսնանայ Էլիզա Տէր Մելքոնեանի հետ ու 10 Մայիս 1911-ին կը վերադառնայ Նիւ Եորք, ապա նոյն տարուան աշնան կը հաստատուի Պոսթըն, եւ կը ստանձնէ «Հայերենիք» օրաթերթի հաշուապահութիւնը:

Այդ օրերուն «Հայերենիք»ը կը կը տպուէր առողջապահական առումով չափազանց աննպաստ գետնայարկի մը մէջ: Ահարոն մեծ ներդրում կ'ունենայ նոր խմբագրատան մը գնման աշխատանքներուն մէջ, եւ



Ահարոն Սաչագլեան

հին եկեղեցի մը գնելով ու կարգ մը բարեկարգումներ ընելով կը դառնայ «Հայերենիք»ի խմբագրատունը: Իր կինը՝ Էլիզան, յուշերուն մէջ գրած է, թէ Ահարոն ՀՅԴ-ի առաջին երկու տասնամեակներուն ընթացքին մեծ ներդրում ունեցած է անոր կազմակերպական վերելքին, Պատգամաւորական ժողովներուն յաճախ ստանձնած է ատենապետութիւնը, ինչպէս նաեւ երկար տարիներ եղած է Կեդրոնական կոմիտէի անդամ:

1920-ին փոխադրուած է Սիրաքիւզ: Կեանքին վերջին տարիներուն կորսնցուցած է իր յիշողութիւնն ու տեսողութիւնը: Մահացած է 5 Օգոստոս 1964-ին, Սիրաքիւզի մէջ, 84 տարեկանին:

Նեմեսիսի հաշուարկի չբացայայտուած պատասխանատուն

2015 թուականին Սաչագլեանի թոռնուհին՝ Մարիան Մեսրոպեան Մաքքըրդին, յայտնաբերուած փաստաւաւերագրական նիւթերու եւ իր ու իր մօր՝ Էլիզայի յիշողութիւններուն հիման վրայ հրատարակած է «Սրբազան արդարադատութիւն. հայկական «Նեմեսիս» գործողութեան ձայներն ու ժառանգութիւնը» գիրքը, պատմելով իր մեծ հօր՝ Ահարոնի դերակատարութեան մասին:

Ահարոն Սաչագլեանի անձնական արխիւներէն կը յստականայ, որ ան ոչ թէ պարզապէս շաբաթի մասնակից էր, այլ գործողութեան ղեկավարներէն մէկը: Պետական գործիչ, ԱՄՆ-ի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Գարօն «Նեմեսիս»ի

ուղեղն էր, Շահան Նաթալին՝ «Նեմեսիս»-ի սիրտը, ոգեշնչողն ու գործողութիւնները համակարգողը: Իսկ գործողութեան երրորդ ղեկավարը Ահարոն Սաչազեանն էր, հաշուարկի տնօրէնը, որ կը զբաղէր գործողութեան համար նիւթական միջոցներու հայթայթմամբ ու բաշխմամբ:

Մարիան Մեսրոպեան Մաքքըրթիի իր մեծ մօր՝ Էլիզաբէթ յիշողութիւններէն լսած էր, որ մեծ հայրը «Հայրենիքի» խմբագրատան մէջ օրեր ու գիշերներ կ'անցընէր: Ակնյայտ է, որ օր ու գիշեր ան խմբագրութեան հաշուապահութեամբ չէր զբաղած միայն...

Ան իր գերբին մէջ կը նշէ, որ իր մեծ հայրը կը յիշէ փայտէ ռատիոյին կողքին՝ կարմիր, կաշիէ բազկաթոռի մէջ նստած, դողացող ձեռքերով ծխելով: Անոր վրայ սկսած էին բարբիսըն հիւանդութեան ախտանշանները... Ահարոն Սաչազեանը հանգիստ, խաղաղ մարդ էր, անհնար էր պատկերացնել, որ ան երկրորդ՝ գաղտնի կեանք ունէր: Անոր տունը գերբերով ու մարդոցմով լի էր եւ դարձած էր տեղի հայ համայնքի հաւաքատեղիներէն մէկը: Սաչազեանին կարեւոր մարդիկ կ'այցելէին, որոնց կարգին Դրօն եւ «Նեմեսիս»-ի մասնակիցները, բայց ընտանիքը պատկերացում ալ չունեցաւ տան տղամարդուն, ինչպէս նաեւ հիւրերուն գերգաղտնի գործունէութեան մասին: Սաչազեանը այդ մէկը կ'ընէր եւ սեփական ընտանիքը պաշտպանելու, եւ գործողութեան յաջողութիւնը չվտանգելու համար:

Յեղասպանութեան եւ անոր յաջորդող տարիներուն նուիրական աշխատանք եղած էր հայու բեկորներուն եւ կորսուած խլեակներուն որոնումն ու փրկելը: Շատեր կրցան իրենց ընտանիքներուն, քոյրերուն ու եղբայրներուն միանալ շնորհիւ Յակոբ Սաչազեանի նման նուիրեալներու: Իսկ Ահարոն Սաչազեանի նման հերոսներու գերգաղտնապահութեան կը պարտինք «Նեմեսիս»-ի գործողութեան յաջողութիւնը, որուն փաստաթղթային ամբողջ արխիւը լիովին ուսումնասիրուած չէ տակաւին եւ հաւանաբար ապագային նոր բացայայտումներ յայտնաբերուին «Նեմեսիս»-ի գործունէութեան եւ անոր մասնակից հերոսներուն մասին: Դժբախտաբար մեր ժողովուրդին վիճակուած սեւ ճակատագրին պատճառով չբացայայտուած

Sacred Justice

The Voices and Legacy of the Armenian Operation Nemesis



Marian Mesrobian MacCurdy

With a foreword by Gerard Libaridian

Մարիան Մեսրոպեան Մաքքըրթիի ԱՄՆ-ի մէջ հրատարակած «Սրբազան արդարադատութիւն. հայկական «Նեմեսիս» գործողութեան ձայներն ու ժառանգութիւնը» գիրքը

արխիւներ կրնան գոյութիւն ունենալ, որոնք Սաչազեանի նման խոնարհ հերոսներու հոյ մը կրնան յայտնաբերել:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Աղբիւրներ

- «Հայրենիք» ամսագիր, Նոյեմբեր 1965, Էլիզա Սաչազեան, «Ահարոն Սաչազեան»:

- «Նայիրի», 13 Մարտ 1996, Սիմոն Հովիւեան, «Յակոբ Սաչազեան (Զրմպա Եառ'ւա)... եւ տէօրթ եղցի Ովսաննան - Ա. եւ Բ.»:

- «Նայիրի», 30 Մարտ 1996, Սիմոն Հովիւեան, «Յակոբ Սաչազեան (Զրմպա Եառ'ւա)... եւ տէօրթ եղցի Ովսաննան - Գ.»:

- Յասմիկ Պէլլիի ընտանեկան արխիւ:

Հայոց Գեղասպանութեան 110-ամեակին նուիրում «Հորիզոն»ի այս բացառիկ թիւը կը հովանաւորեն հետեւեալ ազգայինները

Երեցկին Շաֆէ Իշխանեան, Գեորգ Իշխանեան, տ. եւ տ. Պերմ եւ Ռուբինա Ֆարրա, ի յիշատակ Տէր Արմէն Աւագ Քին. Իշխանեանի:

Տ. եւ տ. Խոբէն եւ Սօսէ Տիմիթեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. եւ տ. Արթին եւ Անի Մաժակեան, ի յիշատակ մեզմէ առյաւել քաժնուած Տէր Սարգիսեան եւ Մաժակեան գերդաստանաց:

Տ. Փիլիպէ Տէր Սարգիսեան, դոկտ. Շանթ Տէր Սարգիսեան, տ. եւ տ. Ժագ եւ Գարէն Թիւթիւնեան եւ զաւակունք, ի յիշատակ իրենց ամուսնոյն, որ եւ մեծ որ Հրաչ Տէր Սարգիսեանի: Melbourne-ի «Գոյամարտ»ի ձայնը, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Արսինէ Նազարեան, տ. եւ տ. Նազար եւ Միմի Նազարեան, տ. եւ տ. Յակոբ եւ Լիա Պողիկեան եւ զւկէ, տ. եւ տ. Ֆայիլէն եւ Ալին Գատէ եւ զւկէ, տ. եւ տ. Անդրանիկ եւ Լուսնա Նազարեան եւ զւկէ, ի յիշատակ իրենց ամուսնոյն, որ եւ մեծ որ Յարութիւն Նազարեանի:

Գրիգոր Տէր Ղազարեան, ի յիշատակ Թորոս Տէր Ղազարեանի, ծնեալ 1914-ին, Խարբերդ:

Մոնթրէալի Հայ Կեդրոնի Տարեցներու միութիւն, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Voyages Haig, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Արեգ, Քրիստին, Գարին, Գաթիա եւ Ալիք Մարգարեան, ի յիշատակ իրենց մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն՝ Յակոբ եւ Գարգուհի Մարգարեանի, Յովհաննէս եւ Լէա Պուրսալեանի, Բիւզանդ եւ Զապէլ Այնթալեանի, Յակոբ եւ Կիւլա Պոյանեանի, ինչպէս նաեւ իրենց ծնողաց՝ Վարդէս եւ Արամիս Այնթալեաններու:

Տ. եւ տ. Լեւոն եւ Անի Հասրընեան, ի յիշատակ Հասրընեան ընտանիքի Մեծ եղբունի նահատակներուն:

Տ. եւ տ. Նազարէթ եւ Վարսենիկ Խաչիկեան, ի յիշատակ Սամուէլ եւ Լիտիա Խաչիկեանի, Յարութիւն եւ Ազատուհի Հայրապետեանի:

Լեւա Տէր Գալուստեան եւ ընտանիք, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. եւ տ. Սիմոն եւ Մարալ Հասրընեան

Տ. եւ տ. Արրահամ եւ Օսիկ Միսիարթիւնեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Վասիլեան ընտանիք իրենց մեծ որ՝ Յակոբ Սաչազլեանի եւ մեծ մօր՝ Թրուանտայի յիշատակին:

Տ. եւ տ. Ստեփան եւ Հուրի Նանարեան, ի յիշատակ Սարաֆեան, Տէրտէրեան, Ճելատեան, Սէթեան եւ Նանարեան գերդաստաններու զոհերուն:

Տ. եւ տ. Յարութ եւ Սեդա Գասապեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. եւ տ. Վարուժ եւ Էօթէնի Խաչատուրեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Մուրատ, Նորա եւ Զապէլ Թէֆ, Զաւէն Կէօննեան, ի յիշատակ Նորայր եւ Ռօզա Պէնօհանեանի, Գարգուհի Մարգարեանի, Սուրէն եւ Զարուհի Կէօննեանի:

Պետիկ, Սոնիկ Վարձապետեան, ի յիշատակ Տէրտէրեան, Զագմագնեան եւ Վարձապետեան գերդաստաններու զոհերուն:

Նուշիկ Էլոյեան, ի յիշատակ իր ծնողաց Եղուարդ եւ Աղանի Էլոյեաններու եւ մօրեղօր Լորիս Մալոյեանի:

Մանուկ Զուխանեան, ի յիշատակ իր տիկնոջ Աննա Սֆօրզա-Զուխանեանի:

Նանէ, Գառնի, Դուին եւ Բագէ Ղազարեաններ, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Զաւէն եւ Վարսենիկ Սարգիսեան, ի յիշատակ Սարգիսեան եւ Նալպանտեան գերդաստաններու զոհերուն:

ԲԺ. Եւ տ. Գէորգ Մանուկեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Գէորգ եւ Արաֆի Օհանեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Կարէն Տէր Ասատուրեան եւ դուստրերը, Լարա եւ Լիա, ի յիշատակ իրենց հօր եւ մեծ հօր՝ Վահան Տէր Ասատուրեանի:

Տ. Եւ տ. Փանոս եւ Հուրի Ապրազեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Արգար եւ Սոնա Միրաֆեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Սեւան, Շանթ եւ Դուին Տոնապետեաններ, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն :

Տ. Հերմինէ Մանուկեան, ի յիշատակ իր ամուսնոյն. Յարութիւն Մանուկեանի:

Տ. Եւ տ. Սարգիս եւ Արագ Եղնեան, ի յիշատակ իրենց հօր՝ ընկ. Լեւոն Եղնեանի:

Տ. Եւ տ. Հէնրի Զալգալ եւ Նայիրի Տօլապեան, ի յիշատակ իրենց ծնողաց, Վարդգէս եւ Անահիտ Տօլապեաններու:

Տ. Եւ տ. Աւօ եւ Անի Քէշիշեան, ի յիշատակ իրենց հօր՝ ընկ. Տիգրան Արուշեանի:

Վահէ Ակոբեան եւ ընտանիք, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Հրայր եւ Լիլի Պէնկեան, , ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

ԲԺ. Եւ տ. Ժիրայր եւ Յասմիկ Պասմանեան, ի յիշատակ իրենց ծնողաց Հայկ եւ Նուարդ Պասմանեանի:

Տ. Տիրուկ Մաննիկեան, ի յիշատակ իր ամուսնոյն Յակոբ Մաննիկեանի եւ Մաննիկեան, Մնակեան եւ Եահնէյեան գերդաստաններու զոհերուն:

ԲԺ. Սարգիս Երէցեան, Ռաֆֆի եւ Բաթրիք, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

ԲԺ. Եւ տ. Ռուբէն եւ Անի Պետրոսեան, ի յիշատակ Արցախի 44 օրուայ պատերազմին նահատակուած հերոսներուն :

Տ. Եւ տ. Զաւէն եւ Յասմիկ Իննէնիկեան, ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան ընթացքին զոհուած բոլոր նահատակներուն:

Սիմոն, Սիլվա, Սեւան, Մարալ եւ Յակոբ Փօլատեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

ԲԺ. Եւ տ. Օհան եւ Սեդա Թապաֆեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Զարեհ եւ Լիոնի Սարմազեան, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն:

Տ. Եւ տ. Ռաֆֆի եւ Ժպիտ Ֆրունցեան եւ զաւակները՝ Արեգ եւ Նանոր, ի յիշատակ 1915-ի Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն :

Տ. Եւ տ. Մանօ եւ ԲԺ. Թալին Քէօսէեան, ի յիշատակ իրենց մեծ մօր՝ Մարի Պէրպերեան Քէօսէեանի, ծնեալ 1929-ին, Այնթէպ:

Տ. Եւ տ. Ալպէր Արոյեան , ի յիշատակ իրենց ծնողաց՝ Արմենակ Արոյեանի եւ Կիլիստան Արմինեան Արոյեանի:

Վիգէն Թիւֆէնցեան, ի յիշատակ իր ծնողաց՝ Կարապետ եւ Արմինէ Թիւֆէնցեաններու:

Արշօ Զաֆարեան, ի յիշատակ Արցախեան պատերազմի զոհերուն:

ՀՈՐԻԶՈՆ

www.horizonweekly.ca

*Ձեր բաժանորդագրութիւնը ապահովելու,
ձեր հարազատին կամ բարեկամին
«Հորիզոն» նուիրելու համար
կապ հաստատեցէք «Հորիզոն»ի վարչութեան հետ:*

Հեռաձայն՝ 514 332-3757

Ե-նամակ՝ sylva@horizonweekly.ca

Կայքէջ՝ www.horizonweekly.ca

**ՀԱՍՅԷ՝ 3401 Olivar-Asselin
Montreal, Quebec
H4J 1L5**

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

horiZon

Administration / Publicité
Sylva Ehamdjian-Bachekjian
Tél.: (514) 332-3757

E-Mail: sylva@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada -
ISSN 0708580X
PAP - N. d'enregistrement 10925

Editor in Chief: Vahakn Karakachian

Վարիչ խմբագիր՝
Վահագն Գարագաշեան

Վարչական
պատասխանատու
Սիլվա Էհրամճեան Պաշտօնէան

Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Meet the Hearing Aid Brothers: Edmond and Andre Ayvazyan

Experience the Future of Hearing with Hearing Aid Source

Discover the Difference:

HEAR

Enjoy crystal-clear speech in any environment with our cutting-edge Augmented Focus technology. Say goodbye to struggling with conversations.

CHARGE

Ditch the hassle of tiny batteries. Our rechargeable hearing aids ensure you're always ready to go without the fuss of changing batteries.

CONNECT

Seamlessly link your hearing aids to your Android or iPhone smartphone. Enjoy hands-free calls, music streaming, and more, directly through your hearing aids.

Why Choose Hearing Aid Source?

- **Risk-Free Trials:** Try our hearing aids with no obligation. Experience the improvement in your hearing without any risk.
- **Free Hearing Tests:** Get a comprehensive hearing assessment at no cost. Understand your hearing health and get personalized recommendations.
- **Expert Care:** With years of experience, Edmond and Andre Ayvazyan are dedicated to providing the highest quality hearing care.
- **Custom Hearing Protection:** Protect your hearing with custom solutions tailored to your needs.



Visit Us Today:

Coxwell Avenue Location:
702 Coxwell Avenue, Toronto, ON M4C 3B9
Tel: 416-463-4327 (HEAR)

Parkway Mall Location:
85 Ellesmere Road, #29 Toronto, ON M1R 4B9
Tel: 416-754-4327 (HEAR)

Contact Us:

hello@hearingaidsource.ca
www.hearingaidsource.ca

Your Hearing Health Matters.

Take the first step towards better hearing.
Schedule your free hearing test and no-obligation trial today.
Call 416-754-4327 to book an appointment.

Rediscover the joy of hearing with Hearing Aid Source –
where advanced technology meets compassionate care.



hearing aid source
hearing instrument specialists



THE ALL-NEW 2025 NISSAN KICKS®



STARTING FROM
\$29,970*

THE ALL-NEW 2025 NISSAN MURANO®



STARTING FROM
\$49,624*

VISIT [NISSANGABRIEL.CA](https://nissangabriel.ca) FOR MORE DETAILS

NISSAN GABRIEL

JEAN-TALON

3500, rue Jean-Talon Ouest
Montréal, QC H3R 2E8
nissangabrieljeantalons.ca
514 509-7777

NISSAN GABRIEL

ST-JACQUES

7050, rue Saint-Jacques Ouest
Montréal, QC H4B 1V8
nissangabrielstjacques.ca
514 483-7777

NISSAN GABRIEL

ANJOU

7010, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
nissangabrielanjou.ca
514 324-7777

NISSAN GABRIEL

ST-CONSTANT

218, route 132
Saint-Constant, QC J5A 2C9
nissangabrielstconstant.ca
450 699-7777

*Conditions apply. Price shown includes: (i) Freight and PDI; (ii) fees and levies; (iii) optional products and accessories (if selected); and (iv) dealer mandatory charges up to \$621. License, registration, insurance and applicable taxes are extra. See your Nissan Gabriel dealer for complete details. ©2025 Nissan Canada Inc.